«Հաստատում եմ»

Ռեկտոր Ա.Ս. Աղաբաբյան

«20» մայիսի 2015թ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան

(Ուսումնական հաստատության անվանումը)

Երևան, Տերյան 105

(Հաստատության հասցեն)

Երևան 2015

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Երևանի Մ. Խորենացու անվ. համալսարանը (այսուհետ՝ ԵՄԽՀ) ստեղծվել է 1996թ.: ՀՀ ԿԳ նախարարության կողմից ստացել է կրթական գործունեության լիցենզիա 1996թ. հուլիսի 22-ին: Գրանցվել է ՀՀ Ձեռնարկությունների Պետական Ռեգիստրում 07.08.96թ.: Բուհի (որպես ՍՊԸ) կանոնադրությունը գրանցվել է 07.08.96թ., փոփոխվել է 21.12.1999թ. և 01.03.2004թ.:

ԵՄԽՀ-ն, համաձայն ՀՀ ազգային որակավորումների շրջանակի, ծավալում է գործունեություն՝ կրթության 6, 7 մակարդակներում, համաձայն ՀՀ ԿԳՆ կողմից իրեն ընձեռնված լիցենզիաների: ԵՄԽՀ գործունեություն է իրականացնում վեց մասնագիտություններով՝ «Հայոց լեզու և գրականություն», «Օտար լեզու և գրականություն» (անգլերեն լեզու և գրականություն), «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Մանկավարժություն և մեթոդիկա», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Իրավագիտություն» բակալավրի (առկա և հեռակա) և մագիստրատուրայի (առկա) կրթական ծրագրերով: Բոլոր վեց մասնագիտություններն էլ հավատարմագրված են:

Բուհի հիմնադիրը և ռեկտորը Արթուր Աղաբաբյանն է: Բուհի կառավարման մարմիններն են՝ կառավարման խորհուրդը, բուհի ռեկտորը, գիտական խորհուրդը, ռեկտորատը, դեկանատը և ամբիոնները: Բուհն ունի 709 ուսանող, 51 դասախոս, 14 վարչական աշխատող:

Հիմնադրման օրվանից առ այսօր բուհը որդեգրել է օրենսդրության սահմաններում և թափանցիկ աշխատելու գործելաոճը: Պահպանվել են կրթության բնագավառում սահմանված օրենքների և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան աշխատանքային բարձր նորմերը: Հարկային օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկատեսակները մուծել է ժամանակին և երբեևէ չմարված պարտավորությունների խնդիրներ չի ունեցել:

Համալսարանում առկա է հստակեցված կանոնակարգային փաստաթղթային բազա, ստեղծված է ներբուհական վերահսկողական խումբ (համապատասխան կանոնակարգով) և համալսարանում իրավական պաշտպան (համապատասխան կանոնադրությամբ), որի գործունեությունը ուղղված է դասախոսների, ուսանողների և վարչական աշխատողների շահերի պաշտպանությանը:

Համալսարանում ստեղծված է նաև արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն, որի գործունեության արդյունքում կապեր են հաստատվել/ստորագրվել են պայմանագրեր/ ինչպես օտարերկրյա բուհերի և կազմակերպությունների հետ, այնպես էլ հայաստանյան կազմակերպությունների հետ:

Համալսարանի որակի ապահովման կենտրոնը (այսուհետ՝ ՈԱԿ) ստեղծվել է 2011թ հոկտեմբերի 28-ին, որի գործունեության առանցքում բուհի որակի ապահովման գործընթացների համակարգումն է: Կենտրոնն ունի երկու հաստիքային աշխատող:

Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի կոնտակտային տվյալներն են.

Վեբ կայք: www.mkhu.am

Էլ. հասցե: movuni@mail.ru

Հեռ.: (010) 520541

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	**Պաշտոն**
Արթուր Աղաբաբյան	ռեկտոր, ՈԱԿ կազմ
Արամ Պետրոսյան	ՈԱԿ ղեկավար
Աստղիկ Սահարյան	ՈԱԿ աշխատակից
Լևիկ Աղաջանյան	Տնտեսագիտական ֆակուլտետի պրոֆեսոր
Մամիկոն Հակոբյան	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա ֆակուլտետի դոցենտ
Մարիաննա Բաղադյան	Օտար լեզվի ամբիոնի վարիչ
Լիլիթ Մնացականյան	Ուսումնական մասի վարիչ
Անի Աղաբաբյան	Արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի ղեկավար
Արմինե Բարսեղյան	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ղեկավար, ԵՄԽՀ շրջանավարտ
Արմինե Գրիգորյան	Ուսանողական խորհրդի նախագահ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 5
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ 5
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 6
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 14
III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 30
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 41
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 57
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 69
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 79
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 92
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 100
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 107
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 118

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵԶՐՈՒՅԹՆԵՐ

Չափանիշներ՝ մակարդակի էտալոնային կողմորոշիչներ, որոնք բնությագում են որոշակի խնդիրների և / կամ չափորոշիչի / իրագործման աստիճանը:

Չափորոշիչներ՝ սահմանված պահանջներ և պայմաններ, որոնց հիման վրա պետք է գնահատվի և ձեռք բերվի բուհի կամ կրթական ծրագրերի անհարաժեշտ որակը:

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:	
Հիմքեր	**ՄՈՒՀ-ի կանոնադրությունը** Հավելված 1. ԵՄԽՀ-ի կանոնադրությունը, որպես ՍՊԸ Հավելված 2. ԵՄԽՀ-ի կանոնադրությունը **ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրները** Հավելված 3. ԵՄԽՀ 2004թ ինքնավերլուծությունը Հավելված 4. Քաղվածք ԵՄԽՀ ռազմավարական ծրագրից Հավելված 5. ԵՄԽՀ առաքելությունը (վերանայված) **Հաստատության որակավորումների շրջանակը** **ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագիրը** Հավելված 6. ԵՄԽՀ-ի 2011-15թթ ռազմավարական ծրագիրը Հավելված 7. ԵՄԽՀ կառավարման խորհրդի N 3 նիստի արձանագրությունը Հավելված 8. ԵՄԽՀ-ի 2011-15թթ ռազմավարական ծրագիրը (վերանայված տարբերակ) Հավելված 9. ԵՄԽՀ կառավարման խորհրդի N 7 նիստի արձանագրությունը

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

Մինչ 2010թ. չի եղել մշակված և հաստատված ռազմավարական ծրագիր: Չնայած դրան, բուհի առաքելությունը, նպատակներն ու խնդիրները, և դրանց իրականացման հնարավոր ուղիները արտացոլվել են բուհում շրջանառվող կարևոր փաստաթղթերում:

2010թ. վերջին ԵՄԽՀ-ն մշակեց իր առաջին ռազմավարական ծրագիրը, որն ընդգրկում է 2011-15թթ: Ռազմավարական ծրագիրը քննարկվեց ԵՄԽՀ Կառավարման խորհրդի նիստում և հաստատվեց վերջինիս կողմից 10.12.2010թ-ին: Այն հետագայում վերանայվեց՝ հնարավորինս համապատասխանեցվելով 31.03.2011թ-ին հաստատված ՀՈԱՇ-ին: Հաստատված ռազմավարական ծրագիրը ներառում էր բուհի մինչ այդ իրականացրած գործունեության արդյունքները, բուհի հեռապատկերը, առաքելությունը, նպատակները,

ռազմավարական ուղղությունների բնութագիրը: Նկարագրված էին բուհի

- ✓ ենթակառուցվածքների,
- ✓ կառավարման համակարգի,
- ✓ կրթական գործունեության,
- ✓ գիտական և նորարարական գործունեության,
- ✓ մտավոր գործունեության արդյունքների փոխանցման և առաջադեմ կրթական պրակտիկաների տարածման
- ✓ կադրային ներուժի զարգացման,
- ✓ սոցիալական համագործակցության զարգացման

ներկա վիճակը, հիմնախնդիրները, ակնկալվող արդյունքները, ռազմավարական ուղղությունները և ռազմավարական նպատակներին հասնելու միջոցները:

Նշենք, որ բուհի առաքելությունը դիտվել էր որպես ռազմավարական ծրագրի բաղկացուցիչ մաս և առանձին, որպես այդպիսին, չէր դիտարկվել: 2013թ. բուհի ՈԱԿ-ի կողմից վերանայվեց առաքելությունը, վերաձևակերպվեց և հնարավորինս հստակեցվեց, որը դրվեց քննարկման գիտ. խորհրդում և հաստատվեց 13.12.2013թ: Դրա հիման վրա 2014թ վերանայվեց և լրամշակվեց ողջ ռազմավարական ծրագիրը, որտեղ համապատասխանաբար տեղ գտավ բուհի նոր առաքելությունը (տես՝ ռազմավարական ծրագրում, էջ 10), առավել հստակեցվեցին ձևակերպումները, կառուցվածքը, առանձին ներկայացվեց բուհի ռազմավարական զարգացման ուղղությունները և դրանց հասնելու միջոցառումները (տես՝ ռազմավարական ծրագրում, էջեր 3,4): Վերանայված ռազմավարական ծրագիրը դրվեց քննարկման բուհի կառավարման խորհրդում և հաստատվեց 19.12.2014թ:

Բուհի նոր ռազմավարական ծրագիրը ընդհանուր առմամբ համապատասխանում է բուհի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին, քանի որ վերանայվել և հստակեցվել է՝ հիմք ընդունելով վերջիններս:

Սակայն, հարկ է նշել, որ ռազմավարական ծրագրի և առաքելության համապատասխանության համար կատարված փոփոխությունները սպառիչ չէին և առավել բովանդակային փոփոխություններ նախատեսվում են նոր 2016-2020թթ ռազմավարական ծրագրում, ինչպես օրինակ՝ կապված առավել իրատեսական և չափելի պլանավորման իրականացմամբ, ծրագրում «Որակի ներքին ապահովում» առանձին բաժնի նկարագրությամբ՝ իր խնդիրներով, ուղղություններով, պլանավորվող միջոցառումներով և իրականացման գործիքներով և այլն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Հիմքեր	**ՄՈՒՀ-ի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը (առկայության դեպքում)** Բուհի առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը մշակման փուլում է: Սակայն վերանայման գործընթացները իրականացվում են՝ պայմանավորված համալսարանի կառավարման խորհրդի և գիտական խորհրդի ընդունած որոշումներից բխող անհրաժեշտությամբ, նպատակների իրականացման և առաջացած խնդիրների լուծման ճանապարհին բխող միջոցառումներով: Վերանայման արդյունքում ի հայտ եկող փոփոխություններն ու շտկումները ներկայացվում են ԵՄԽՀ-ի ռեկտորի տարեկան հաշվետվություններում:

Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները (օրինակ՝ հարցումներ և այլն)

Բուհի ներքին շահակիցների կարիքներն ու պահանջները ստացվում են նրանց ներկայացուցիչների կողմից, որոնք ներգրավված են բուհի կառավարման տարբեր մարմիններում, և, ըստ այդմ, հնարավորություն ունեն հանդես գալ սեփական առաջարկություններով, դիտողություններով և պահանջներով: Ներքին շահակիցների պահանջների բարձրաձայնման հնարավորությունները ամրագրված են հետևյալ կարգերում՝

Հավելված 10. ԵՄԽՀ-ի կառավարման խորհրդի ձևավորման կարգը

Հավելված 11. ԵՄԽՀ-ի գիտ. խորհրդի կանոնակարգը

Հավելված 12. ԵՄԽՀ-ի ֆակուլտետի խորհրդի կանոնակարգը

Հավելված 13. ԵՄԽՀ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը

Հավելված 14. ԵՄԽՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունը,

Հավելված 15. ԵՄԽՀ-ի ուսանողական գիտ. ընկերության կանոնադրությունը,

Հավելված 16. ԵՄԽՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը,

Հավելված 17. ԵՄԽՀ անձնակազմի (այդ թվում ուսանողների և դասախոսների) իրավական պաշտպանի կանոնադրությունը,

Հավելված 18. ԵՄԽՀ ուսանողների կողմից դիմում-բողոքների ներկայացման, քննարկման և որոշումներ կայացնելու մասին կարգը,

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման համար, վերը նշված մեխանիզմներից բացի, բուհում գործում են նաև նոր ներդրված մեխանիզմներ, ինչպես օրինակ տարբեր հարցումներ, ֆոկուս խմբեր, քննարկումներ, անհատական հանդիպումներ, դիտարկումներ և այլն:

ՄՈՒՀ-ի առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր)

Հավելված 19. ԵՄԽՀ գիտ. խորհրդի 13.12.2013թ № 04/312 նիստի արձանագրությունը

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ԵՄԽՀ ներքին շահակիցների կարիքների վերհանման համար հիմք են հանդիսանում բերված կարգերը, որոնք հավաստում են նրանց ներգրավվածությունը բուհի տարբեր կառույցներում, նրանց կարծիքների և առաջարկությունների լսելի դարձնելու հնարավորությունը: Այսպես, օրինակ.

- ✓ Համաձայն ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգի *“… ԵՄԽՀ կառավարման խորհրդի անդամները կարող են օրակարգի համար առաջարկել հարցեր որոնք դրվում են քվեարկության”* և *“… ԵՄԽՀ կառավարման խորհրդի հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովի արձանագրության մեջ մտցնել հատուկ կարծիք և այդ մասին տեղյակ պահել ԵՄԽՀ խորհրդին”:*
- ✓ Համաձայն ԵՄԽՀ գիտ. խորհրդի կանոնակարգի *“… գիտական խորհրդի անդամներն իրավասու են՝ … մասնակցելու հարցերի քննարկմանը և առաջարկություններ ներկայացնելու ընդունվող որոշումների վերաբերյալ”* և *“ … գիտ. խորհրդի անդամը կարող է ներկայացնել օրակարգում նոր հարց մտցնելու առաջարկություն, որը քննարկվում է նիստում օրակարգը հաստատելիս”:*
- ✓ ԵՄԽՀ ֆակուլտետի խորհրդի կանոնակարգի 5-րդ կետ:
- ✓ ԵՄԽՀ ամբիոնների կանոնակարգ 13-րդ կետ:
- ✓ Համաձայն ուսանողական խորհրդի կանոնադրության *“ուսանողները … իրենց հետաքրքրությունների շրջանակներում մշակում և բուհի ադմինիստրացիային են ներկայացնում առաջարկներ, տարբեր որոշումների նախագծեր և նպաստում դրանց ընդունմանը և հետևողական իրականացմանը:*
- ✓ Համաձայն ԵՄԽՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրության “*Կենտրոնի գործառույթներն են՝*

… սեմինարների, կլոր սեղանների, կոնֆերանսների, գիտաժողովների, նպատակային և լրացուցիչ պատրաստման ու վերապատրաստման դասընթացների, աշխատաշուկայում արդի պահանջների և աշխատանքի որոնման տեխնոլոգիաների ու հմտությունների, մասնագիտական կողմնորոշման և ուրիշ խնդիրների վերաբերյալ խորհրդատվական ու այլ միջոցառումների կազմակերպումը, համապատասխան դասընթացներ և այլ ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցությունը

… շրջանավարտների և ուսանողների շրջանում սոցիոլոգիական հարցումների և այլ ուսումնասիրությունների, աշխատանք առաջարկող պետական, մասնավոր, միջազգային և այլ կազմակերպությունների կողմից առաջնային համարվող պահանջների և դրանց զարգացման միտումների, աշխատաշուկայի զարգացման հեռանկարների, աշխատա-շուկայում համալսարանականների պահանջի, ժամանակակից մասնագիտությունների և զբաղվածության հետ առնչվող այլ հիմնահարցերի վերաբերյալ ուսումնասիրությունների կազմակերպումը, ԵՄԽՀ ռեկտորատին և գիտական խորհրդին համապատասխան զեկույցների և առաջարկությունների ներկայացումը:”

- ✓ Համաձայն ԵՄԽՀ ուսանողների կողմից դիմում-բողոքների ներկայացման, քննարկման և որոշումներ կայացնելու մասին կարգի՝ *“... ուսանողները կրթական գործընթացի վերաբերյալ հարցադրումները և դիմում-բողոքները կարող են ներկայացնել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ռեկտորի քարտուղարին, անձամբ ռեկտորին կամ համալսարանում ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնին: Բացի այդ ուսանողները հնարավորություն ունեն հարցադրումները ներկայացնել ռեկտորատի մուտքի մոտ տեղակայված «Դիմումների, բողոքների և առաջարկությունների» արկղ համապատասխան թերթիկներ գցելու միջոցով:”*

և այլն:

Սակայն հարկ է նշել, որ բերված կարգերի ընձեռած հնարավորությունները որոշ դեպքերում այնքան էլ լայն կիրառում չեն գտնում ներքին շահակիցների շրջանում: Այսպես օրինակ, բուհում իրականացված հետազոտությունների արդյունքում պարզ դարձավ, որ կան դեպքեր, երբ, օրինակ որևէ խորհրդում ներգրավված անձը (ուսանող կամ դասախոս) այնքան էլ ճիշտ չի պատկերացնում իր իրավունքները: Ըստ այդմ, ներկայումս բուհում իրականաց-վում է իրավունքների և պարտականությունների բարձրաձայնման գործընթաց: Դրանց ենք անդրադարձել բուհում հրատարակված բուկլետներում, ուղեցույցներում և սեմինար-

հանդիպումների ժամանակ:

Ներքին շահակիցների կարիքների վերհանման համար բուհը կիրառում է նաև այլ մեխանիզմներ.

- ✓ ռեկտորի անմիջական հանդիպումներ ուսանողների և աշխատանքային կոլեկտիվի հետ, ժողովների և քննարկումների տեսքով,
- ✓ ռեկտորի հանդիպումներ բոլոր կուրսերի ավագների հետ ամիսը 2 անգամ,
- ✓ ՈԱԿ պարբերաբար հանդիպումներ ուսանողների և դասախոսների հետ, քննարկումներ, սեմինար-տեղեկատվական հանդիպումներ,

որոնց ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեն ներկայացնել սեփական կարիքներն ու պահանջները, հանդես գալ առաջարկություններով: Վերը նշված հանդիպումների և աշխատաժողովների անցկացման արդյունավետությունը նույնպես բարձր է, քանի որ բուհը ըստ էության մեծ չէ և հնարավոր է նույնիսկ լսել բոլոր ուսանողներին, կամ անձամբ, կամ ներկայացուցիչների (կուրսի ավագ, ուս. խորհուրդ) միջոցով:

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման համար բուհում ներդրվել են ըստ էության նոր մեխանիզմներ՝ հարցումներ, ֆոկուս խմբեր, հարցազրույցներ և գնահատման այլ մեխանիզմներ: Այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ՈԱԿ-ի կողմից կատարվում են վերլուծություններ և արդյունքները ներկայացվում պրեզենտացիաների տեսքով շահակիցների շրջանում:

Կարելի է նշել, որ նոր մեխանիզմները ըստ էության ավելի արդյունավետ են, քանի որ ներքին շահակիցների հարցումները կատարվում են անանուն, և շատ դիտողություններ ստանում ենք հենց այդ ճանապարհով: Մյուս կողմից մի քանի մեխանիզմներով ստացված պատկերները համեմատական վերլուծություն կատարելով հնարավոր է դառնում ստանալ առավել ճշգրիտ պատկեր:

Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մշակված մեխանիզմները (ինչպես, օրինակ՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեություն համաձայն կանոնադրության, գործատուների հարցում, պրակտիկա անցկացնող կազմակերպու-թյունների հարցում) այնքան էլ արդյունավետ չեն: Պատճառ կարող է հանդիսանալ աշխատաշուկայի ներկայացուցիչների պասիվ մոտիվացիան և մասնակցությունը բուհի կրթական գործընթացներին: Այս ուղղությամբ բուհը մտադիր է կատարել որոշակի քայլեր՝ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքների ակտիվացման, գործատուների ներգրավման ուղղությամբ:

Մյուս կողմից հարկ է նշել, որ տարիների ընթացքում բազմաթիվ հանդիպումներ են եղել տարբեր շահառուների հետ, և այդ ընթացքում հանգել ենք հետևյալ եզրակացությանը՝

- ✓ Տարբեր շահառուներ իրենց պահանջները դնում են յուրաքանչյուրն իր տեսանկյունից (քանի որ Հայաստանում ձևավորված չեն արտաքին շահառուների կողմից համակարգված միասնական պահանջներ, ուստի շուկան գործում է տարերայնորեն, այդ պատճառով տարբեր շահառուներ դնում են տարբեր պահանջներ):
- ✓ Արտաքին և ներքին շահառուների պահանջները շատ անգամ իրարից տարբերվում են ոչ միայն պահանջների բնույթով, այլ նաև դրանց որակական կողմով, ինչպես նաև անհամադրելի ցանկություններով՝ կախված առաջարկի և պահանջարկի հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը

Բուհի առաքելությունը, որպես առանձին փաստաթուղթ,

Հիմքեր	հաստատվել է 13.12.2013թ-ին: Առաքելության և նպատակների արդյունքների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ, որպես այդպիսին, մշակված չէ: Սակայն դա իրականացվում է ռազմավարական ծրագրում նկարագրված ուղղությունների և դրանց իրականացման միջոցառումների տարեկան գնահատման միջոցով, որոնք տեղ են գտնում ռեկտորի տարեկան հաշվետվություններում, գիտ. խորհրդում ներկայացված զեկուցումներում: **Շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունն արտացոլող հիմքեր** Առաքելությունների և նպատակների գնահատման և բարելավման քայլերում շահակիցների (դասավանդողների, ուսումնառողների) ներգրավվածությունը ապահովվում է բուհի կառավարման խորհրդում և գիտ. խորհրդում նրանց ներգրավվածությամբ, քանի որ համապատասխան զեկուցումներն ու հաշվետվությունները ներկայացվում են այդ խորհուրդների քննարկմանը: Հավելված 10. ԵՄԽՀ-ի կառավարման խորհրդի ձևավորման կարգը Հավելված 11. ԵՄԽՀ-ի գիտ. խորհրդի կանոնակարգը Բացի այդ, ներքին շահակիցների ներգրավվածության հիմքեր են հանդիսանում ստացված արձագանքները անանուն սոց. հարցումների, ֆոկուս խմբերի, խմբային քննարկումների և ԶԼՄ-ներում տեղ գտած նյութերի միջոցով: Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման լավագույն մեխանիզմներից մեկը բուհի տարբեր տարիների շրջանավարտների կարծիքների համադրումն է, որոնք աշխատում են արտադրություններում համապատասխան մասնագիտություններով: Այդ նպատակով բուհն իրականացրել է օնլայն հարցումներ շրջանավարտների շրջանում՝ ստանալով նրանց գնահատականը բուհի գործունեության վերաբերյալ: Կատարվել է համապատասխան վերլուծություն: **Շահակիցներից ստացված արձագանքները (առկայության դեպքում)** Առաքելության վերանայման գիտ. խորհրդի նիստի արձանագրությունը՝ Հավելված 19. ԵՄԽՀ գիտ. խորհրդի 13.12.2013թ № 04/312 նիստի արձանագրությունը, Ռազմավարական ծրագրի վերանայման և ռեկտորի համապատասխան հաշվետվության մասին կառավարման խորհրդի արձանագրությունը: Հավելված 9. ԵՄԽՀ կառավարման խորհրդի N 7 նիստի արձանագրությունը, **Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը (առկայության դեպքում)**

Ռազմավարական ծրագրի գնահատումը իրականացվում է կատարված քայլերի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելով (տես՝ *Չափանիշ II, Չափորոշիչ գ*-ում կատարված վերլուծության մեջ):

Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր

Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստում են ՈԱԿ-ի կատարած ուսումնասիրություններն ու հետազոտությունները՝ որոշակի ուղղություններով:

ՄՈՒՀ-ի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները

2013թ. վերջին հաստատված առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման վերաբերյալ անդրադարձ է կատարվել ռեկտորի 2014թ տարեկան հաշվետվությունում, ըստ որի գնահատվում է իրականացված աշխատանքների արդյունավետությունը:

Հավելված 20. ԵՄԽՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններ:

Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Ռազմավարական ծրագրի ուղղությունների և միջոցառումների իրականացման վերաբերյալ զեկուցումներ և հաշվետվություններ են ներկայացվում գիտ. խորհրդի նիստերում: Համաձայն ԵՄԽՀ գիտ. խորհրդի կանոնակարգի՝ *"...Այն քննարկում և սահմանված կարգով լուծում է համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը, ընդունում համապատասխան որոշումներ, վերահսկում դրանց կատարումը:"* Ռազմավարական ծրագրի իրականացման, խնդիրների և ձեռքբերումների վերաբերյալ զեկուցում է կատարվում նաև ռեկտորի հաշվետվության մեջ ԵՄԽՀ կառավարման խորհրդի նիստերում: Համաձայն ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգի՝ *"...ԵՄԽՀ կառավարման խորհուրդը՝... հաստատում է համալսարանի զարգացման ռազմավարական ծրագիրը, լսում և գնահատում է համալսարանի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը:"*

Բուհի ՈԱԿ-ը իր գործուն մասնակցությունն է ցուցաբերում ռազմավարական ծրագրի որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների մշակման և բարելավման ուղղությամբ, ՈԱԿ-ի կողմից կատարված հետազոտությունների և ուսումնասիրությունների միջոցով: Այսպես, դասախոսների և ուսանողների շրջանում իրականացված հարցման վերլուծությունները թույլ տվեցին հասկանալ բուհի գործունեության ուժեղ և թույլ կողմերը: Ներկայացվեցին որոշ առաջարկություններ՝ գործընթացների առավել արդյունավետ իրականացման հետ կապված: Հետազոտությունների արդյունքում ի հայտ եկած խնդիրները տեղ են գտնելու հաջորդ 2016-20թթ ռազմավարական ծրագրում:

Պլանավորված գործընթացների իրականացումը վերահսկելու համար ՈԱԿ-ին կից ստեղծվել է վերահսկողական խումբ, որը զբաղվում է նաև որակի ապահովման գործընթացների կատարման վերահսկմամբ և առաջարկությունների ներկայացմամբ:

ՈԱԿ-ի կողմից վերանայվել և համալրվել է բուհի իրավանորմատիվային փաստաթղթային բազան: Հստակեցվել և ճշգրտվել են նախորդ կանոնակարգերն ու կանոնադրությունները, ստեղծվել են նորերը: Այս պահին բուհում, ՈԱԿ ջանքերի շնորհիվ, առկա է կանոնակարգային բազա (տես՝ փաթեթի վերջում ներկայացված *Հավելվածների ցանկում*), որը հստակեցնում և կանոնակարգում է ռազմավարական ծրագրի իրականացման մարմինների գործառույթներն ու պարտականությունները:

ԵՄԽՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացմանը նպաստում է նաև ՈԱԿ-ի կողմից բուհում հաշվետվողականության նոր մեխանիզմի ներդրումը, որը իրականացվում է հետևյալ կերպ՝

- Բուհի վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների կողմից իրականացվում է գործունեության շաբաթական պլանավորում, իսկ շաբաթվա վերջում համապատասխան ձևաչափով հաշվետվության ներկայացում ռեկտորին.
  Հավելված 21. ԵՄԽՀ վարչական և ուսումնաօժանդակ կազմի հաշվետվության և պլանավորման թերթիկների ձևաչափեր:
- Պրոֆեսորադասախոսական կազմի կողմից յուրաքանչյուր կիսամյակի կտրվածքով իրականացվում է հաշվետվության ներկայացում կատարված աշխատանքի, ծրագրային առումով համապատասխան նախատեսված պլանի և դասապրոցեսի արդյունավետ իրականացման վերաբերյալ.
  Հավելված 22. ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի հաշվետվության թերթիկի ձևաչափ:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհի հստակեցված առաքելություն և նպատակներ	Ռազմավարական ծրագրի հստակ մշակման փորձառության պակաս
Ռազմավարական ծրագրի համապատասխանություն առաքելությանն ու նպատակներին	Արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմների անկատարություն, մոտիվացիայի պակաս
ՈԱԿ մշակված նոր մեխանիզմներ, շահակիցների կարիքների վերհանման հետազոտություններ և վերլուծություններ	Առաքելության և նպատակների իրականացման, ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման հաստատված քաղաքականության և ընթացակարգի բացակայություն
Հստակեցված իրավանորմատիվային փաստաթղթային բազա	Խորհուրդներում ներգրավված որոշ շահակիցների պասիվ մասնակցությունը ռազմավարական ծրագրի մշակմանը
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող խորհրդատվություններ, վերապատրաստումներ և ուղղորդումներ առաքելության վերանայման, ռազմավարական ծրագրի ճիշտ կազմման	ՀՀ-ում կրթության ոլորտում կիրառվող քաղաքականության փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել բուհի նախանշած առաքելության, նպատակների իրականացման խոչընդոտմանը

վերաբերյալ	
Դրամաշնորհային ծրագրեր, որոնք նպաստում են բուհի ՈԱԿ-ի վերապատրաստմանը, նոր արդյունավետ մեխանիզմների մշակմանը և գործարկմանը	Հայաստանում արտաքին շահառուների կողմից չձևավորված համակարգված միասնական պահանջներ
	Եվրոպական կրթական համակարգի դրույթների տեղայնացման հետ կապված բարդությունների առաջացումը

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- ✓ Առաքելության և նպատակների իրականացման, ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման քաղաքականության և ընթացակարգի մշակում,
- ✓ ռազմավարական ծրագրի մշտադիտարկում,
- ✓ ներքին և արտաքին շահակիցների հետ տարվող աշխատանքների զարգացում,
- ✓ կրթության ոլորտի մարտահրավերներին դիմադրելու համար ճկուն մարտավարության կիրառում,
- ✓ Եվրոպական կրթական դաշտի հետ համադրելիության եզրերի մշակում:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:	
Հիմքեր	**Կառավարման մարմինների կանոնակարգերը և աշխատակարգերը** ԵՄԽՀ-ի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը և ներքին կանոնադրությանը համապատասխան, ինքնակառավարման հիման վրա՝ ինքնավարության, միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների զուգակցմամբ, որն իրականացվում է համալսարանի խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթներով: Հավելված 2. ԵՄԽՀ կանոնադրությունը Հավելված 10. ԵՄԽՀ կառավարման խորհրդի ձևավորման կարգը, Հավելված 23. ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգը, Հավելված 11. ԵՄԽՀ գիտական խորհրդի կանոնակարգը **Ֆինանսների տնօրինման քաղաքականություն և ընթացակարգ** Համալսարանի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը

իրականացվում է կառավարման խորհրդի կողմից հաստատված բյուջեի համապատասխան, բուհի գործադիր մարմնի կողմից՝ ռեկտորի ղեկավարությամբ:

Ֆինանսական աուդիտի նշանակման կանոնակարգը և աուդիտի արդյունքները

ԵՄԽՀ իրավակազմակերպական ձևի համար ՀՀ օրենսդրությամբ ֆինանսական աուդիտը պարտադիր չէ:

ՄՈՒՀ-ի ստորաբաժանումների ցանկը և գործունեության կանոնակարգերը

Համալսարանի ստորաբաժանումներն են՝

- ադմինիստրացիան,
- ուսումնական մաս,
- ֆակուլտետները (թվով 6),
- ամբիոնները (թվով 7),
- հաշվապահությունը,
- կադրերի բաժինը,
- որակի ապահովման կենտրոնը
- շրջանավարտների և կարիերայի կենտրոն
- արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն
- պրակտիկայի բաժին
- արխիվը,
- գրադարանը և
- լաբորատորիաները

Հավելված 12. ԵՄԽՀ ֆակուլտետի խորհրդի կանոնակարգը,

Հավելված 24. ԵՄԽՀ ամբիոնների կանոնակարգը,

Հավելված 25. ԵՄԽՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը
Հավելված 13. ԵՄԽՀ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը
Հավելված 26. ԵՄԽՀ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կանոնադրությունը
Հավելված 27. ԵՄԽՀ պրակտիկայի բաժնի կանոնակարգը

Հավելված 28. ԵՄԽՀ արխիվի կանոնակարգը,

Կառավարման մարմինների ընտրության կարգերը

Հավելված 10. ԵՄԽՀ կառավարման խորհրդի ձևավորման կարգ

Հավելված 11. ԵՄԽՀ գիտ. խորհրդի կանոնակարգ (էջ 3)

Հավելված 29. ԵՄԽՀ ռեկտորի ընտրության ընթացակարգ,

Հավելված 30. ԵՄԽՀ ֆակուլտետների դեկանների ընտրության կարգ,

Հավելված 31. ԵՄԽՀ ամբիոնների վարիչների ընտրության կարգ,

Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը՝ ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի

Հավելված 32. ԵՄԽՀ կառուցվածքային սխեման

ՄՈՒՀ-ի աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը

Համալսարանի աշխատակիցների աշխատանքի ընդունումը, տեղափոխումն ու հեռացումը իրականացվում են համաձայն աշխատանքային պայմանագրերի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի: Մշակված է համապատասխան կարգ՝

Հավելված 112. ԵՄԽՀ աշխատողների ընդունման, տեղափոխման և ազատման կարգ:

Աշխատակիցների առաջխաղացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականություն ու ընթացակարգեր հաստատված չեն: Դրանք իրականացվում են հետևյալ կերպ.

- Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ընդհանուր ստուգումների և մոնիթորինգի արդյունքում կատարած աշխատանքի պատշաճ մակարդակի վրա գտնվող աշխատակիցները խրախուսվում են և՛ ֆինանսապես, և՛ պատվոգրերով:
- Նոր ուսումնական տարում ծանրաբեռնվածությունը հաշվարկելիս առավելություն են ստանում այն դասախոսները, ովքեր իրենց առաքելությունը իրականացնում են մասնագիտական պատշաճ որակով:
- Ստուգումների արդյունքում համապատասխանաբար իրականացվում է նաև տույժի քաղաքականություն հետագա աշխատանքային ծանրաբեռնվածության և դրույքաչափի փոփոխության հետ կապված:

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինների տեղաբաշխման քարտեզը:

Բուհի կազմակերպական կառուցվածքում ներգրավված մարմինները հիմնականում տեղակայված են Տերյան 105 հասցեում: Արխիվը, լաբորատորիաների և գրադարանի մի մասը տեղակայված են Հերացի 18ա հասցեում:

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

ԵՄԽՀ կազմակերպական կառուցվածքը կատարելագործվել և հարստացել է տարիների ընթացքում: Անհրաժեշտությունից ելնելով՝ ստեղծվել են կենտրոններ և այլ առանձին ստորաբաժանումներ:

Կառավարման համակարգում գործում են ինչպես վարչական կառավարող սուբյեկտներ (ռեկտոր, պրոռեկտոր, ուսումնական մասի վարիչ, դեկաններ, ամբիոնի

վարիչներ, կենտրոնների ղեկավարներ), այնպես էլ կառավարման կոլեգիալ մարմիններ (կառավարման խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային խորհուրդներ, ամբիոններ): Կառավարող սուբյեկտները համապատասխան կարգերի համաձայն հաշվետու են կոլեգիալ մարմինների առաջ: Սակայն նախորդ տարիներին հաշվետվությունները ոչ բոլոր մակարդակներում են ներկայացվել պատշաճ մակարդակով: Մասնավորապես, հաշվետվողականությունը բուհում ավելի լավ է գործել բարձր ղեկավարության մակարդակում: Հաճախ կառավարման բարձր մակարդակներում պլանավորված աշխատանքները չեն իրականացել պատշաճ մակարդակով ստորին մակարդակներում (ֆակուլտետներ, ամբիոններ)՝ կապված աշխատանքների ոչ ճիշտ բաշխման հետ: Այդ պատճառով էլ ստորին մակարդակում կազմակերպական կառուցվածքի արդյունավետության ճշգրիտ գնահատում հնարավոր չէ իրականացնել: Ներկայումս կարիք կա ներդնելու հաշվետվողականության մեխանիզմներ և ձևաթղթեր կառավարման ստորին մակարդակների համար: Դրանց աշխատանքների որակի վերահսկմանն է ուղղված նաև բուհի վերահսկողական խմբի ստեղծումը: Բուհի կառուցվածքում վերջին տարիներին բավականին դրական փոփոխություններ կատարվեցին: Ստեղծվեցին որակի ապահովման կենտրոնը, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնը: Կենտրոնների ստեղծումը նպատակ ունի խթանել համապատասխան ոլորտների աշխատանքները: Բուհի կառուցվածքային սխեման բավականին պարզ է և մատչելի ողջ անձնակազմի համար: Սխեման տեղ է գտել բուհում տպագրված ուղեցույցներում, որակի ապահովման ձեռնարկում, տեղադրվել է նաև ինտերնետային կայքում: Կազմակերպական կառուցվածքի արդյունավետության պատկեր է ստացվել նաև ուսանողների և դասախոսների հարցման, ֆոկուս խմբերի անցկացման ժամանակ: Անձնակազմը հիմնականում գոհ էր բուհի կառավարման օղակների աշխատանքից և աշխատանքների կազմակերպվածությունից (օրինակ՝ համապատասխան վերլուծությունները):	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:	
Հիմքեր	**Դասախոսների և ուսանողների մասնակցությունն ապահովող կարգերը** Հավելված 10. ԵՄԽՀ կառավարման խորհրդի ձևավորման կարգ, Հավելված 11. ԵՄԽՀ գիտ. խորհրդի կանոնակարգ, Հավելված 12. ԵՄԽՀ ֆակուլտետի խորհրդի կանոնակարգ, Հավելված 14. ԵՄԽՀ ուսանողական խորհրդի կանոնադրություն, Հավելված 15. ԵՄԽՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն, **Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականությունը և ընթացակարգերը (առկայության դեպքում)** Որոշում կայացնելու գործընթացներում ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը երաշխավորող քաղաքականություն և ընթացակարգեր մշակված չեն: Դրանք իրականացվում են՝ համաձայն վերը նշված կանոնակարգերով ընձեռնված իրավունքներով:

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

Համաձայն համալսարանի կանոնադրությանը, կառավարման համակարգի գործունեության կանոնակարգերի, համալսարանի դասախոսներն ու ուսանողները իրենց գործուն մասնակցությունն ունեն համալսարանի կառավարչական, ուսումնական, գիտահետազոտական և կազմակերպչական գործընթացներում: Կառավարման մարմինների ընդունած որոշումները մշտապես քննարկվում են ամբիոններում: Հաշվի են առնվում պրոֆեսորադասախոսական անձնակազմի, ուսանողական խորհրդի և գիտական ընկերության, ինչպես նաև ուսումնառողների բոլոր դիտողություններն ու առաջարկությունները քննարկվող որոշման շուրջ:

Սակայն բուհում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ որոշ դեպքերում ներգրավվածությունը սահմանափակվում է միայն ֆիզիկական ներկայությամբ: Ինչը կարող է հետևանք լինել սեփական իրավունքների ոչ պատշաճ իմացության, տեղեկացվածության և մոտիվացիայի պակասի: Այդ ուղղությամբ բուհը և ՈԱԿ-ը ներկայումս պարբերաբար կազմակերպում են տեղեկատվական հանդիպումներ դասախոսների և ուսանողների շրջանում՝ ներկայացնելով կառավարման գործընթացում նրանց ներգրավվածության դերն ու անհրաժեշտությունը: Համապատասխան կարգերը տեղադրվել են բուհի ինտերնետային կայքում՝ առավել հասանելի դարձնելու համար: Դրանք տեղ են գտել նաև դասախոսների և ուսանողների համար ՈԱԿ-ի մշակած ուղեցույցներում և բուկլետներում: Դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը խթանելու համար բուհը նաև առաջարկել է նրանց հանդես գալ կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման հետ կապված սեփական ծրագրերով և քննարկել հնարավոր ուղիները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր	**Գործողությունների կարճաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը** **Գործողությունների միջնաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը** **Գործողությունների երկարաժամկետ ծրագիրը և իրականացման հիմքերը** Հավելված 8. ԵՄԽՀ ռազմավարական ծրագիրը (վերանայված տարբերակ) Հավելված 33. ԵՄԽՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման ժամանակացույց Ծրագրերի իրականացման հիմքերը տես՝ ստորև վերլուծության մեջ:

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

Բուհը երկարաժամկետ պլանավորման առաջին փորձը կատարել է 2010թ.: Մինչ այդ պլանավորման աշխատանքները կատարվել են տարեկան կտրվածքով ռեկտորի կողմից կատարվող աշխատանքների պլանավորման միջոցով: ԵՄԽՀ-ի գործողությունների ծրագիրը բխում է նրա 2011-2015թթ. ռազմավարական ծրագրից: Ռազմավարական ծրագրի վրա հիմնված համալսարանի կառավարման խորհրդի և գիտխորհրդի աշխատանքային պլանից ելնելով են իրականացվում կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորված ծրագրերը:

Ծրագրով պլանավորված գործողությունների իրականացման արդյունավետությունը, նախանշված ժամանակացույցին հստակ հետևելը իրականացվում է բուհի ղեկավար անձնակազմի կողմից՝ ռեկտորի գլխավորությամբ: Վերանայման արդյունքում ռազմավարական ծրագրի մեջ տեսանելի դարձավ ծրագրերի և միջոցառումների իրականացման ժամանակացույցի անհրաժեշտությունը, որը բուհը հաշվի է առնելու հաջորդ մշակվելիք ռազմավարական ծրագրում:

Բուհում կատարվող գործընթացների վերաբերյալ կարճատև փաստացի պլանավորումը և ժամանակացույցի մշակումը սկիզբ դրվեց 2013թ վերջին: ՄԿԾ-ներով պլանավորված աշխատանքների իրականացման արդյունավետության գնատահման համար ստեղծվեցին աշխատակիցների պլանավորման և հաշվետվության թերթիկներ և այժմ այդ մեխանիզմը գործում է բուհում: ԵՄԽՀ-ն ռազմավարական ծրագրում պլանավորված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի հետ կապված 2010 - 2014թթ

իրականացրել է հետևյալ աշխատանքները.

I. 2011թ.-ից առ այսօր համալսարանում իրականացվել են մի շարք կառուցվածքային փոփոխություններ, որոնք կնպաստեն կրթական գործունեության բարելավմանը, աշխատանքը առավել արդյունավետ կազմակերպելու և հաշվետվողականությունը բարելավվելու միջոցներին:

Դրանցից են՝

ա) Համալսարանում որակի ապահովման կենտրոնի ստեղծումը,

բ) Որակի պաահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորի հաստիքի ավելացումը,

գ) Արտաքին կապերի և միջազգային համագործակցությունների կենտրոնի ստեղծումը,

դ) Շրջանավարտների միության և կարիերայի կենտրոնի ստեղծումը,

ե) Համալսարանի կոլեկտիվի ԻՊ (իրավական պաշտպանի) գործունեությունը բուհում,

զ) Համալսարանի վերահսկողական խմբի ստեղծումը:

II. Բուհի ուսումնական ծրագրից բխող գործողությունների կարճաժամկետ ծրագրերում ընդգրկված ուսումնաարտադրողական պրակտիկայի բազայի և համագործակցության շրջանակների ընդլայնման նպատակով բուհը համապատասխան պայմանագրեր է կնքել հետևյալ կազմակերպությունների հետ՝

ա) ՀՀ ԱԺ (Ազգային ժողով)

բ) ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն

գ) ՀՀ փաստաբանների պալատ

դ) ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ

դ՛) ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն

ե) << Էկոնոմիկա և իրավունք տեղեկատվական հետազոտական կենտրոն>> ՍՊԸ

զ) <<Մասթեր Սթայլ>> ՍՊԸ

է) <<Համայնք և իրավունք>> իրավապաշտպանական ՀԿ

ը) ՀՊՃՀ (Պոլիտեխնիկ)

թ) <<Մալխասյան Քոնսալթինգ>> ՍՊԸ

ժ) Երևանի Լ. Շանթի անվան N 4 դպրոց

ի) Երևանի Վ. Տերյանի անվան N 60 դպրոց

լ) Երևանի N 135 դպրոց

խ) Երևանի Ա. Միկոյանի անվան N 166 հիմնական դպրոց

ծ) Կոտայքի մարզի գ. Պռոշյանի Պ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց

կ) Արմավիրի թիվ 8 հիմնական դպրոց

հ) Արարատի մարզի Նոր Կյուրինի միջնակարգ դպրոց

ձ) << ԳԼՈՍՍԱ ԳՈԿՈՒՍ>> ՍՊԸ

04.03.2013թ.-ին ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հետ կնքվել է պայմանագիր նրանց մագիստրատուրայի պրակտիկան մեր բուհում անցկացնելու նպատակով: Արդեն երկու տարի է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրոսները պարբերաբար իրենց գիտակրթական պրակտիկան անցկացնում են մեր բուհում և դա բավականաչափ դրական ազդեցություն է թողնում թե ուսանողների ընդհանուր շփումների ծավալների մեծացման, և թե միջբուհական համագործակցության տեսանկյունից:

Պրակտիկայի վերաբերյալ կնքված պայմանագրերի (ըստ մասնագիտական, կրթական աստիճանի, ուսանողների սահմանային թվերի և պրակտիկայի կազմակերպման ժամկետների) ամփոփ տեղեկատվությունը տես՝ Հավելված 95-ում:

III. 2011թ.-ին բուհական համակարգում ստեղծվեց մի իրավիճակ, որ կախված հանրապետությունում հանրակրթական դպրոցի 12 ամյա կրթության անցման հետ չկային շրջանավարտներ և միաժամանակ ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ բուհերում առկա բաժնի ընդունելությունը իրականացվեց միասնական համակարգով:

Բնականաբար բուհում փոխվեց իրավիճակը և 2011թ.-ի ընդունելությունը ՀՀ բուհերում համարյա թե առանց բացառության իրականացվեց նախատեսված սահմանային տեղերից էապես քիչ թվաքանակով: Բուհում առաջացան դժվարություններ թե ուսանողական կազմի համալրման հետ կապված, և թե ֆինանսական տեսակետից:

Բնականաբար պետք էր իրականացնել որոշակի քայլեր եղած իրավիճակը և առաջացած դժվարությունները մեղմելու նպատակով:

Առաջին խնդիրը, որ դրվեց ԵՄԽՀ-ում դա գործող ուսումնական պլանների վերանայումն էր և ուսումնական պլանների փոփոխմամբ առավել ճիշտ ուսումնական պրոցեսի կազմակերպումն էր: 2012թ.–ին վերանայվեցին բոլոր մասնագիտությամբ ուսումնական պլանները, որտեղ հիմնական սկզբունքները հետևյալն էին՝

ա) փոխել ուսումնական պլանը՝ նախկինում համապատասխան մասնագետների կողմից կատարված առաջարկությունները և դիտողությունները հաշվի առնելով,

բ) ուսումնական պլանը փոփոխելով դարձնել առավել համահունչ կրեդիտային համակարգի տվյալ ժամանակի պահանջներին համապատասխան,

գ) ուսումնական պլանի փոփոխությունը դարձնել համահունչ առկա կրթական չափորոշիչներին և ՈԱՇ-ին,

դ) ուսումնական պլանի փոփոխությամբ նպաստել ուսանողների շարժունությանը ներբուհական տեղափոխություն կատարելիս (թե մասնագիտության փոփոխման դեպքում և թե կրթական մի ձևից մյուս ձևին (առկայից հեռակա, հեռակայից առկա) անցնելու դեպքում):

Նշված փոփոխությունները հնարավորություն ապահովեցին, որ ցանկացած մասնագիտությամբ առաջին կուրսի ավարտից հետո հեռակա բաժնից առկա բաժին տեղափոխվելը իրականացվեն առանց դժվարությունների և միաժամանակ պահպանվեն բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2008թ, հուլիսի 16-ի N 938.2 որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 25-ի N 1240.2 որոշման պահանջները:

Ուսումնական պլանների վերանայված փոփոխությունները հավանության արժանացան համապատասխան մասնագետների կողմից և հաստատվեցին գիտական խորհրդի համապատասխան նիստում:

IV. Նշենք նաև, որ համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատումը և կրթական գործունեության ինքնավերլուծության հարցերը, ինչպես նաև համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունները մշտապես գտնվում է բուհի ղեկավարության ուշադրության կենտրոնում, դրանք պարբերաբար ենթարկվում են մշտադիտարկման և գնահատման են արժանանում յուրաքանչյուր տարվա ավարտին՝ ռեկտորի տարեկան հաշվետվությունում:

V. Մովսես Խորենացու անվան համալսարանի գործունեությունների ընթացակարգերի և կանոնադրությունների ճշգրտման և արդիականացման խնդիրը չնայած ընդգրկված են գործողությունների միջնաժամկետ ծրագրում, սակայն դրանք նույպես գտնվում են բուհի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում և կախված իրավիճակից և անհրաժեշտություններից ստեղծվում են համապատասխան նոր կանոնակարգեր կամ ճշգրտվում եղածները: Ծրագրային ժամանակահատվածում ստեղծվել և վերանայվել են մի շարք կանոնակարգեր, որոնք ներկայացված են հավելվածների ցանկում:

VI. Շրջանավարտների և գիտական կադրերի պատրսատման հետ կապված հարցերը գտնվում են բուհի ուշադրության կենտրոնում: 2014թ. մայիսի 14-16-ը ԵՊՀ-ում կազմակերպվել է EURASHE կազմակերպության համաժողովը, որտեղ <<Շրջանավարտների զբաղվածության հիմնախնդիրը>> թեմայով զեկուցումով հանդես եկավ ԵՄԽՀ-ի ռեկտոր Ա. Աղաբաբյանը:

Գիտական կադրերի պատրաստման հարցերը համարվում են բուհի թույլ կոմերից մեկը (մանրամասն տես նկարագրված վեցերորդ չափանիշում)

VII. Հաշվետու ժամանակահատվածում բուհի նյութատեխնիկական բազան թարմացվել է և ձեռք են բերվել անհրաժեշտ ռեսուրսները (տես հավելված 79):

VIII. Գիտական հիմնական ուղղությունների շրջանակներում տարբեր գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքները, ինչպես նաև բուհում հրատարակման գործի բարելավումը վերջին մի քանի տարիների ընթացքում

բուհում ընթացել են դանդաղ տեմպերով: Չնայած բուհի դասախոսների կողմից հրատարակվել են մի քանի գիտամեթոդական ձեռնարկներ:

2002թ.-ից սկսած համալսարանում հրատարակվել է <<Մովսես Խորենացի>> գիտական, պատմաբանասիրական, բնագիտական հանդեսը, որտեղ իրենց գիտական հոդվածներն են հրապարակում համալսարանի դասախոսները, ինչպես նաև այլ բուհի դասախոսներ:

2015թ.-ի ընթացքում նախատեսվում է հրատարակել վերոնշյալ հանդեսի ևս երկու համարներ:

IX. Բուհը համագործակցում է ինչպես հայաստանյան, այնպես էլ արտերկրի ուսումնական հաստատությունների հետ .

ՀՀ բուհեր – <<Պետության կողմից հավատարմագրված հայկական համալսարանների խորհուրդ>> ՀԿ անդամ բուհերի հետ

Արտերկրի բուհեր – Մոսկվայի ֆինանսաարդյունաբերական համալսարան, Մեծ Բրիտանիայի Տիրի կազմակերպություն, Հռոմի Սապիենզա համալսարան:

X. Ինչպես արդեն նշեցինք 2012թ.-ին բուհում վերանայվեցին և գիտական խորհրդի կողմից հաստատվեցին բուհի բոլոր ուսումնական պլանները: Բնականաբար ուսումնական պլանների փոփոխությունը իր հերթին պահանջում էր համապատասխան կրթական ծրագրերի վերանայում և փոփոխություն: Բոլոր մասնագիտություններում ֆունդամենտալ ձևով վերանայվել են բուհի բոլոր առարկայական ծրագրերը, ավելին, այդ ժամանակահատվածում ուսումնասիրվել են նաև առաջատար այլ բուհերի համապատասխան ծրագրերը և կազմվել են նոր և արդիական ծրագրեր: Սակայն ինչպես էլ դրանք կատարելագործվեն միշտ էլ անհրաժեշտություն է առաջանում վերանայելու և համապատասխանցնելու ժամանակի պահանջներին: Այդ պատճառով էլ դրանք մշտական վերանայվում են և անհրաժեշտության դեպքում նորից փոփոխվում:

XI. Համալսարանի ենթակառուցվածքային և ծրագրային հավատարմագրման գործողությունների կազմակերպման ուղղությամբ բուհը կատարել է նախապատրաստական աշխատանքներ, այդ թվում՝ ինքնավերլուծության փաթեթի կազմման աշխատանքներ, ուսումնասիրելով հավատարմագրման կարգն ու չափանիշները: Իրականացրել է արտաքին գնահատման համար հավաստի տեղեկատվության հիմքերի հավաքագրում, վերլուծությունների իրականացում, այլ բուհերի համապատասխան փորձի ուսումնասիրություն:

XII. Համալսարանի շենքային տարածքների ընդլայնման հիմնախնդիրը բավականին դժվարություններ է առաջացնում կապված համալսարանի ֆինանսական դժվարությունների հետ, սակայն այդ ուղղությամբ նախատեսվում է գտնել համապատասխան ֆինանսական աղբյուրներ, և մինչև 2020թ. այս հարցում ունենալ զգալի առաջընթաց:

ԵՄԽՀ-ն ռազմավարական զարգացման ուղղությունների իրականացման նպատակով 2015թ.-ին **պլանավորում է** իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Մինչև 2015թ.-ի հուլիսի 20-ը կատարել վերլուծություն և պատրաստել հաշվետվություն ռազմավարական ծրագրի հետևյալ ուղղություններով.

- յուրաքանչյուր ծրագրային ժամանակահատվածի համար ընթացիկ իրավիճակի վերլուծության վերաբերյալ,
- ծրագրային ժամանակահատվածի համար համալսարանի առաքելության և նպատակների հստակեցման, դրանք՝ ՀՈԱՇ-ին և արտաքին ու ներքին

շահակիցների կարիքներին համապատասխանեցման վերաբերյալ,

- համալսարանի ուսումնամեթոդական փաստաթղթերի շարունակական կատարելագործման, արդյունավետ մեխանիզմների կիրառման վերաբերյալ,
- թափանցիկ և ուսանողակենտրոն ուսուցման կազմակերպման վերաբերյալ,
- մասնագիտության կրթական ծրագրերի կազմման, մշտադիտարկման և վերանայման արդյունավետ մեխանիզմների կիրառման վերաբերյալ,
- համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության համար գիտակրթական գործունեության նպաստավոր պայմանների ստեղծման վերաբերյալ,
- համալսարանի գիտական և աշխատանքների կազմակերպման ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառման վերաբերյալ,
- արտաքին և հասարակության հետ կապերի սոցիալական համագործակցության զարգացման վերաբերյալ,
- միջազգային համագործակցության շրջանակների ընդլայնման վերաբերյալ,
- ՈԵՇ-ՈԱՇ-կրթական չափորոշիչներ-որակի ապահովում-աշխատաշուկա-շրջանավարտ, օղակների հնարավորինս համապատասխանեցման վերաբերյալ:

2. Մինչև 2015թ.-ի օգոստոսի 10-ը կատարել վերլուծություն և պատրաստել հաշվետվություն ռազմավարական ծարագրի հետեևյալ ուղղությունով.

- որակի ապահովման համակարգի շարունակական կատարելագործման, արդյունավետ կառավարման համակարգի կիրառման և դրանց ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանեցման վերաբերյալ:

3. Մինչև 2015թ.-ի օգոստոսի 25-ը կատարել վերլուծություն և պատրաստել հաշվետվություն ռազմավարական ծարագրի հետևյալ ուղղությունով.

- Կադրային քաղաքականության արդյունավետ մեխանիզմների կիրառման, կադրային ներուժի զարգացման վերաբերյալ:

4. Մինչև 2015թ. սեպտեմբերի 10-ը կատարել վերլուծություն և պատրաստել հաշվետվություն ռազմավարական ծարագրի հետևյալ ուղղությունով.

- Համալսարանի կառավարման և ֆինանսական ռեսուրսների բաշխման արդյունավետ մեխանիզմների ներդրման վերաբերյալ:

5. Մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 25-ը կատարել վերլուծություն և պատրաստել հաշվետվություն ռազմավարական ծարագրի հետևյալ ուղղությունով.

- Համալսարանի ենթակառուցվածքների ըստ նպատակների հստակեցման, նյութատեխնիկական բազայի բարելավման, ուսումնական տարածքների ապահովման, սպասարկման և ընդլայնման վերաբերյալ:

6. Մինչև 2015թ.-ի սեպտեմբերի 30-ը ներկայացնել համալսարանի 2016-2020թթ. ռազմավարական նոր ծրագիրը:
7. Մինչև 2015թ.-ի դեկտեմբերի 20-ը ներկայացնել ամփոփ հաշվետվություն ռազմավարական զարգացման բոլոր ուղղությունների վերաբերյալ ծրագրային ժամանակահատվածի համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Հիմքեր	**ՄՈՒՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեխանիզմները և գործիքները** ԵՄԽՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման և ուսումնասիրության համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները՝

- Իրականացվում են կրթական դաշտի ուսումնասիրություններ:
- Համապատասխան ուսումնասիրություններ են կատարվում կրթության բնագավառում կատարվող իրավական ակտերի, ենթաօրենսդրական ակտերի, օրենքի փոփոխությունների ուղղությամբ, որոնք անմիջապես ազդում են բուհի կրթական գործունեության կազմակերպմանը:
- Պատշաճ ուշադրություն է դարձվում համալսարանի ներքին կարգուկանոնի պահպանմանը, դասահաճախումների, առաջադիմության բարձրացման հարցերին, ուսուցման մակարդակի բարձրացմանը, դասախոս-ուսանող փոխադարձ կապի արմատավորման և ամրապնդման ուղղությամբ արդիական առաջավոր եղանակների ներդրմանը:
- Իրականացվում են ներբուհական փատաթղթային ուսումնասիրություններ և արդյունքների քննարկում:
- Իրականացվում են դասավանդման գործընթացների կանխատեսման մեթոդների և միջոցների կիրառության, արդյունքների մշտադիտարկման միջոցառումներ:
- Ամբիոններում իրականացվում են դասալսումներ, քննարկումներ ու վերլուծություններ:
- Վերահսկում է իրականացվում համալսարանի ողջ անձնակազմի հաճախումների տաբելի ամենօրյա լրացման նկատմամբ:

Պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես ընդունված քաղաքականությունը (առկայության դեպքում)

Բուհում պլանների գնահատման և վերանայման պաշտոնապես ընդունված քաղաքականություն առկա չէ, սակայն այդ գործընթացները կատարվում են ղեկավար կազմի կողմից ոչ ֆորմալ բնույթով:

Այլ հիմքեր և վերլուծություններ

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

Համաձայն բուհի ռազմավարական զարգացման ուղղությունների 1-ին կետի բուհում իրականացվում են ընթացիկ իրավիճակների վերլուծություններ և, մասնավորապես, ուսումնասիրվում են հաստատության գործունեության վրա ազդող ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնները:

Վերջին երեք տարիներին բուհի գործունեության վրա ազդող ամենաակնառու գործոններն են.

ա) 2011թ.-ին հանրապետության հանրակրթական դպրոցներում շրջանավարտներ չլինելու փաստը (կապված 12-ամյա կրթական համակարգի ներդրման հետ):

բ) Ամբողջ հանրապետությունում բուհերի առկա բաժնի ընդունելության քննությունները

միասնական համակարգով իրականացնելը, որից զերծ մնացին արտասահմանյան բուհերի հայաստանյան մասնաճյուղերը և ընդունելության մրցակցությունը եղավ անհավասար պայմաններում:

գ) Հանրապետությունում ժողովրդի ընդհանուր սոցիալ տնտեսական վիճակի վատացումը հանգեցրեց ուսանողների վճարունակության անկման, և դրա հետևանքով էլ բուհում ֆինանսական վիճակի վատթարացմանը: Դա է վկայում նաև բուհի ֆինանսական բյուջեի վերլուծությունը, երբ զգալի շեղում է նկատվում բուհի հաշվեգրման եղանակով ֆինանսական շրջանառության (ուսանողության թվակազմի և ուսման վարձերի համադրությամբ բուհի ակնկալվող ֆինանսական ներհոսքը) և ուսանողների կողմից փաստացի կատարված վճարման միջև:

Այս ամենը բնականաբար իրենց ազդեցությունն են թողնում, կարելի է ասել համարյա թե առանց բացառության, ռազմավարական զարգացման բոլոր ուղղությունների վրա: Համենայն դեպս 2011-2015թթ ռազմավարական հնգամյա ծրագրի 4-րդ տարվա կտրվածքով դեռևս չի լուծվել ռազմավարական ծրագրի զարգացման ուղղությունների 4-րդ կետում նախատեսված ուսումնական տարածքի ընդլայնման խնդիրը: Զգալի առաջընթաց չի գրանցվել նաև բուհի աշխատողների վարձատրության (աշխատավարձերի) հարցերում, որը նույպես պայմանա-վորված է ֆինանսական դժվարություններով:

Ռազմավարական ծրագրի մնացած ուղղություններով կատարվել են բավականաչափ աշխատանքներ, որը պայմանավորված է բուհի ղեկավարության և աշխատակազմի ավելի նպատակասլաց քայլերով, կառավարման և ֆինանսական ռեսուրսների օպտիմալ բաշխմամբ և արդյունավետ մեխանիզմների կիրառմամբ:

Հարստացվել ու թարմացվել է համալսարանի նյութատեխնիկական բազան, էապես բարելավվել և որակական նոր հիմքի վրա է դրվել բուհի ՈԱԿ-ի աշխատանքները, աշխուժացել և մեծացել է դասախոսական կազմի և ուսանողության ներգրավվածությունը համապատասխան աշխատանքներում, ընդլայնվել և մեծացել է կապը արտաքին և հասարակության հետ կապերի ոլորտում, ինչպես նաև միջազգային համագործակցությունների շրջանակներում:

Չնայած կատարած զգալի աշխատանքին, այնուամենայնիվ, արտաքին գործոնները (մասնավորապես սույն կետի ա), բ), գ), ենթակետերը) զգալիորեն դժվարեցնում են համալսարանի առաքելության և նպատակների, արտաքին և ներքին շահակիցների բավարարման խնդիրը:

Սակայն բուհի ղեկավարությունը վճռական է տրամադրված ընդհուպ մինչև հիմնադիրների միջոցով լրացուցիչ ֆինանսական ներհոսքի ապահովմամբ լուծելու համալսարանի առջև դրված խնդիրները, լիարժեքորեն իրականացնել համալսարանի առաքելությունը և նպատակները և աշխատաշուկայում մրցունակ շրջանավարտներ պատրաստելու կարևորագույն հարցը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

	ՄՈՒՀ-ի կառավարման և վարչարարության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը Հավելված 8. ԵՄԽՀ 2011-15թթ ռազմավարական ծրագիր Բուհի գործող ռազմավարական ծրագիրը մշակվել է 2010 թ, երբ դեռ բուհում ստեղծված չէր ՈԱԿ-ը որպես առանձին ստորաբաժանում:

Հիմքեր	ՈԱԿ-ի ստեղծմամբ բուհում նոր մոտեցում ձևավորվեց որակի ապահովման գործընթացների վերաբերյալ և անհրաժեշտություն առաջացավ ռազմավարական ծրագրում որպես առանձին բաժին նկարագրել որակի ապահովման գործընթացները և ուղղությունները: Հավելված 34. ԵՄԽՀ որակի ապահովման ձեռնարկ **Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման սկզբունքները** Բուհը իր կառավարման ոլորտում որակի ապահովման սկզբունքներն է համարում՝ ✓ բուհում որակի ամբողջական կառավարումը, որը կապահովի որակյալ աշխատանք բոլոր օղակներում, ✓ որակի ապահովման համաչափ զարգացում կառավարման բոլոր օղակներում, ✓ կառավարման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածություն, ✓ պլանավորման, իրականացման, ստուգման և բարելավման ցիկլի ապահովում, ✓ կառավարման օղակների զարգացում և համագործակցություն **Քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմները** Իրականացման մեխանիզմներից են՝ ✓ հաշվետվողականության մեխանիզմներ, ✓ ծրագրերի և ժամանակացույցերի մշակում, ✓ կառավարման համակարգի մշտադիտարկում, ✓ իրականացված հետազոտություններ և վերլուծություններ, ✓ բուհի ինքնագնահատում և ինքնավերլուծություն **Այլ հիմքեր և վերլուծություններ**

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

Նշենք, որ բուհում մինչև ՈԱԿ ստեղծումը, կառավարման գործընթացների արդյունավետությունը և որակը ստուգվում էր արդյունքների վերաբերյալ տարեկան կտրվածքով ներկայացված հաշվետվությունների միջոցով, ինչը հնարավորություն չէր տալիս ճշգրիտ գնահատական տալ: Օրինակ, եթե որևէ թերություն էր արձանագրվում, դժվար էր ճշգրիտ որոշել, թե կոնկրետ որ օղակում է իրականացվել թերացումը, և ովքեր են պատասխանատուները: ՈԱԿ-ի ստեղծումից հետո ստեղծվեցին մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս վերահսկել և հստակեցնել գործընթացների իրականացման ընթացիկ վիճակը ևս: Ներկայումս բուհում դեռ հաստատված չէ կառավարման որակի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգը: Որոշ դեպքերում որակյալ պլանավորված գործընթացները, մասնագիտական կադրերի ոչ այնքան փորձառու լինելու պատճառով, չեն իրականացվում ըստ պլանավորված մակարդակի: Անհրաժեշտություն կա նաև խթանելու հետազոտման արդյունքում առաջացած խնդիրների բարելավման մեխանիզմները, որոնք նաև կապված են բուհի ֆինանսական վիճակի հետ:

Կառավարման որակի ապահովմանը նպաստում են բուհի առաքելության վերանայումն ու հստակեցումը, ռազմավարական ծրագրի վերանայումը, ուսանողների և

դասախոսների կողմից բուհի գնահատումը, ինչպես նաև իրավանորմատիվային փաստաթղթերի հստակեցումը:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:	
Հիմքեր	**Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները** Բուհի ՄԿԾ-ների գնահատումը իրականացվում է հետևյալ մեխանիզմներով՝ ✓ ՄԿԾ-ների վերաբերյալ վիճակագրական տվյալների ուսումնասիրություն, ✓ համապատասխան ստորաբաժանումների (ֆակուլտետներ, ամբիոններ, դասախոսական կազմ) հաշվետվություններ, ✓ Վերահսկողական խմբի ուսումնասիրության արդյունքներ, ✓ պետական ավարտական քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ, ✓ շրջանավարտների կարծիքների հավաքագրում և վերլուծություն, ✓ հարցումներ, ֆոկուս խմբեր ուսանողների և դասախոսների շրջանում, ✓ քննարկումներ, հանդիպումներ ✓ պրակտիկայի օրագրերի և ներկայացված բնութագրերի դիտարկում, ✓ բենչմարքինգ (որը ներկայումս դեռևս նոր է ներդրվում) **Այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմները** **Տեղեկատվության հավաքագրման համակարգը** Տեղեկատվության հավաքագրման համակարգը իր մեջ ներառում է՝ ✓ ամբիոնների և ֆակուլտետների հաշվետվություններ, ✓ պետական ավարտական քննությունների արդյունքներ, ✓ պրակտիկայի վերաբերյալ կարծիքների հավաքագրում, ✓ հետազոտությունների արդյունքներ, ✓ վիճակագրական տվյալներ, ✓ հարցումներ (ուսանողների, դասախոսների և շրջանավարտների շրջանում) ✓ ֆոկուս խմբեր **Համապատասխան վերլուծություններ** Բուհում ՄԿԾ-ների որակի վերաբերյալ ամբողջական վերլուծություն դեռ չի կատարվել: Այլ առանձին հարցեր են ներառվել օրինակ, բուհի գնահատման հարցման ժամանակ: Իրականացվել են նաև առանձին վերլուծություններ ուսանողների գնահատման արդյունավետության, պրակտիկայի արդյունավետության և այլ հարցումներով:
Վերլուծել ՄՈՒՀ- ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:	

Բուհում ՄԿԾ-ների և այլ գործընթացների գնահատման նկարագրված մեխանիզմներն ընդհանուր առմամբ տալիս են որոշակի պատկեր արդյունավետության գնահատման համար: Չնայած, որոշ դեպքերում պետք է նշել, որ ստացված բոլոր տեղեկատվությունները չեն համադրվում ընդհանուր վերլուծության մեջ, և դրանք վերլուծվում են առանձին-առանձին: Դա ոչ միշտ կարող է հանգեցնել ընդհանուր հավաստի պատկերի ստացմանը: Այնինչ բոլոր մեխանիզմներից ստացված արձագանքների համեմատական վերլուծությունը կօգներ նաև պարզել յուրաքանչյուր մեխանիզմի արդյունավետությունը մյուսների համեմատ:

2013թ. բուհում իրականացվեց նախորդ տարիների շրջանավարտներից կամայական ընտրված անդամներով խմբի օնլայն հարցում և վերլուծություն՝ նվիրված բուհի և ՄԿԾ-ի գնահատմանը, համապատասխան աշխատանք գտնելու խնդրին: Մեխանիզմը կիրառվեց ոչ մեծ խմբի շրջանում, այնինչ արդյունքների հստակության համար անհրաժեշտ էր հնարավորինս մեծ քանակ ներգրավել: Ներկայումս բուհը իր առջև խնդիր է դրել հավաքագրել շրջանավարտների կոնտակտային տվյալները և առավել ակտիվ կապ պահպանել նրանց հետ՝ նպատակ ունենալով ստեղծել շրջանավարտների տվյալների էլեկտրոնային բազա, որը հնարավոր կլինի կիրառել հետազոտությունների ժամանակ:

Բուհում ուսանողների և դասախոսների շրջանում կազմակերպվող հարցումները համեմատաբար ավելի արդյունավետ են, քանի որ իրականացվում են անանուն: Չնայած կարելի է փաստել, որ առաջարկությունների և դիտողությունների հետ կապված ավելի ակտիվ են ուսանողները: Դա կարելի է բացատրել այն փաստով, որ դասախոսների ընդհանուր թիվը բավական քիչ է ուսանողների թվից, և դասախոսները որոշ դեպքերում խուսափում են խնդիրների և թերությունների մասին հարցաթերթիկում հայտնելուց, կոլեկտիվից չառանձնանալու համար: Այդ ուղղությամբ մեխանիզմի արդյունավետությունը բարձրացնելու համար հարցաթերթիկներում հարցերը մշակվում են այնպես, որ հնարավոր լինի մի քանի հարցով դուրս բերել գլխավոր խնդրի մասին պատկեր:

Նշենք, որ բուհում նախատեսվում է մշակել յուրաքանչյուր ՄԿԾ-ի գնահատման ամբողջական մեխանիզմ, որի օգնությամբ ստացված արձագանքները կօգնեն ծրագրերի վերանայման և վերամշակման ժամանակ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

Հիմքեր	**Հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը** Կրթական ծրագրերի թարմացված փոփոխությունները ուսանողների և դասախոսների շրջանում տարածվում են համապատասխան կուրսերի և խմբերի հետ ժողովների, ինչպես նաև համապատասխան մասնագետների միջոցով սեմինարների անցկացման միջոցով: Մշակվում են պրեզենտացիաներ, որոնք ներկայացվում են ուսանողների և դասախոսների հետ հանդիպումների ժամանակ և ապահովում են քանակական և որակական տեղեկատվություն: Բուհում տպագրվել են բուկլետներ և տեղեկատվական նյութեր: Բուհը ՀՀ տարբեր ԶԼՄ-ների միջոցով ներկայացրել է տեղեկատվություն հասարակությանը: Տարբեր հեռուստաընկերություններով ցուցադրվել են տեսաֆիլմեր՝ նվիրված բուհի գործունեությանը:

	Բուհը թարմացրել է իր ինտերնետային կայքը, տեղեկատվություն է ապահովվում նաև ֆեյսբուքյան էջում: Բացի նշված ընթացակարգերից՝ իրականացվել են նաև տեղեկատվության տարածում դպրոցներ և մարզեր այցելությունների միջոցով: **Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները** Հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը հիմնականում գնահատվում են հասարակության տարբեր խավերի հետ հանդիպումների, հրապարակումներին տրված արձագանքների, հետադարձ կապի մեխանիզմների (հարցումներ, քննարկումներ) միջոցով:

Վերլուծել ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների արդյունավետությունը կարելի է դատել ուսանողության թվաքանակով, բուհի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումով և վստահելի համբավի ձեռքբերումով:

Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհի պարզ կառուցվածքային սխեմա	Բուհի հիմնախնդիրների լուծման ժամանակ՝ մարդկային և ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելը:
Բուհի կառավարման ճկուն համակարգ, որը հնարավորություն է տալիս ստեղծել նոր կառույցներ և կենտրոններ՝ ելնելով անհրաժեշտությունից:	Կառավարման ժամանակ ներքին շահակիցների կողմից, կանոնակարգերով տրվող իրավունքների և հնարավորությունների ոչ ակտիվ իրագործում:
Հաստատված կարգերի համաձայն պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության հնարավորություն կառավարման և որոշումների կայացման բոլոր մակարդակներում:	Կառավարման համակարգում ժամանակակից տեխնոլոգիաների սակավ օգտագործում:
Բուհի ղեկավար կազմի (անձամբ ռեկտորի) անմիջական մասնակցությունը բուհում ընթացող բոլոր կարևոր գործընթացներին, քննարկումներին և հանդիպումներին:	Բուհում մշտադիտարկման, հաշվետվողականության մեխանիզմների կիրառման պասիվությունը կառավարման ստորին մակարդակներում:

ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
ՀՀ և արտասահմանյան բուհերի հետ համագործակցության և փորձի փոխանակման միջոցով կառավարման նոր արդյունավետ մոդելների և մեխանիզմների ներդրման հնարավորություն:	Հաշվի առնելով այն փաստը, որ բուհի բյուջեն հիմնականում ձևավորվում է վարձավճարներից, վտանգ է հանդիսանում դիմորդների թվաքանակի կրճատումը՝ նոր միասնական ընդունելության կարգի պատճառով, ինչը կկրճատի ֆինանսական ներդրումները կառավարման համակարգում:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Ֆինանսավորման այլ աղբյուրների հնարավորությունների օգտագործում՝ դրամաշնորհներ, միջազգային ծրագրեր և այլն,
- ներքին շահակիցների իրավունքների գիտակցման և կիրառման նպատակով տեղեկատվական հանդիպումների անցկացում և իրազեկում,
- Ֆինանսական ռեսուրսների տրված հնարավորությունների շրջանակներում տեխնիկական հագեցվածության ընդլայնում,
- Բուհում մշտադիտարկման և հաշվետվողականության բոլոր օղակներում համաչափ իրականացման համար վերահսկողության մեխանիզմների կատարելագործում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:	
Հիմքեր	**Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը** Հավելված 3ա. «Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության (որակավորման) նկարագիր Հավելված 3բ. «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության (որակավորման) նկարագիր Հավելված 3գ. «Իրավագիտություն» մասնագիտության (որակավորման) նկարագիր Բուհի ՄԿԾ-ները հանդիսանում են հիմնարար փաստաթղթային փաթեթներ, որոնք ներառում են ՄԿԾ-ներով նախատեսված ուսումնական պլանները, առարկայական պլանները, դասընթացների նկարագրությունները և այլն: Բուհում գործող ՄԿԾ-ների նկարագրում պահանջվող որոշ կետեր բուհում նկարագրվում են առանձին կանոնակարգերում՝

ընդհանուր բոլոր ՄԿԾ-ների համար:

Մասնագիտության կրթական ծրագրի համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման քաղաքականությունը, ընթացակարգերը և կատարված աշխատանքի հիմքերը

Բուհի ՄԿԾ-ների համար առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման հաստատված քաղաքականություն և ընթացակարգ առկա չեն, և, ըստ այդմ, ֆորմալ հիմքերը բացակայում են: Սակայն համեմատական վերլուծության են ենթարկվել բոլոր ՄԿԾ-ները մշակման և վերամշակման ժամանակ՝ հաշվի առնելով ՀՀ այլ բուհերի ծրագրերը:

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

ԵՄԽՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը կազմվել և վերամշակվել են պետական կրթական չափորոշիչների համապատասխան և համալսարանի որդեգրած առաքելությանը համահունչ:

Ինչպես հայտնի է, ՀՀ բարձրագույն կրթության համակարգը ինտեգրվել է կրթության եվրոպական տարածքին, որի արդյունքները ամրագրվել են Բոլոնիայի հռչակագրով և միջազգային նորմատիվային այլ ակտերով: Գործընթացին ներգրավվել է նաև Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանը: Արդյունքում ԵՄԽՀ-ում ուսուցումը կազմակերպվում է կրեդիտային համակարգով, նպատակ ունենալով աստիճանական անցում կատարել ուսման կազմակերպման ուսանողամետ համակարգին՝ ապահովելով ուսումնառության ճկուն ձևերի իրականացման լայն հնարավորություն: Կրեդիտային համակարգի ներդրմամբ զգալիորեն բարելավվել է ուսանողներին առաջարկվող կրթական ծրագրերի կառուցվածքը և աշխատածավալը, հիմնավորված կերպով թեթևացվել է լսարանային բեռնվածությունը, կրճատվել է դասավանդվող առարկաների քանակը՝ իրատեսական նախադրյալներ ստեղծելով ինքնուրույն ուսումնական աշխատանքի հնարավորությունները մեծացնելու, ուսումնական ծրագրերը լավագույնս յուրացնելու և դրանով սահմանված կրթական արդյունքները ձեռք բերելու համար: Կրեդիտային հենքով ուսումնական ծրագրերի կազմմանը ցուցաբերվել է համակարգային մոտեցում: Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան համալսարանը մշակել է նոր կրթական ծրագրեր: Վերանայվել են նաև մինչ այդ եղած ծրագրերը, բարելավվելով և համապատասխանեցվելով ուսուցման նոր համակարգին և հրամայականներին, ուսումնառության ակնկալվող նոր արդյունքներին, որոնք ամփոփված են որակավորման պետական կրթական չափորոշիչներում:

ԵՄԽՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերը կազմվել են՝ համեմատելով և վերլուծելով այլ բուհերի համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերը: ՄԿԾ-ները կազմվել են այնպես, որ ակնկալվող արդյունքները համահունչ լինեն հաստատության առաքելությանը և նպատակներին, և համադրելի ինչպես պետական կրթական չափանիշներին, այնպես էլ Որակավորումների Ազգային Շրջանակին: Չնայած դրան մասնագիտական կրթական ծրագրերը մշտապես էլ գտնվում են վերանայման և մշտադիտարկման մեջ, հիմք ընդունելով բուհի առաքելության և նպատակների վերանայումները և ներկայացվող նոր պահանջները: Ներկայումս համաձայն բուհի վերանայված առաքելության և ակնկալվող վերջնարդյունքների՝ ՄԿԾ-ների վերամշակման կարիք կա:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ): ԵՄԽՀ-ն իր մասնագիտական կրթական ծրագրերը կազմելիս հիմնականում առաջնորդվել է ԵՊՀ-ի գործող կրթական ծրագրերով: ԵՄԽՀ-ի ռեկտորը հանդիսանում է «Պետության կողմից հավատարմագրված հայկական համալսարանների ռեկտորների խորհուրդ» ՀԿ նախագահի տեղակալ: Ելնելով անդամակցությունից՝ ուսումնառողների շարժունակությունն ապահովելու համար մասնագիտական կրթական ծրագրերը կազմելիս հաշվի են առնվել նաև միավորման անդամ բուհերի կրթական ծրագրերը: Նախատեսվում է նաև ապագայում իրականացնել բենչմարքինգ արտերկրյա բուհերի հետ, որոնց հետ բուհը համագործակցում է:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:	
Հիմքեր	**Ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (պատահական հիմունքներով ՈԱԱԿ-ի կողմից ընտրված 3 ՄԿԾ-ների համար)** Բուհում գործող ՄԿԾ-ները կարիք ունեն վերանայման, որի արդյունքում հնարավոր կլինի ներկայացնել բոլոր ՄԿԾ-ների կառուցվածքում ակնկալվող արդյունքները, համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները: Ներկայումս բուհը այլ բուհերի փորձի ուսումնասիրություններ է իրականացնում այդ ուղղությամբ: Հավելված 35.1 ԵՄԽՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները Հավելված 35.2 ԵՄԽՀ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները Հավելված 35.3 ԵՄԽՀ «Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները Հավելված 35.4 ԵՄԽՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները **Դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը** Բուհում դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները պարբերաբար վերանայվում են՝ հաշվի առնելով հետադարձ կապի մեխանիզմներով ստացված արձագանքները ուսանողների և

դասախոսների կողմից: Կատարվում է այլ բուհերի փորձի ուսումնասիրություն տվյալ ոլորտում:

Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քաղաքականությունը և ընթացակարգերը

Դասավանդման նյութերն ու ռեսուրսները հնարավորության սահմաններում արդիականացվում են բուհի կողմից: Սակայն, կախված ֆինանսական ռեսուրսների սակավությունից, այդ գործընթացները համեմատաբար դանդաղ են ընթանում:

Համապատասխան հիմքեր

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության բարձրացման համար վերանայվել են բուհի ուսումնական պլանները՝ առավել կարևորելով ուսանողի ինքնուրույն և անհատական աշխատանքների համար հատկացվող ժամերը: Սակայն դասավանդման մեթոդների նկարագրությունից պարզ է դառնում, որ գերիշխում են ավանդական խոսքային մեթոդները (դասախոսություն, զրույց, քննարկում), որոնք նպաստում են ուսանողի մոտ գիտելիքների ձեռքբերմանը, իսկ կարողությունների ու հմտությունների ձեռքբերման համար ուսանողները ավելի քիչ հնարավորություն ունեն: Այսպես, բուհում անցկացված հարցումների վերլուծության հիման վրա պարզ դարձավ, որ ուսանողները կարիք են տեսնում պրակտիկայի ժամերի ավելացման, քանի որ շեշտադրում էին պրակտիկայի արդյունավետությունը և իրենց համար ավելի արժեքավոր համարվող հմտությունների ձեռքբերումը: Բուհի ուսանողության շրջանում պրակտիկայի անցկացման վերաբերյալ հետազոտության արդյունքում կատարված վերլուծության համաձայն (տես՝ Հավելված 36. ԵՄԽՀ պրակտիկայի անցկացման վերաբերյալ վերլուծություն ուսանողների շրջանում)՝

*“… Պրակտիկայի վերաբերյալ ուսանողության շրջանում անցկացված հետազոտության արդյունքում ստացանք **մոնոտոն պատկեր**, այսինքն՝ ուսանողությունը պրակտիկայի վերաբերյալ ունի միանշանակ վերաբերմունք՝ այն է, որ պրակտիկան ուսումնական գործընթացում **կարևորագույն տարրն է** (տես՝ Հավելված 1, Գրաֆիկ 1), որը թույլ է տալիս իրականացնել իր ուսումնառության հիմնական նպատակը՝ **աշխատանքի ընդունվելը** (տես՝ “Բուհի գնահատումը ուսանողության կողմից” հարցման վերլուծությունը):*

*Ուսանողության մեծամասնությունը (62.07%) հիմնականում այո է պատասխանում անցկացրած **պրակտիկայի արդյունավետությանը** (տես՝ Հավելված 2, էջ 5), ինչը նշանակում է, որ ուսանողը ընդհանուր առմամբ **արդյունավետ է գնահատում** պրակտիկան տվյալ կազմակերպությունում: Ինչպես նաև (41.38%) մեծամասամբ այո է պատասխանում տվյալ կազմակերպությունում **նս մեկ անգամ** պրակտիկա անցնելու հարցին (տես՝Հավելված 2, էջ 7): Ի մի բերելով այս երկու հարցերի արդյունքները՝ կարելի է նշել, որ ուսանողության այս խումբը դեմ չէր լինի այլ կազմակերպությունում նս անցկացնել պրակտիկա:”*

Բուհում որոշ դասախոսների կողմից կիրառվում է ինտերակտիվ մեթոդը, որը հնարավորություն է տալիս ուսանողին ակտիվ մասնակցել դասին և ընդգրկվել քննարկումներում: Սակայն այդ մեթոդի ավելի շատ կիրառման կարիք կա՝ ըստ ուսանողների հետ ՈԱԿ հանդիպման և քննարկման արդյունքների:

Հաշվի առնելով ուսանողների հնչեցրած առաջարկությունը, բուհում որոշ մասնագիտական դասընթացների համար ներդրվեց դասախոսությունների փաթեթի

պատրաստումը դասախոսի կողմից: Այն նպաստեց այդ դասընթացների անցկացման գերիշխող դասախոսության մեթոդի զուգակցմանը ինտերակտիվ մեթոդներով, ինքնուրույն աշխատանքներով և քննարկումներով:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:	
Հիմքեր	**Ուսանողների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը** Հավելված 37. ԵՄԽՀ բակալավրի ուսանողների գիտելիքների գնահատման կարգ, Հավելված 38. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ Հավելված 39. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ Հավելված 40. ԵՄԽՀ Ուսանողի ուղեցույց **Ուսումնառության արդյունքներին համապատասխան սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները** Ներկայումս համալսարանում գնահատումը կատարվում է ըստ կրեդիտային համակարգում ուսանողների գնահատման սեփական կանոնակարգի, որի հիմքում ընկած է դասահաճախումների, ընթացիկ և հանրագումարային քննությունների գումարային արդյունքները: Ուսանողի ամփոփիչ գնահատումը կատարվում է 20 բալանոց համակարգով: Հավելված 41. ԵՄԽՀ քննական տեղեկագրի լրացման կարգ, Գնահատման այս համակարգի թերություններն ու առավելությունները ի հայտ բերելու և բարելավման համար այդ ուղղությամբ իրականացվել են հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: **Ակադեմիական ազնվության քաղաքականությունը, ընթացակարգերը, ինչպես նաև հիմքեր ապահովող փաստաթղթեր** Հավելված 37. ԵՄԽՀ բակալավրի ուսանողների գիտելիքների գնահատման կարգ, Հավելված 38. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ Հավելված 39. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ **Գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունը (առկայության դեպքում)** **Ուսումնառողների գնահատման քաղաքանության վերանայման հիմքերը և արդյունավետությունն ապահովող մեխանիզմները**

ՈԱԿ-ի կողմից ուսանողների ատեստացիայի կարգերը վերանայվել են 2013թ:

ՈԱԿ-ի կողմից վերանայվել է նաև բուհում գործող գնահատման կարգը՝ ներառելով գրագողության դեմ պայքարի վերաբերյալ կետեր (տես՝ Հավելված 37. ԵՄԽՀ բակալավրի ուսանողների գիտելիքների գնահատման կարգը (2.9 կետը)):

Գնահատման արդյունավետությունը գնահատելու համար բուհում իրականացվում են՝

- հարցումներ,
- ֆոկուս խմբեր,
- վիճակագրություններ,
- քննարկումներ

Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ

Հավելված 43. Ուսանողների և դասախոսների կողմից գնահատման արդյունավետության վերաբերյալ հարցման հետազոտությունների փաթեթ

Հավելված 114. ԵՄԽՀ վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննությունների ուսանողների գնահատականների մակարդակով առաջադիմության վիճակագրություններ:

Պատահական հիմունքներով ՈԱԱԿ-ի կողմից ընտրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները:

Տես կցված՝

Հավելված 44.1 ԵՄԽՀ «Ինֆորմատիկա և Կիրառական Մաթեմատիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:

Հավելված 44.2 ԵՄԽՀ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:

Հավելված 44.3 ԵՄԽՀ «Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:

Հավելված 44.4 ԵՄԽՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում 2013 թ-ին իրականացվել է բուհի գնահատման հետազոտություն ուսանող-ների և դասախոսների շրջանում առանձին-առանձին: Բացի ընդհանուր հարցերից հարցա-թերթիկներում անդրադարձ է կատարվել նաև ուսանողների գնահատմանը: Արդյունքում «Ինչպիսին է բուհում ուսանողների գնահատման համակարգի արդյունավետությունը» հարցին 0-ից 10 միավորներով գնահատման արդյունքում դասախոսների մոտ ստացվել է միջին գնահատականը՝ Mean: 8.190, իսկ ուսանողների մոտ՝ Mean: 8.393 (տես՝ բուհի գնահատման վերլուծությունները դասախոսների և ուսանողների մասով): Այնուհետև այդ արդյունքներն առավել հավաստի դարձնելու համար իրականացվեց ֆոկուս խմբեր

ուսանողների և դասախոսների շրջանում: Հետազոտության արդյունքները ներկայացվեցին ներքին շահակիցների հետ ՈԱԿ հանդիպման ժամանակ:

Արդյունքում պարզ դարձավ, որ անհրաժեշտություն կա առանձին հետազոտել հենց գնահատման համակարգի արդյունավետությունը: 2014թ վերջին ՈԱԿ-ը կատարեց առանձին հետազոտություն հարցման տեսքով՝ նվիրված կոնկրետ գնահատման արդյունավետությանը: Արդյունքներին կարող եք ծանոթանալ Հավելված 43. *Ուսանողների և դասախոսների կողմից գնահատման արդյունավետության վերաբերյալ հարցման հետազոտությունների փաթեթ* -ում:

2014թ-ին ՈԱԿ-ի կողմից իրականացվել են բուհում վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննությունների ուսանողների գնահատականների մակարդակով առաջադիմության վիճակագրություններ (տես՝ Հավելված 114.):

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

Հիմքեր	**Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների** Համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի տարանջատումը և կազմումը իրականացվում է առարկայական ծրագրերի պլանավորմանը համապատասխան, որոնցում հատուկ սահմանված են տեսական, գործնական, անհատական և ինքնուրույն պարապմունքների համար նախատեսված ժամաքանակներ՝ ՀՀ կառավարության “Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին” որոշմանը համապատասխան (“Բարձրագույն և միջին մասնագիտական կրթության պետական ընդհանուր չափորոշիչները հաստատելու մասին” ՀՀ Կառավարության որոշում, 16 հունվարի, 2001թ.): Հաշվի են առնվել նաև այլ բուհերի ուսումնական պլանները, ՀՀ պետական մասնագիտական կրթական չափորոշիչները: Առարկայական ծրագրերում յուրաքանչյուր տեսական, գործնական, անհատական և ինքնուրույն դասաժամերի համար մշակված և պլանավորված է հատուկ ժամանակացույց: Նախատեսված են գործնական և պրակտիկ պարապմունքներ տարբեր հաստատություններում, որոնք ստեղծում են համապատասխան հմտություններ գործնական ոլորտում աշխատելու համար: **Ուսումնառողի և շրջանավարտի կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները արտացոլող համապատասխան փաստաթուղթը (առկայության դեպքում)** Հավելված 45. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման), փոխադրման եվ վերականգնման կարգը, Հավելված 46. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման), փոխադրման եվ վերականգնման կարգը, Հավելված 47. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով սովորողների

ակադեմիական շարժունության կարգը,

Հավելված 48. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ակադեմիական շարժունության կարգը,

Հավելված 49. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ընդունելության կարգը

Հավելված 13. ԵՄԽՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը

Հաստատության ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու քաղաքականություն:

2010 թ. ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատվել է 080700 – “Միջազգային տնտեսական հարաբերություններ” մասնագիտությամբ պետական կրթական չափանիշները: Մ. Խորենացու անվ. համալսարանում տվյալ մասնագիտությամբ առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները լիարժեքորեն համապատասխանում են այդ չափանիշներին:

Հաստատության և տեղական կամ միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերի հետ համահունչություն ստեղծելու համար իրականացվում են դրանց վերաբերյալ ուսումնասիրություններ և վերլուծություններ: Մասնավորապես կրթական ծրագրերի մեծ մասի կազմման ժամանակ բուհն առաջնորդվել է ԵՊՀ-ի մասնագիտական կրթական ծրագրերով՝ համապատասխանեցնելով և տեղայնացնելով դրանք բուհի սեփական պահանջներին և առաքելությանը:

ԵՄԽՀ-ն, լինելով Հավատարմագրված Հայկական Բուհերի միության անդամ, համագործակցում է միության մյուս բոլոր անդամների հետ, որոնց ՄԿԾ-ների հետ համահունչությունը նույնպես հաշվի է առնվում:

Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորությունները պարզաբանող հիմքեր:

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Ուսանողների ներհոսք						
	Երկիր, հաստատություն	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	----------	---	---	---	---	---
Ուսանողների արտահոսք						
	Երկիր, հաստատություն	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	----------	---	---	---	---	---

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայնագրեր:

Դասավանդողների ներհոսք

	Երկիր , հաստատություն	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	----------	---	---	---	---	---

Դասավանդողների արտահոսք

	Երկիր ,հաստատություն	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	----------	---	---	---	---	---

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Բուհի ՄԿԾ-ների բովանդակային առումով հուսալի են, քանի որ ինչպես արդեն նշվել է, դրանք մշակվել և վերանայվել են ՀՀ այլ բուհերի համապատասխան ՄԿԾ-ների հետ համադրելով: Արտասահմանյան բուհերի հետ ուսանողների և դասախոսների շարժունություն մինչ օրս չի իրականացվել, քանի որ դեռևս չեն կնքվել համապատասխան համաձայնագրեր, և բուհը չի ներառվել նմանատիպ միջազգային ծրագրերի մեջ: ՀՀ տարածքում դասախոսների շարժունությունը իրականացվում է շնորհիվ այն բանի, որ բուհի հիմնական դասախոսներից շատերը համատեղությամբ աշխատում են նաև այլ բուհերում, և հակառակը՝ այլ բուհերից կան դասախոսներ, որոնք համատեղության կարգով դասավանդում են ԵՄԽՀ-ում: ԵՄԽՀ շրջանավարտներից շատերը իրենց ուսումը շարունակում են նաև այլ բուհերի մագիստրատուրայում՝ ԵՊՀ, ԵՊՄՀ, ՀՊՃՀ, ՀՀ ԳԱԱ և այլն: Այլ բուհերի շրջանավարտներ ևս ընդունվում են ԵՄԽՀ՝ երկրորդ մասնագիտություն ստանալու կամ մագիստրատուրայում ուսումը շարունակելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր	**Շահակիցների կարիքները հաշվի առնող ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման հաստատված քաղաքականությունը (առկայության դեպքում)** **Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության մեթոդները** ՄԿԾ-ների վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրության համար մշակված հարցաթերթիկներում դրան առնչվող հարցեր են ներառված: Բացի այդ կարիքների դուրսբերումը կատարվում է քննարկումների միջոցով: Տվյալ ՄԿԾ-ի ոլորտում տեղացի մասնագետների կարծիքի ստացման համար ՈԱԿ-ի կողմից մշակվել է ուսումնական պլանների վերաբերյալ հարցման ձևաչափ, որը թույլ կտա ստանալ արձագանք և վերանայել ուս.

պլանները:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները (կցել կամ հղում կատարել համապատասխան կանոնակարգին)

Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը (կցել կամ հղում կատարել համապատասխան փաստաթղթին)

Բուհում մշակված չէ ՄԿԾ-ների գնահատման, մշտադիտարկման և վերանայման կարգ (նախատեսվում է առաջիկայում):

ՄԿԾ-ների որակի ապահովման համար հաստատվել է քաղաքակա-նության և ընթացակարգի նախագիծ:

Հավելված 50. ԵՄԽՀ ՄԿԾ-ների որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ (նախագիծ)

Գործընթացների անաչառությունն երաշխավորող մեխանիզմները (հղում կատարել կամ կցել կանոնակարգը)

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

Չնայած այն բանի, որ բուհում մշակված չէ ՄԿԾ-ների գնահատման, մշտադիտարկման և վերանայման կարգ, նշված գործընթացներն իրականացվում են չամրագրված ընթացակարգով: Հաշվի են առնվում շահակիցների կարիքները մասնագի-տական կրթական ծրագրերի և ակնկալվող վերջնարդյունքների վերաբերյալ, որոնք ստացվում են համատեղ քննարկումների, հանդիպումների, սեմինարների և համաժողովների ժամանակ: Մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրությունը իրականացվում է՝ հիմնականում հիմք ընդունելով անցկացվող հարցումները: Համալսարանում նշված կարիքների ուսումնա-սիրությունն ու վերհանումը մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում: Հաշվի առնելով համալսարանի հետագա զարգացման ռազմավարական ծրագիրը և նախանշած նպատակները ԵՄԽՀ-ը նախատեսում է հստակեցնել և կանոնակարգել կարիքների և կարծիքների վերհանման և ուսումնասիրության գործընթացները:

Մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար վերանայվում են՝ համապատասխանեցվելով հայրենական հեղինակավոր բուհերի մասնագիտական կրթական ծրագրերին: Ինչպես նաև հաշվի են առնվում այն արտասահմանյան բուհերի կրթական ծրագրերը, որոնց հետ ԵՄԽՀ-ը համագործակցում է կամ նախատեսում է համագործակցել առաջիկայում:

Մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, բարելավման և մշտադիտարկման գործընթացները իրականացվել են բուհի ղեկավար օղակների կողմից: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների մասին են վկայում այս տարիների ընթացքում հղկված, կատարելագործված մասնագիտական կրթական ծրագրերը, որոնք մշակման օրվանից մինչ այսօր և այսուհետ ևս անցել և անցնում են բարելավման և ճշգրտման ուղիով, կենտրոնում ունենալով ուսանողության, պրոֆեսորադասախոսական և այլ շահակիցների կարիքներն ու օգտակար առաջարկները:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ ներքին և արտաքին շահակիցների կարիքների և պահանջների ուսումնասիրումն ու գնահատումը, ինչպես նաև

մասնագիտական արդի հիմնախնդիրների ուսումնասիրությունը, իրականացվել է նաև մասնակցություն ցուցաբերելով տեղական և միջազգային գիտաժողովներին և համաժողովներին:

Արդյունքում նոր ուսումնական պլաններով կրթական ծրագրերի հիմնական առավելությունը կայանում է նրանում, որ բավականին ժամաքանակ է հատկացվում գործնական, պրակտիկ և անհատական աշխատանքների իրականացմանը, ինչը խթանում է անհատական և խմբային աշխատանքային մեթոդները, ուսանողի մոտ զարգացնելով վերլուծական, քննադատական և ինքնուրույն մտածելակերպ:

Միևնույն ժամանակ բուհում առարկայական ծրագրերը և ուսումնական պլանները պարտադիր վերանայվում են առնվազն տարին մեկ անգամ, ինչպես նաև դրանք ներկայացվում են տվյալ մասնագիտությամբ ճանաչված մասնագետների դիտարկմանը և այդ հարցերով զբաղվող այլ բուհի ներկայացուցիչներին: Հաշվի են առնվում բոլոր առաջարկությունները և դիտողությունները, ներկայացվում են ֆակուլտետներում և ամբիոններում, քննարկվում և այնուհետև վերջնական տեսքի են բերվում գիտ. խորհրդի նիստերի քննարկումների արդյունքում: Նշված գործընթացները բուհում համակարգում է վերահսկողական խումբը:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Ելնելով վերջին 5 տարիներին բուհի գործունեության վրա ազդող գործոններից *(տես Չափանիշ II, Չափորոշիչ դ՝ ա), բ), գ) կետերը)* 2012թ.-ին բուհում ֆունդամենտալ ձևով վերանայվեցին գործող ուսումնական պլանները և կատարվեցին սահուն և շատ կարևոր փոփոխություններ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցումը կազմակերպել առավել արդյունավետ ձևով, ինչպես նաև մեծացնել ուսանողի ակադեմիական ազատությունը, շարժունությունը, խթանել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին տեղափոխմանը՝ թե բուհից բուհ, թե մասնագիտությունից մասնագիտություն և թե ուսուցման մեկ ձևից (առկա, հեռակա) այլ ձևի տեղափոխման դեպքում:

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհի հաստատած մասնագիտական կրթական ծրագրերը համապատասխանում են առաքելությանը, նպատակներին և կրթական վերջնարդյունքներին	Ուսանողների և դասախոսների շարժունություն ապահովող համաձայնագրերի բացակայությունը
Հայաստանյան համանման ՄԿԾ-ների հետ համահունչություն և համադրելիություն	ՄԿԾ-ների գնահատման, մշտադիտարկման և վերանայման կարգի բացակայություն
ՄԿԾ-ների վերանայումներ և թարմացումներ, ուսումնական պլանի կառուցվածքի կատարելագործում	Աշխատաշուկայի պահանջների ոչ պատշաճ արտացոլում ՄԿԾ-ների մշակման ժամանակ
	Դասավանդման ավանդական մեթոդների գերակայությունը

ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
Պետության կողմից հաստատված ՈԱՇ-ը և որոշ ՄԿԾ-ների պետական կրթական չափորոշիչներ	Դեռևս բոլոր ՄԿԾ-ների համար չկան հաստատված պետական կրթական չափորոշիչներ,
ՈԱԱԿ-ի կողմից տրվող խորհրդատվություններ ՄԿԾ-ների արդյունավետ կազմման և իրականացման հետ կապված	ՀՀ ՈԱՇ-ի բնութագրերի ընդհանրական լինելը, ինչը հնարավորություն չի տալիս հստակ համադրելի դարձնել ՄԿԾ-ներին: Որակավորումների սեկտորալ շրջանակների մշակման հապաղումը:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- միջազգային համագործակցության շրջանակներում ստեղծել հիմքեր ուսանողների և դասախոսների շարժունության իրականացման համար,
- ՄԿԾ-ների գնահատման, մշտադիտարկման և վերանայման կարգի մշակում և գործընթացների կանոնակարգում,
- Աշխատաշուկայի պահանջների վերլուծության իրականացում և արդյունքների կիրառում ՄԿԾ-ների մշակման ժամանակ,
- Դասավանդման նորարարական մեթոդների խրախուսում:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:	
Հիմքեր	**Ուսանողների հավաքագրման (մասնագիտական կողմնորոշման) քաղաքականությունը և ընթացակարգերը** ԵՄԽՀ-ում ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման համար իրականացվում են հետևյալ մեխանիզմները՝ • ԶԼՄ-ների միջոցով տրվող հայտարարություններ, • Թերթերում և ամսագրերում տպագրվող նյութեր, • Համալսարանում տրամադրվող անհատական, խորհրդատվա-կան ծառայություններ, • Դիմորդների հետ կազմակերպվող հանդիպումներ դպրոցներում և համալսարանում: **Ուսանողների ընդունելության անցկացման քաղաքականությունը և ընթացակարգերը** Հավելված 51. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների ընդունելության կարգ Հավելված 49. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների

ընդունելության կարգ

Ընդունելության արդարությունը և թափանցիկությունն ապահովող ընթացակարգերը և հիմքերը

Ընդունելության արդարությունն ու թափանցիկությունը ապահովվում են համաձայն վերը նշված կարգերի:

2012թ ՀՀ ԿԳՆ կողմից հաստատված միասնական ընդունելության կարգի համաձայն ընդունելության արդարության և թափանցիկության պատասխանատուն նաև ԿԳՆ-ն է: ՀՀ պետական և ոչ պետական բուհերում ուսանողների ընդունելության արդարությունն ու թափանցիկությունը ապահովող ընթացակարգերը արձանագրված են «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգեր»-ում /Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը (ըստ բակալավրի ծրագրի) միասնական քննությունների կազմակերպման, անցկացման և բողոքարկման բաժնում/:

Բացի այդ ընդունելության թափանցիկությունն ու արդարությունը երաշխավորվում են բուհի ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր մասնագիտության կրթական ծրագրում ընդգրկված ուսանողների թիվը (բերված է ստորև աղյուսակում):

Որպես կարևոր ցուցանիշ նշենք, որ բուհում բավականին մեծ թիվ են կազմում սփյուռքահայ ուսանողները՝ թվով 141 ուսանող, որոնցից 90%-ից ավելին Ջավախքից են:

Ընդունելության արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների համար:

Ընդունելության առնչվող հարցեր են ներառվել բուհում ուսանողների և դասախոսների հարցման ժամանակ, որի արդյունքում դուրս է բերվել ընդունելության վերաբերյալ պատկեր:

Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ:

Բարելավմանն ուղղված ծրագրեր

Որպես բարելավմանն ուղղված ծրագրեր, ԵՄԽՀ-ն նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

- Ուսանողների հավաքագրման և ընդունելության համար նոր մեխանիզմների մշակում և ներդրում,
- Համալսարանի վերաբերյալ տեղեկատվության և անհրաժեշտ ինֆորմացիայի տարածման եղանակների կատարելագործում,
- Հավաքագրման և ընդունելության վերաբերյալ ուսանողների կարծիքների վերհանման եղանակների մշակում:

Ուսումնական հաստատությունում ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի:

Ուսանողների թիվը		*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
Բակալավրի	առկա	551	588	420	369	322
	հեռակա	181	291	304	331	406
Մագիստրոսի	առկա	12	18	35	38	31

Ուսումնառողների շարժունությունը

Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով

Ուսանողների արտահոսք

	Հաստատություն/երկիր	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	ՀՀ այլ բուհեր	3	1	4	2	3

Ուսանողների ներհոսք

	Հաստատություն/երկիր	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
	ՀՀ այլ բուհեր և միջին մասնագիտական հաստատություններ	52	65	44	57	24

Հեռացումներ և վերականգնումներ

	Ուսանողների թիվ	*2010*	*2011*	*2012*	*2013*	*2014*
1.	Դուրս մնացած ուսանողների տոկոսը/ թիվը	59 7.93%	4 0.45%	74 9.75%	29 3.93%	8 1.05%
2.	Տարկետում ստացած ուսանողների տոկոսը/թիվը	52 6.99%	60 6.69%	46 6.06%	12 1.63%	3 0.4%
3.	Վերականգնված ուսանողների տոկոսը/թիվը	29 3.9%	30 3.34%	30 3.95%	11 1.49%	34 4.48%

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների ընդունելության և մրցույթի անցկացման քաղաքականությունն ու ընթացակարգերը համալսարանում պարբերաբար վերանայվում են: Դա են վկայում բուհում ներկայումս գործող ընդունելության կարգերը, որոնք մշակվել են նախորդ կարգերի վերանայման և հստակեցման արդյունքում 2012թ.:

Որպես ընդունելության արդյունավետությունն արտահայտող հիմնական ցուցանիշ կարելի է նշել ԵՄԽՀ-ի մինչև 2011թ ուսանողության անընդհատ աճող թվաքանակը, իսկ 2011-14թթ ուսանողների համեմատաբար կայուն թվաքանակը: Դրան նպաստում են բուհի արդյունավետ աշխատանքը, ուսանողության հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման կազմակերպման արդյունավետ գործընթացները, որոնց հիմքում ընկած է անաչառ և ազնիվ աշխատանքն ու գործելաոճը:

Ընդունելության արդյունավետության վերաբերյալ բոլոր կարծիքներն ու առաջարկությունները սիրով ընդունվում և քննարկվում են համալսարանի ղեկավար անձնակազմի կողմից: Այս հարցերի շուրջ ուսանողների կարծիքը և առաջարկությունները հաշվի առնելու նպատակով համալսարանում անց են կացվում հարցումներ: Մասնավորապես, ուսանողների և դասախոսների կողմից բուհի գնահատման 20.12.2013թ առանձին և համեմատական վերլուծության համաձայն՝ *"...Բուհում ներքին ընդունելության քննությունների վերաբերյալ ստացված արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից ընդհանուր առմամբ համադրելի են և ընդունելության քննությունները գնահատվում են **նորմալ** (Average=3,8): Սակայն հարկ է նշել, որ դասախոսները ընդունելության քննությունների մակարդակը ավելի ցածր են գնահատում, քան ուսանողները: Դա պայմանավորված է ընդունելության քննությունների **թափանցիկության** մակարդակի գնահատումից: Կարող ենք եզրակացնել, որ դասախոսները ավելի քաջատեղյակ են ընդունելության քննության կազմակերպման գործընթացին, որի արդյունքում մտածում են, որ թափանցիկության մակարդակը բարձրացնելու ավելի շատ կարիք կա, քան ուսանողի կարծիքով:"*

Ուսանողների շրջանում հարցումների հիման վրա բուհի կառավարման մարմինների կողմից ներբուհական ընդունելության քննությունների ընթացակարգերը մշտապես գտնվում են վերանայման փուլում: Մասնավորապես թափանցիկության մակարդակի բարձրացման նպատակով դիմորդների ծնողներին հնարավորություն է ընձեռնվում ներկա գտնվել քննության ընթացքի և գնահատման ժամանակ:

ԵՄԽՀ-ը ամեն տարի իրականացնում է ընդունելության նոր արդյունավետ եղանակների և մոտեցումների մշակում և քննարկում: Մասնավորապես, ընդունելության եղանակների բարելավում և նորամուծություն կարելի է համարել համացանցի կիրառումը ուսանողների հավաքագրման և համալսարանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն տարածելու համար: Դրան մեծապես նպաստում են նաև ԵՄԽՀ-ի էլեկտրոնային կայքի շարունակական բարելավումներն ու թարմացումները:

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել տվյալ խնդիրների լուծման տարբերակները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանից ուսումնառողների հեռացման հիմնական պատճառներն են՝

- Զինծառայություն,
- Ակադեմիական անհամապատասխանություն, ցածր առաջադիմություն,
- Ֆինանսական անապահովվածություն:

Նշենք, որ հեռացման պատճառների զգալի մասն է կազմում զինծառայությունը, քանի որ բուհն իր ուսուցումը կազմակերպում է առանց տարկետման իրավունքի: Սակայն հավելենք նաև, որ բանակ զորակոչվածների մեծամասնությունը ծառայությունից հետո վերականգնում է իր իրավունքները համալսարանում ուսումը շարունակելու համար:

Համալսարանում ուսումնառողների վերականգնման հիմնական պատճառներն են՝

- Զորացրում,
- Նյութական պայմանների բարելավում,
- Ուսման հանդեպ հետաքրքրության բացահայտում:

Նշենք, որ բուհում ուսանողների հեռացման, վերականգնման և փոխադրման գործընթացների իրականացման կանոնակարգման նպատակով 2012թ մշակվել են՝

- ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման), փոխադրման եվ վերականգնման կարգը,
- ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման),

	փոխադրման եվ վերականգնման կարգը
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	**Ուսանողների կարիքների վերհանման քաղաքականությունը և ընթացակարգերը** Բուհն ուսանողների կարիքների վերհանումն իրականացնում է հետևյալ մեխանիզմներով՝ • բուհում գործող խորհուրդներում նրանց ներգրավ-վածությամբ, • ղեկավար կազմի և ուսանողների անմիջական հանդիպումների միջոցով, • ուս. խորհրդի և ուս. գիտական ընկերության գործունեության միջոցով, • ՈԱԿ-ում պարբերաբար կազմակերպվող խմբային քննարկումների միջոցով, • սոց. հարցումներ տարբեր թեմաներով, • ֆոկուս խմբեր, • հետազոտությունների վերլուծություններ: **Վերհանված կարիքները փաստող հիմքերը և վերջին 3 տարիների վերլուծությունները** Վերհանված կարիքները փաստող հիմքեր կարելի է համարել՝ • Կառավարման խորհրդի և գիտ. խորհրդի նիստերի արձանագրությունները: Հավելված 52. ԵՄԽՀ կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ Հավելված 53. ԵՄԽՀ գիտ. խորհրդի նիստերի արձանագրություններ • Ուսանողության շրջանում անցկացված սոց. հարցումների վերաբերյալ հարցաթերթիկները, ֆոկուս խմբի արձանագրությունը, քննարկման արձանա-գրությունները, կատարված վերլուծությունները՝ Հավելված 54. Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրս բերման նպատակով ֆոկուս խմբի վերլուծություն, Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ, Հավելված 36. ԵՄԽՀ պրակտիկայի անցկացման վերաբերյալ վերլուծություն ուսանողների շրջանում, Հավելված 55. Բուհի գնահատման սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ պրեզենտացիայի հետադարձ կապի վերլուծություն Հավելված 56. Որակի ապահովման թեմայով ուսանողների հետ սեմինար - հանդիպման արձանագրություն

	• Ուսանողական խորհուրդի և ուսանողական գիտական ընկերության կանոնադրությունները և նրանցում ուսանողության կարիքների վերաբերյալ առկա կետերը, • Մասնագիտական կրթական ծրագրերի վերանայումն ու ճշգրտումը հաշվի առնելով ուսումնառողների վերհանված կարիքներն ու պահանջմունքները: **Վերհանված խնդիրների լուծումները և նրանց արտահայտումը ՄՈՒՀ-ի քաղաքականության մեջ** ԵՄԽՀ-ը մշտապես վերանայում է իր քաղաքականությունը ուսանողների կարիքներին և ժամանակակից պահանջներին համապատասխան: Ուսանողների կարիքների վերհանման շնորհիվ ի հայտ եկած խնդիրների և պահանջների բավարարման ուղղությամբ իրականացվել են հետևյալ քայլերը՝ • Անցկացված հարցումների և փոխադարձ հանդիպումների հիման վրա մասնագիտական կրթական ծրագրերի վերանայում, պետական քննական հարցաշարերի ճշգրտում, • Ուսանողների հարցումների և կարծիքների հիման վրա դասախոսական կազմի աշխատանքի վերահսկման հետ կապված միջոցառումների իրականացում, • Ուսանողների միջբուհական հանդիպումների կազմակերպում, փոխադարձ կապերի հաստատման, ամրապնդման և միջբուհական համատեղ միջոցառումների իրականացման համար, • Ուսումնական պլանների վերանայում ժամանակակից պահանջներին համապատասխան, • Ուսանողների իրավունքների պաշտպանության համար առանձին պատասխանատու մարմնի նշանակում, • Բոլոնյան գործընթացներում ուսանողների ներգրավվածության և տեղեկատվության բարձրացման համար 2008-09 ուս. տարում Մ. Խորենացու անվան համալսարանում մի քանի անգամ կազմակերպվեցին սեմինարներ ուսանողների և դասախոսների համար Բոլոնիայի գործընթացի, դրանց իրականացման մեխանիզմների, գնահատման համակարգի, առավելությունների և առաջացող դժվարությունների վերաբերյալ: Այնուհետև հաջորդ ուս. տարիներին տարեկան երկու անգամ իրականացվում են տեղեկատվական սեմինարներ, ինչպես նաև, դրանք դասախոսներին և ուսանողներին բաժանվում են համապատասխան հիշեցումների տեսքով, • Ներկայումս քննարկման փուլում է գտնվում աշխատաշուկայի առավել պահանջարկ վայելող կրթական կարիքների հետ կապված լրացուցիչ դասաժամերի և պարապմունքների անցկացումը:
Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ	

մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մինչ ՈԱԿ-ի ստեղծումը բուհում ուսանողների կարիքների վերհանման աշխատանքները իրականացվում էին բուհի ղեկավար կազմի և ռեկտորատի կողմից, ուս. խարհուրդի և ուս. գիտական ընկերության կողմից: Համեմատաբար պասիվ էր կառավարման խորհրդում և գիտ. խորհրդում ներգրավված ուսանողների կողմից կարիքների վերհանման մեխանիզմը: Ինչը, ըստ երևույթին, հետևանք էր սեփական իրավունքների իմացության պակասի:ՈԱԿ-ի ստեղծումով այդ գործընթացները առավել հստակեցվեցին և համակարգվեցին: Այսպես, ՈԱԿ-ի կողմից պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ և խմբային քննարկումներ ուսանողների հետ, որոնք վեր են հանում նրանց հիմնական կարիքներն ու առաջարկությունները: Կարելի է ասել, որ արդյունավետ են գործում հարցման մեխանիզմները, անանուն առաջարկությունների և դիտողությունների ստացման շնորհիվ: Հետաքրքիր պատկեր ստավեց նաև ֆոկուս խմբի կազմակերպման ժամանակ: Սեփական իրավունքների և պարտականությունների իրազեկման բարձրացման նպատակով ՈԱԿ-ը մշակեց համապատասխան բուկլետներ, որոնք բաժանվեցին ուսանողների շրջանում: Արդյունքում ներկայումս առավել ակտիվացում ենք նկատում ուսանողների շրջանում: ՈԱԿ-ի հետ ստեղծված վստահության մթնոլորտի շնորհիվ, հարցաթերթերի լրացումը դարձել է ավելի օբյեկտիվ: Նշել են բուհի մի շարք թերություններ և բացթողումներ (տես՝ նկարագրված վերը նշված վերլուծություններում):

Չնայած այս ամենին, դեռ բավականին աշխատանք կա կատարելու՝ ուսանողների մոտիվացիայի բարձրացման և նրանց կարիքների բարձրաձայնման ուղղությամբ: Այդ նպատակով շարունակվում են աշխատանքները բուհում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Հիմքեր

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը

Ուսանողների ընդունելության և հետագա ուսումնառության ընթացքում համալսարանը մշտապես տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն ուսման գործընթացի տարաբնույթ հարցերի շուրջ, ինչը հնարավորություն է ընձեռում մասնագիտական կողմնորոշում ստանալ բոլոր այն ուսանողներին, ովքեր լիարժեք պատկերացում չունեն իրենց ընտրած մասնագիտության մասին և համապատասխան որոշում կայացնել հետագա ուսման վերաբերյալ:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներն ու աշխատանքները նպատակ են հետապնդում ուսանողների շրջանում՝

- տեղեկատվության մակարդակի բարձրացում,
- բոլոր տեսակի հուզող հարցերին սպառիչ պատասխանների տրամադրում,
- համալսարանի աշխատանքներին և կայացրած որոշումների ընդունմանը ուսանողության առավել լայն շերտերի ներգրավում,
- սեփական իրավունքների և պարտականությունների շուրջ իրազեկության բարձրացում,
- ուսանողների հետ փոխադարձ կապերի հաստատում և ամրապնդում,

- կոնկրետ առարկայական ծրագրերի և անհրաժեշտ նյութերի հայթայթման վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների ստացում:

ՈԱԿ-ի ստեղծումով առավել ակտիվացել են որակի ապահովման ոլորտում իրականացվող խորհրդատվական աշխատանքները:

Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը

Բուհը նախատեսում է հետազոտություն իրականացնել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կարիքների ուղղությամբ և մշակել համապատասխան ծրագիր: Մասնավորապես 20.12.2014թ-ի ռեկտորի հրամանով *"...Ուսանողների շրջանում տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով, ինչպես նաև նրանց հուզող հարցերին սպառիչ պատասխաններ տրամադրելու, համալսարանում կայացված որոշումներին ուսանողության ծանոթացման, փոխադարձ կապի ամրապնդման և բոլոր տեսակի այլ հարցերին պատասխանելու նպատակով"* 2015թ-ից անցակցվելու են լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ ուսանողների համար՝ համաձայն սահմանված ժամանակացույցի և գրաֆիկի:

Հավելված 57. ԵՄԽՀ ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ անցկացնելու ռեկտորի հրամանը

Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը

Հավելված 58. ԵՄԽՀ ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ անցկացնելու ժամանակացույցը:

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	52 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	23 %
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	17 %

Հետևյալ հարցերին պատասխանել այո կամ ոչ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվու՞մ են խորհրդատուներ:	V	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվու՞մ է:		

Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը

/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար համալսարանը տրամադրում է լրացուցիչ խորհրդատվություն անհատական հանդիպումների, քննարկումների և բացատրական աշխատանքների միջոցով, որոնք իրականացվում են՝

- բուհի վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի կողմից

- ակտիվ գործող ուս. խորհրդի և ուսանողական գիտ. ընկերության կողմից

- համալսարանում գործող ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատուի կողմից

- ՈԱԿ-ի կողմից:

Ներկայումս ուսանողության հետ պարբերաբար իրականացվում են սեմինարներ և խորհրդատվական քննարկումներ նորաստեղծ որակի ապահովման կենտրոնի կողմից, որոնք էապես բարձրացնում են ուսանողության տեղեկատվության մակարդակը:

Ուսումնառության ընթացքում մասնագիտական լրացուցիչ խորհրդատվությունները հիմնականում իրականացվում են դասախոսների հայեցողությամբ՝ իրենց ազատ ժամանակի հաշվին:

Համալսարանի ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները վկայում են այն մասին, որ ուսանողների մեծամասնությունը կարևորում է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների դերն ու նշանակությունը: Ընդ որում հարկ է նշել, որ ուսանողները իրենց հուզող լրացուցիչ տեղեկատվության համար առաջնայնությունը տալիս են համացանցին (տես ստորև աղյուսակը).

Լրացուցիչ տեղեկատվության համար	*տոկոս*
Փնտրում են համացանցում	50%
Հարցնում են համակուրսեցիներից	25%
Հարցնում են դասախոսներից	10%
Օգտվում են համալսարանի լրացուցիչ գրականությունից	15%

ԵՄԽՀ-ը կարևորելով խնդրի լրջությունն ու անհրաժեշտությունը, 2015թ-ից անցկացնելու է հստակ ընթացակարգ՝ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների կազմակերպման և անցկացման համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Հիմքեր	**Ուսումնառողներին՝ վարչական կազմի կողմից հավելյալ օժանդակման և ուղղորդման կանոնակարգը** Ուսանողներին համակարգված և կանոնակարգված աջակցություն և օժանդակություն ցուցաբերելու նպատակով ԵՄԽՀ-ն նախատեսում է հիմնել համապատասխան ստորաբաժանում՝ ուսումնառողների օժանդակության և ուղղորդման կենտրոն:

	Բուհի վարչական կազմի (նաև անձամբ ռեկտորի) կողմից իրականացվում են ամենօրյա հանդիպումներ այն ուսանողների հետ, որոնք ունեն որևէ խնդրահարույց հարցի պատասխան գտնելու և ուղղորդման կարիք: **Համապատասխան ժամանակացույցեր** Վարչական կազմի հետ հանդիպումները իրականացվում են առանց ժամանակային սահմանափակման: Աշխատանքային ցանկացած ժամին ուսանողը կարող է ստանալ իրեն հուզող հարցերի պատասխանը վարչական կազմի կողմից:

Պատասխանել հետևյալ հարցին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	54
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	35
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	28

Վերլուծել լրացուցիչ վարչական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներկայիս կրթական համակարգի պահանջներից բխում է, որ ուսանողը ցանկացած պահի կարողանա դիմել խորհրդատուի՝ անհրաժեշտ աջակցություն և իրեն հուզող հարցերի պատասխանները ստանալու ակնկալիքով:

Համալսարանում ստեղծված է վարչական աշխատակազմի և ուսանողության միջև փոխադարձ սերտ կապ, ինչը նպաստում է հնարավոր օժանդակության և ուղղորդման արագ և արդյունավետ տրամադրմանը:

Ուսանողը աշխատանքային բոլոր ժամերին ցանկացած հարցով կարող է դիմել համալսարանի վարչական աշխատակազմին, ընդհուպ մինչև ռեկտորին, իրեն հուզող հարցին վերջնական և սպառիչ պատասխան և խորհրդատվություն ստանալու համար:

Վարչական աշխատակազմի գործունեության հետ միասին, ուսանողության ուղղորդման և խորհրդատվական աշխատանքներին նպաստում են նաև համալսարանի ուս. խորհուրդը և որակի ապահովման կենտրոնը:

Ընդունված մեխանիզմներն արդյունավետ են, քանի որ ուսանողին հնարավորություն են տալիս արագ արձագանք ստանալ իրեն հուզող հարցի վերաբերյալ:

Բուհի գնահատման համար կատարված հարցման վերլուծությունը ցույց տվեց, որ՝ *“...Բուհում թե՛ դասախոսը (76%), թե՛ ուսանողը (53%) կարողանում է սպառիչ կերպով ստանալ պատասխան իրեն հուզող հարցերին (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 4 և Հավելված 1, Գրաֆիկ 10): Միևնույն ժամանակ իրենց կարծիքը և առաջարկությունները հաշվի են առնվում բուհի կողմից (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 5 (դասախոսների 51%) և Հավելված 1, Գրաֆիկ 12 (ուսանողների 61%)): Կարող ենք եզրակացնել, որ բուհը տեղեկատվության առումով* ***բաց և թափանցիկ*** *է:*

Թե՛ դասախոսը, թե՛ ուսանողը իրեն ***իրավական առումով պաշտպանված*** *է զգում բուհում, քանի որ դասախոսների 83%-ը և ուսանողների 72%-ը այդ հարցին հիմնականում այո*

են պատասխանում (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 6 և Հավելված 1, Գրաֆիկ 13):”

Ըստ այդմ կարելի է փաստել, որ բուհում վարչական կազմի կողմից տրվող խորհրդատվություն ու տեղեկատվությունը որոշ չափով արդյունավետ է:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	**Ուսումնառողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերը** Հավելված 13. ԵՄԽՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը, Հավելված 27. ԵՄԽՀ պրակտիկայի բաժնի կանոնակարգը, **Այդ գործընթացներն իրականացնող ենթակառուցվածքը և դրա գործառույթները** Հավելված 13. ԵՄԽՀ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին:	47
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	33
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից:	28

Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հանրապետության աշխատաշուկայի ներկայիս բարդ համակարգում երիտասարդ մասնագետների կողմնորոշման, շրջանավարտների մրցունակության բարձրացման և ուսանողների կարիերային նպաստելու խնդիրների լուծմանն է ուղղված համալսարանի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը:

Կենտրոնի հիմնական նպատակն է շրջանավարտների հետագա կարիերայի հետ կապված կարիքների վերհանումը, որոնց հիման վրա կրթական ծրագրերում և բուհի գործունեության ոլորտում հնարավոր փոփոխություններ և բարեփոխումներ իրականացնելը:

Կենտրոնի հիմնախնդիրներից է նաև կրթական գործընթացներում մասնագիտական ոլորտի գործատուների՝ որպես շահակցի, դերի և միջամտության մեծացումը, կարծիքների ուսումնասիրությունը և կարիքների բացահայտումը: Բացի այդ իրականացվում է նաև ուսանողներին մասնագիտական կողմնորոշման, անհրաժեշտ խորհրդատվության և տեղեկատվության տրամադրում ինչպես ողջ ուսումնառության ընթացքում, այնպես էլ բուհն ավարտելուց հետո:

Կենտրոնի գործունեության բարելավման ուղղությամբ բուհի ՈԱԿ-ի հետ համատեղ կենտրոնը 29.11.2013թ իրականացրել է շրջանավարտների խմբի օնլայն հարցում և համապատասխան վերլուծություն: Դուրս են բերվել շրջանավարտների կողմից նկատված աշխատաշուկայում մասնագիտական պահանջների պատկերը: ՈԱԿ-ի կողմից 21.08.2014թ իրականացվել է շրջանավարտների խմբային քննարկում և թրեյնինգ, որը նվիրված էր աշխատաշուկայում համապատասխան աշխատանք գտնելու հիմնահարցերին: ՈԱԿ-ի կողմից

խորհրդատվություն իրականացվեց նաև CV-ների արդյունավետ կազմման հետ կապված:

Կարիերային նպաստում են նաև բուհի պրակտիկայի բաժնի գործունեությունը և ուսանողների անցկացրած պրակտիկաները: Այս ուղղությամբ իրականացվել են հետազոտություններ: Այսպես, ուսանողների շրջանում հարցումների միջոցով պրակտիկայի անցկացման վերաբերյալ վերլուծության համաձայն (տես՝ Հավելված 36)՝

*"...ուսանողությունը պրակտիկայի վերաբերյալ ունի միանշանակ վերաբերմունք՝ այն է, որ պրակտիկան ուսումնական գործընթացում **կարևորագույն տարրն է** (տես՝ Հավելված 1, Գրաֆիկ 1), որը թույլ է տալիս իրականացնել իր ուսումնառության հիմնական նպատակը՝ **աշխատանքի ընդունվելը** (տես՝ "Բուհի գնահատումը ուսանողության կողմից" հարցման վերլուծությունը):*

*Ուսանողության մեծամասնությունը (62.07%) հիմնականում այո է պատասխանում անցկացրած **պրակտիկայի արդյունավետությանը** (տես՝ Հավելված 2, էջ 5), ինչը նշանակում է, որ ուսանողը ընդհանուր առմամբ **արդյունավետ է գնահատում** պրակտիկան տվյալ կազմակերպությունում: Ինչպես նաև (41.38%) մեծամասամբ այո է պատասխանում տվյալ կազմակերպությունում **ևս մեկ անգամ** պրակտիկա անցնելու հարցին (տես՝ Հավելված 2, էջ 7): Ի մի բերելով այս երկու հարցերի արդյունքները՝ կարելի է նշել, որ ուսանողության այս խումբը դեմ չէր լինի այլ կազմակերպությունում ևս անցկացնել պրակտիկա:"*

2014թ. մայիսի 15, 16-ին Երևանի պետական համալսարանում կազմակերպվել էր միջազգային EURASHE համաժողովը՝ նվիրված համալսարանների շրջանավարտների զբաղվածության ու աշխատաշուկայի կարիքների վերհանմանը: Այդ համաժողովին իր զեկույցով հանդես եկավ նաև ԵՄԽՀ ռեկտոր Ա. Աղաբաբյանը, և ներկայացրեց իր վերլուծությունը աշխատաշուկայի պահանջների ձևավորման և շրջանավարտների մասնագիտական հմտությունների վերաբերյալ (Հավելված 59. ԵՄԽՀ ռեկտորի զեկույցը EURASHE համաժողովի ժամանակ):

Չնայած իրականացված միջոցառումներին, հարկ է նշել, որ շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքները դեռևս չեն ընթանում պլանավորված արդյունավետությամբ: Դա պայմանավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով: Անհրաժեշտություն կա ստեղծելու բուհի շրջանավարտների բազա, և կատարել հետազոտություններ ավելի շատ մասնակիցների ներգրվմամբ: Բուհն այս ուղղությամբ կարևորում է կենտրոնի գործունեության խթանումը և առաջիկայում դրան միտված քայլեր է ձեռնարկելու:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Հիմքեր	**ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը** Հավելված 15. ԵՄԽՀ ուս. գիտ. ընկերության կանոնադրությունը

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2010	2011	2012	2013	2014
	Բակալավր	---	---	---	---	---

	Մագիստրոս	---	---	---	---	---
Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների						
	Գիտահետազոտական ծրագիր	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2014**
	----------	---	---	---	---	---
Ուսումնառողների հեղինակությանբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը						
	Տպագրված աշխատանք	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2014**
	----------	---	---	---	---	---

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանը զբաղվում է գիտամանկավաժական, գիտամեթոդական գործունեությամբ՝ ներգրավելով ուսանողներին:

Համալսարանը մշտապես աջակցում և խրախուսում է ուսանողության շրջանում գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը: Բուհում գործում է ուսանողական գիտական ընկերություն, որը համագործակցելով ամբիոնների հետ, իրականացնում է գիտական, ստեղծագործական գործունեություն:

Ուսումնառողները ներգրավված են ԵՄԽՀ-ի գիտական և գիտամեթոդական աշխատանքներում հետևյալ կերպ՝

- կուրսային աշխատանքներ

- ավարտական աշխատանքների պաշտպանություն

- մագիստրոսական թեզերի պաշտպանություն

- գիտաժողովների, կոնֆերանսների մասնակցություն, զեկույցների ներկայացում

- բուհի հետ ուսումնաարտադրական պրակտիկայի պայմանագրեր կնքած հաստատություններում գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվածություն

- պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքներում մասնակցություն և ներգրավվածություն:

Համալսարանում իրականացվող հետազոտական աշխատանքներում հաշվի են առնվում ներգրավված ուսանողների հետաքրքրությունները՝ հնարավորություն տալով առաջարկելու նաև հետազոտության իրենց նախընտրած ուղղվածությունը: Հետազոտական աշխատանքներում իրենց մասնակցությունն են ցուցաբերում հիմնականում մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողները:

Չնայած այս ամենին, հարկ է նշել, որ ԵՄԽՀ-ում դանդաղում է գիտական, նորարարական գործունեության ամբողջացումն ու համալիր դաշտի ստեղծումը: Գիտական հետազոտական աշխատանքները ընթանում են դանդաղ տեմպով, ըստ այդմ էլ ներգրավված ուսանողները մեծաքանակ չեն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:	
Հիմքեր	**Ուսումնառողների իրավունքները արտացոլող փաստաթուղթը** Հավելված 17. ԵՄԽՀ անձնակազմի (այդ թվում՝ ուսանողների և դասախոսների) իրավական պաշտպանի կանոնադրությունը, **Ուսանողական խորհրդի կանոնադրությունը** Հավելված 14. ԵՄԽՀ ուսանողական խորհրդի կանոնադրությունը **Ուսումնառողների իրավունքներով, բողոքներով և բողոքարկումներով զբաղվող ենթակառուցվածքի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը** Հավելված 17. ԵՄԽՀ անձնակազմի (այդ թվում՝ ուսանողների և դասախոսների) իրավական պաշտպանի կանոնադրությունը, Հավելված 18. ԵՄԽՀ ուսանողների կողմից դիմում-բողոքներիներկայացման, քննարկման և որոշումներ կայացնելու կարգը, **Վերջին 5 տարիների ընթացքում ուսանողների բողոքների և այդ խնդիրների լուծման վիճակագրական տվյալները և համապատասխան հիմքերը**

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների որ տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:	65
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:	54
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:	51

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի անձնակազմի իրավունքների պատասխանատու մարմինը՝ իրավունքների պաշտպանը, ներկայացնում է ուսանողների խնդիրները և իրավունքները բուհի կառավարման տարբեր ենթակառուցվածքներում:

Բացի այդ, ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվում է նաև ուս. խորհուրդը, որը գործում է պատախանատու անձի հետ սերտ համագործակցված:

Համաձայն բուհի գնահատման վերլուծության (Հավելված 42.)

*“... Թե՛ դասախոսը, թե՛ ուսանողը իրեն **իրավական առումով պաշտպանված** է զգում բուհում, քանի որ դասախոսների 83%-ը և ուսանողների 72%-ը այդ հարցին <u>հիմնականում այո</u> են պատասխանում (տես՝Հավելված 1՛, Գրաֆիկ 6 և Հավելված 1, Գրաֆիկ 13):”*

Այսինքն կարելի է փաստել, որ իրավունքների պաշտպանությունը բուհում իրականացվում է բարձր արդյունավետությամբ:

Չնայած այդ ամենին, բուհում իրավունքների պաշտպանի գործունեության զարգացման կարիք կա, քանի որ ուսանողների մեծամասնությունը հիմնականում իր իրավունքների հետ

կապված դիմում է ուս. խորհրդին: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ իրավունքների պաշտպանը ստեղծվել է շատ ավելի ուշ, քան ուս. խորհուրդը, և դեռևս իր գործունեությամբ ունի վստահության ձևավորման կարիք:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ը. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Հիմքեր

ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները

Նշված գործառույթները իրականացվում են բուհի ուս. խորհրդի և ՈԱԿ-ի կողմից համապատասխան քննարկումների, դիտարկումների, հետազոտությունների հիման վրա:

Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը

Համալսարանի որակի ապահովման կենտրոնի կազմում և աշխատանքներում ուսանողության ներկայացուցիչների առկայությունը ապահովում է ուսանողության անմիջական մասնակցությունը որակի ներքին ապահովման և գնահատման գործընթացներում:

Հավելված 25. ԵՄԽՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը,

Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները

Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքները ստացվում են հիմնականում սոց. հարցումների, անհատական հանդիպումների և առաջարկությունների ընդունման միջոցով: Մասնավորապես, ուսանողության հետ անցկացված հարցումներում, ինչպես առանձին դասախոսների, այնպես էլ բուհի ընդհանուր գործունեության որակի գնահատմանն առնչվող հարցեր են ներառված (տես՝ ՈԱԿ մշակած հարցաթերթիկներում): Ուսանողներին հնարավորություն է ընձեռնված հանդես գալու սեփական առաջարկություններով, որոնք կնպաստեն ուսումնական գործընթացի ավելի արդյունավետ կազմակերպման համար: Բացի այդ, ուսանողները հնարավորություն ունեն նաև իրենց կարծիքներով և առաջարկություններով հանդես գալ բուհի ղեկավար անձնակազմի հետ անհատական և խմբային հանդիպումների ժամանակ, ինչպես նաև սեփական անանուն առաջարկությունները հասցեագրել բուհի ռեկտորին առաջարկությունների արկղիկում տեղադրելով:

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհը նախատեսում է ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման համար կանոնակարգի և ընթացակարգի մշակում, ինչը հնարավորություն կտա հստակ վերլուծություն կատարել: Մյուս կողմից այդ ուղղությամբ գործող մեխանիզմների շնորհիվ (քննարկումների, դիտարկումների, հետազոտություններ) ստացվել են արձագանքներ, որոնց միջոցով դուրս են բերվել որոշ թերություններ և առավելություններ:

Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):[1]						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	**2010**	**2011**	**2012**	**2013**	**2014**
1	Ավարտելուց անմիջապես հետո	70	74	90	71	64
2	Նախքան ավարտելը	21	18	25	20	16
3	Մասնագիտությամբ	31	32	43	31	29
4	Ոչ մասնագիտությամբ	39	42	47	40	35
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը	22	24	18	21	25
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	195	210	207	219	241
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը	19	21	18	20	18
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը	48	59	101	104	112

Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսանողների ընդունման վերանայված և հստակեցված կարգ	Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ոչ բավարար մասնակցությունը
Ուսանողների ներգրավվածությունը բուհի կարևոր գործընթացներում	Բուհում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման համար դեռևս չմշակված կանոնակարգ և ընթացակարգ
Բուհում իրավունքների պաշտպանության բարձր մակարդակ, որն ապահովվում է իրավունքների պաշտպանի և ուս. խորհուրդի գործունեությամբ	Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքների արդյունավետության ոչ բավարար մակարդակ:
Վարչական կազմի կողմից ուսանողներին անմիջական տրամադրվող խորհրդատվություն և ուղղորդում:	Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներն ունեն լրամշակման և կատարելագործման կարիք:
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
Հնարավոր համագործակցություններ	ՀՀ ԿԳ նախարարության կողմից

[1] Նշենք, որ շրջանավարտների ընդհանուր բազայի բացակայության պատճառով տվյալները բերված են տարբեր ուղիներով հասանելի դարձած շրջանավարտների խմբում իրականացված հարցման արդյունքում:

արտերկրյա բուհերի հետ, որոնք կարող են նպաստել ուսանողների շարժունությանը	հաստատված միասնական ընդունելության կարգը, որը պատճառ է հանդիսանում դիմորդների թվի նվազմանը
ՀՀ այլ բուհերի հետ համագործակցություն և փորձի փոխանակում տվյալ ոլորտում, ուսանողների հետ համատեղ միջոցառումների կազմակերպում	Ամբողջ հանրապետությունում ուսանողության շրջանում գիտական ներուժի տարեցտարի դրսևորվող հետընթացը
	Արական սեռի ուսանողների մեկնումը պարտադիր զինծառայության և դրանով հանդերձ զորացրումից հետո ուսման չշարունակելու վտանգը

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Բուհում գիտահետազոտական աշխատանքների խրախուսում,
- Բուհում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների գնահատման համար մշակել կանոնակարգ և ընթացակարգ,
- Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի աշխատանքների աշխուժացում,
- Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների լրամշակում և համալրում,
- Դիմորդների հոսքը շատացնելու նպատակով նոր մեխանիզմների ներդրում:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունը ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:	
Հիմքեր	**Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունը և ընթացակարգերը** Համալսարանի և պրոֆեսորադասախոսական կազմի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են՝ ՀՀ Սահմանադրության, «ՀՀ աշխատանքային օրենսգրքի», «Կրթության մասին» ՀՀ օրենքի, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի, այլ օրենքների ու իրավական ակտերի և համալսարանի նորմատիվ բնույթ կրող փաստաթղթերի պահանջներին համապատասխան՝ կնքված աշխատանքային պայմանագրով: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման քաղաքականությունը համապատասխանում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման կարգի պահանջներին, որոնց համաձայն՝ հաստատության «պրոֆեսորադասախոսական կազմի առնվազն 50%-ի համար տվյալ ուսումնական հաստատությունը հիմնական աշխատավայր է, առնվազն 50%-ն ունի պետական լիազորված մարմնի կողմից ճանաչված գիտական աստիճան և (կամ)

կոչում, այդ թվում՝ յուրաքանչյուր մասնագիտության մասնագիտական առարկաների գծով՝ 3-ը»:

Համալսարանում աշխատանքային պայմանագրերի հիմնական մասը կնքվում է ամեն ուսումնական տարվա սկզբում մեկ տարի ժամկետով, բացառությամբ եզակի դեպքերի, երբ տվյալ մասնագիտությամբ դասախոսին համապատասխան մասնագիտական առարկան նախատեսվում է 1 կիսամյակ ժամկետով:

Հավելված 60. ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը,

Հավելված 61. ԵՄԽՀ-ում աշխատանքային պայմանագրերի ձևանմուշներ

Հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը ըստ ամբիոնների և որակավորումների՝ նշելով գիտական աստիճանները և կոչումները, աշխատանքային ստաժը բուհում, նրա կողմից վարվող հիմնական դասընթացները

Հավելված 62. ԵՄԽՀ հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը

Դասավանդողների խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգերը

ԵՄԽՀ-ում իրենց աշխատանքը բարեխղճորեն իրականացրած դասավանդողները համալսարանի կողմից խրախուսվում են շնորհա-կալագրերով, պատվոգրերով, միանվագ դրամական պարգևներով և լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրմամբ: Ինչպես նաև նոր ուսումնական տարվա դասաբաշխումներն իրականացնելիս նախա-պատվություն է տրվում արդյունավետ աշխատանք ցուցաբերած և ուսանողների մոտ դրական կարծիքի արժանացած դասախոսներին:

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին:

ԵՄԽՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների դիտարկման և ուսումնասիրման ժամանակ ուշադրության կենտրոնում է գտնվում համապա-տասխանությունը բուհի ռազմավարությանը, կրթական ծրագրերին, առաքելությանը և նպատակներին: Ներկայացվող բոլոր որակական պահանջները պարբերաբար վերանայվում են՝ հաշվի առնելով կրթական պահանջների արդիականացման և ուսանողության պահանջները: Մասնավորապես, ռազմավարական ծրագրի զարգացման ուղղությունների 5-րդ կետի (կադրային քաղաքականության արդյունավետ մեխանիզմների կիրառում, կադրային ներուժի զարգացում) պահանջներով դասախոսական կազմից պահանջվել է իրենց կողմից դասավանդվող առարկաների դասախոսությունների փաթեթները էլեկտրոնային տարբերակով, որպեսզի ուսանողները կարողանան ձեռք բերել դասախոսությունների ամբողջ փաթեթը ցանկացած ժամանակ և առավել արդյունավետ դարձնել ուսուցման պրոցեսը: Սակայն ոչ բոլոր դասախոսների մասով է կատարվել այս հարցի լուծումը, որը սակայն այս պահին էլ ընթացքի մեջ է: Ելնելով սրանից բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության կանոնակար-գում, գիտ. խորհրդի համապատասխան որոշմամբ, կատարվել է փոփոխություն, որի համաձայն՝ բուհում նոր դասախոսի ընտրության ժամանակ առանձին դեր է խաղում այն փաստը, որ դիմորդը (դասախոսը) աշխատանքի դիմելու ժամանակ, որպես անհրաժեշտ պայմաններից մեկը, պետք է ներկայացնի համապատասխան առարկայի դասախոսությունների էլեկտրոնային տարբերակը և, որը պետք է երաշխավորվի համալսարանի համապատասխան

ամբիոնի կողմից: Առաջիկայում դասախոսի ընտրության կանոնակարգում կկատարվի նաև այնպիսի փոփոխություններ, որտեղ հաշվի կառնվեն նաև դիմորդի (դասախոսի) օտար լեզվի իմացությունը և ինֆորմացիոն տեխնոլոգիաներին տիրապետելու մակարդակը:

ԵՄԽՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի ընտրությունը իրականացվում է մասնագիտական ամբիոնների ուսումնական ծրագրերի և մասնագիտությունների առանձնահատկություններին համապատասխան: ԵՄԽՀ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեության համար ներկայացվող պահանջները, նրանց իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են աշխատանքային պայմանագրում և սահմանված են բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքների դրույթներին համապատասխան: Պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող որակական պահանջները կապված լիցենզավորման գործունեության հետ (այդ կազմի առնվազն 50%-ի մասով գիտական կոչումների կամ աստիճանների առկայությունը, առնվազն 50%-ի մասով բուհի հիմնական աշխատողներ լինելու փաստը) վերանայվում և ստուգվում են յուրաքանչյուր կիսամյակին նախորդող երկու շաբաթների ընթացքում: Այդ ցուցանիշները բոլոր տարիների համար պահպանվել են հստակությամբ:

Համալսարանում գործում է անհրաժեշտ ուսումնաօժանդակ կազմ, որում ընդգրկված են 9 աշխատողներ: Ուսումնաօժանդակ կազմի գործառույթները սահմանվում են աշխատանքային պայմանագրերի և կանոնակարգերին համապատասխան: Ուսումնաօժանդակ կազմը իրակա-նացնում է խորհրդատվական աշխատանքներ դիմորդների, ուսանողների և պրոֆեսորա-դասախոսական կազմի շրջանում, ապահովում է ուսանողների հետ ուսումնական, հետա-զոտական, քննական գործընթացների, ամբիոնների, դեկանատների և ռեկտորատի միջև բոլոր տեսակի փոխգործունեության և փոխհամագործակցության կազմակերպումը:

Նշված հատկանիշների հիման վրա համալսարանում մշակման գործընթացում են գտնվում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման նոր քաղաքականություն և ընթացակարգեր:

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականությունն ու ընթացակարգերը մշտապես գտնվում են բարելավումների և վերանայումների փուլում՝ դրանց արդյունավետության բարձրացման նպատակով: Բուհում գործում է պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգ:

Համալսարանում կիրառվում է դասախոսի գիտամանկավարժական և ուսումնական գործունեության գնահատման վարկանիշային թերթիկ (տես՝ Հավելված 63. ԵՄԽՀ դասախոսի գնահատման վարկանիշային թերթիկ), որպես մասնագիտական որակի գնահատման գործիք:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ռեկտորատ են ներկայացվում տարեկան հաշվետվություններ, որոնք հաշվի են առնվում նոր ուսումնական տարվա դասաբաշխումների ժամանակ: Ուսումնական տարվա կտրվածքով այն դասախոսները, որոնք անհարգելի պատճառներով չեն իրականացրել իրենց ուսումնամանկավարժական գործունեությունը, բարեխղճությամբ չեն ցուցաբերել աշխատանքային կարգապահություն և օրինակելի վարք, ենթարկվում են վարչական տույժի՝ ընդհուպ մինչև աշխատանքից ազատվելը:

Դասաբաշխումների իրականացման ժամանակ հաշվի են առնվում նաև ուսումնառող-ների կարծիքները իրենց դասավանդած դասախոսի և նրա մատուցած կրթության որակի վերաբերյալ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են

պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:	
Հիմքեր	**Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները** Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորա-դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող առաջնային պահանջներն են բազային մասնագիտական կրթությունը, գիտական աստիճանը: Խրախուսվում է գիտական կոչումը: Հավելված 60. ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը, Համալսարանում, սակայն, մշակված չեն դասախոսական կազմի մասնագիտական կոմպետենցիաների հստակ պահանջներ, յուրաքանչ-յուր մասնագիտության գծով նոր կրթական չափորոշիչներին համապա-տասխան: Չնայած դրան համալսարանում յուրաքանչյուր մասնագիտա-կան առարկայի գծով ընգրկված են համապատասխան մասնագիտական որակներ ունեցող դասավանդողներ՝ ապահովելով համապատասխան գիտական աստիճան և/կամ կոչում ունեցողների քանակը: Անհրաժեշտության դեպքում նրանք հրավիրվում են այլ բուհերից: **Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականությունը** Դասախոսական կազմի մասնագիտական որակների վերա-նայման քաղաքականությունը հիմնականում իրականացվում է՝ ելնելով ռազմավարական ուղղությունների և դրանց իրականացման պլանավոր-ված միջոցառումների: Օրինակ, քանի որ բուհի ռազմավարական ծրագրի ուղղություններից է՝ *“...համալսարանի կրթական, գիտական և աշխատանքների կազմակերպման ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը”*, ուստի դասախոսական կազմին ներկայումս ներկայացվող պահանջներից է նորագույն տեխնոլոգիաների կիրառման իմացություն և մեթոդների կիրառում դասավանդման ժամանակ: Կամ նոր պահանջ է հանդիսանում Որակի ապահովման գործընթացներում ներգրավվածությունը, և ներդրած ավանդը այդ ոլորտում: **Վերանայման վերլուծությունները և արդյունքների արտացոլումը նոր քաղաքականության մեջ** Վերանայման վերլուծություններ և նոր քաղաքականության մշակումը կիրականացվի նոր ռազմավարական ծրագրի հաստատումից հետո:
Հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին: Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող պահանջները հստակեցվում են հետադարձ կապի և գնահատման մեխանիզմների կիրառման արդյունքում առաջ եկած անհրաժեշտություններից: Ուսանողության շրջանում անցկացված հարցումներում զետեղված են հարցեր, որոնք պարզաբանում են ուսանողության կարծիքը իրենց դասավանդող դասախոսների մասնագիտական որակի և դասավանդման մեթոդների ընտրության արդյունավետության	

վերաբերյալ:

Որակի ապահովման կենտրոնի կողմից ներկայումս մշակվում են որակավորման տարբեր բաղադրիչների համալիր ստուգման և գնահատման նոր մեխանիզմներ: Ինչպես նաև անհրաժեշտություն է առաջացել մշակել դասախոսների մասնագիտական որակի ընդհանուր նկարագիր՝ հիմնվելով նրա դասավանդած առարկաների և կիրառած ուսումնառության մեթոդների առանձնահատկությունների վրա:

Պրոֆեսորադասախոսական կազմի որակական պահանջները և ՄԿԾ-ին համապատասխանությունը վերահսկվում են նաև համալսարանում գործող վերահսկողական խմբի կողմից կիսամյակային պարբերությամբ՝ կիսամյակի ընթացքում դասախոսի կատարած աշխատանքների ամփոփումից հետո: Որակական պահանջների վերաբերյալ վերլուծությունները իրականացվում են նաև ուսանողների շրջանում անցկացվող հարցումների արդյունքների հիման վրա: Արդյունքում դասախոսի վերաբերյալ ամբողջական բնութագիր է կազմվում ռեկտորատի կողմից լրացվող վարկանիշային թերթիկի միջոցով, որում զետեղվում է նաև վերը նշված վերահսկողական խմբի կողմից տրվող արդյունարար գնահատականը: Ինչպես նաև վարկանիշային թերթիկում տարվա կտրվածքով լրացվում են նաև դասախոսի կրթական և գիտահետազոտական գործունեության հետ կապված տվյալներ (տես՝ Հավելված 63): Համալսարանում դասախոսների վարկանիշային թերթիկների վերլուծության արդյունքում պլանավորվում է բուհում նրանց հետագա գործունեության, առաջխաղացման և խրախուսման քաղաքականությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Հիմքեր

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման քաղաքականությունը և ընթացակարգերը

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատումը իրականացվում է՝ հիմնվելով նրանց աշխատանքային փորձի, գիտելիքների փոխանցման արդյունավետ եղանակների կիրառման, կրթական պրոցեսում դրսևորած բարձր մասնագիտական գիտելիքների և կարողությունների, ինչպես նաև սեփական աշխատանքի նկատմամբ բարեխիղճ մոտեցման վրա:

Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման մեխանիզմներն ու գործիքները

Համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության գնահատման համար մինչ այժմ կիրառվել են հետևյալ մեխանիզմներն ու գործիքները՝

- Ժամանակ առ ժամանակ կազմակերպվող դասալսումները,
- Դասերին պարտաճանաչ հաճախումների ամենօրյա ստուգումը,
- Ուսանողների շրջանում կատարված հարցումներ (նախորդ կիսամյակում իրենց դասավանդած դասախոսների գնահատման),
- Տարեվերջին դասախոսի կարդացած դասախոսությունների ստուգում, ծրագրային առումով բացթողումների ի հայտ բերում,
- Ավարտական քննությունների ժամանակ ուսանողների ընդհանուր առմամբ ցուցաբերած գիտելիքների հիման վրա համապատասխան մասնագիտությամբ դասախոսի գործունեության գնահատում,
- Ռեկտորատի կողմից լրացվող վարկանիշային թերթիկ,
- Վերահսկողական խմբի գնահատում

	ԵՄԽՀ-ում դասավանդողների արտաքին գնահատականը հիմնականում ստացվում է ուսանողների և ծնողների, ԶԼՄ-ներում տեղակայված նյութերի և հասարակական կարծիքի հիման վրա, որոնք իրենց համապատասխան արձագանքն են գտնում համալսարանի ղեկավարության կողմից: **Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ** Դասախոսական կազմի գնահատման համար վարկանիշային թերթիկը մշակվել է ընթացիկ տարում և, հետևաբար նրա հետ կապված վերլուծություններ դեռևս իրականացված չեն: **Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, ղեկավարների)**
Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող վերլուծությունները մինչ այժմ իրականացվել են բանավոր քննարկումով և համապատասխան հիմքեր առկա չեն: Ներկայումս բուհում իրականացվում է դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման վարկանիշային թերթիկների կիրառման գործընթաց, որը հնարավորություն կտա իրականացնել նմանատիպ վերլուծություններ: Մինչ այդ դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման վերաբերյալ արձագանքները հիմնականում ստացվում էին ուսումնառողների և դասավանդողների շրջանում անցկացված հարցումների, ուսումնառողների խմբերի հետ անհատական հանդիպումների միջոցով: Դասախոսական կազմի գնահատումը պետք է իրականացվի մի քանի մեխանիզմների համադրմամբ, բացառելու համար սուբյեկտիվ մոտեցումներն ու գնահատականները: Ըստ այդմ ստեղծված մեխանիզմներով ստացված պատկերի համընդհանուր վերլուծության անհրաժեշտություն կա: Անհրաժեշտ է նաև գնահատման այլ մեխանիզմների ներդրում:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:	
Հիմքեր	**Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը** Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավան-դողների կոմպետենցիաներին վերաբերող հարցերը քննարկվում են գիտ. խորհրդի նիստերի և ռեկտորատի ժողովների ժամանակ: Կատարված աշխատանքների վերաբերյալ զեկուցումներ են լինում նաև ռեկտորի տարեկան հաշվետվություններում: Կոմպետենցիաների ընդլայնման կարիքների դուրսբերման համար իրականացվում են հարցումներ և քննարկումներ դասախոսական կազմի և ուսանողների շրջանում: **Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ**

մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների

Հավելված 64. Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների,

Դասավանդողների կատարելագործման թեմաները

Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը

Վերը նշված Հավելված 64-ում բերված են դասախոսների կատարելագործման թեմաներն ու ժամանակացույցը:

Հավելված 65. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի, դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների օտար լեզվի լրացուցիչ դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր,

Հավելված 66. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար որակի ապահովման թեմաներով վերապատրաստումների և դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր

Այլ հիմքեր

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ում իրականացված դասախոսական կազմի վերապատրաստումներն ու կատարելագործման գործընթացների արդիականությունը հիմնավորվում է դրանց կարիքների դուրսբերման հետազոտությունների արդիականությամբ: Այսպես, 2013թ. ՈԱԿ-ի կողմից իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքում, համաձայն բուհի գնահատման վերլուծության՝

*"... Օտար լեզուների մասով Մ. Խորենացու անվան համալսարանի դասախոսների շրջանում գերակշռում է ռուսերենի, ապա անգլերենի իմացությունը (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 2), որը դասախոսները ուզում են բարելավել, ինչը ցույց է տալիս Հավելված 1՛, Գրաֆիկ 3-ը, 76%-ը ուզում են **օտար լեզվի վերապատրաստում** անցնել:"*

Արդյունքում, ԵՄԽՀ-ն դրամաշնորհի շրջանակներում 2014թ. կազմակերպեց անգլերեն լեզվի վերապատրաստումներ և դասընթացներ 2 փուլով (եռամսյակային) ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի ներկայացուցիչների շրջանում (տես՝ Հավելված 65. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի, դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների օտար լեզվի լրացուցիչ դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր):

Նույն դրամաշնորհի շրջանակներում ԵՄԽՀ-ն դասախոսական կազմի և ՈԱԿ-ի համար 2014թ. 2 փուլով կազմակերպեց դասընթացներ ՀՀ արտաքին փորձագետի հրավիրմամբ: Դասընթացների թեմաներից՝ կրթության որակի ապահովման հիմնահարցերում տեղ էին գտել նաև դասախոսական կազմի ուսանողակենտրոն կրթություն ապահովելը, կրթական բարեփոխումների և մասնագիտական այլ հարցեր (տես՝ Հավելված 66. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար որակի ապահովման թեմաներով վերապատրաստումների և դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր):

Բուհում, որպես դասախոսական կազմի վերապատրաստման ձև, ընդունված է նաև բուհում անցկացվող սեմինարներն ու ժողովները, որոնց ընթացքում ներկայացված թեմաներն

ու քննարկումները ընտրվում են՝ ելնելով արդի խնդիրներից և մարտահրավերներից:

Ապագայում ԵՄԽՀ-ն պլանավորում է իրականացնել նմանատիպ այլ միջոցառումներ դասախոսական կազմի ընդհանուր, մեթոդական և մասնագիտական կատարելագործման նպատակով՝ կատարելագործման թեմաների ընտրության և վերանայման հարցում առաջնորդվելով ժամանակակից կրթական կարիքներին համապատասխան ուսումնա-սիրությունների առաջնայնությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)

Հավելված 67. ԵՄԽՀ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը

Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը

Համալսարանում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովվում է ղեկավար անձնակազմի կողմից կազմի քանակական և որակական տվյալների մշտադիտարկման և ամեն տարի վերանայման շնորհիվ: Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունության ապահովման և հոսունության նվազեցման նպատակով բուհը կիրառում է խրախուսման մեխանիզմներ՝ հավելավճարների և շնորհակալագրերի հանձնման տեսքով:

Կայունությունն ապահովվում է նաև բուհում ստեղծված առողջ աշխատանքային մթնոլորտով: Համաձայն բուհում 2013թ ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված ֆոկուս խմբի վերլուծության՝

Հիմքեր

*“… «անմիջական մթնոլորտ» ասվածը, որը ուսանողին, ինչպես նաև դասախոսին ստիպում է չփոխել համալսարանը, եթե նոր հնարավորություն տրվի իրենց: Դա հարցերի, խնդիրների հեշտ և մատչելի ձևով լուծելու հնարավորությունն է, որը նրանք չեն տեսնում այլ տեղ (անմիջապես ղեկավարության հետ կապը). «Մեր բուհում ազատ և անմիջական շփում կա, կարող ենք միշտ դիմել ռեկտորին անձամբ»: Խոսքը այստեղ **սոցիալական կապիտալի** առկայության մասին է, որից չեն ուզում զրկվել: Ուստի և համախմբվածության, ըստ հարցման տվյալների, **բարձր** լինելը բացատրելի է. բուհի ներկայացուցիչը ուզում է ներկա գտնվել կազմակերպած միջոցառումներին՝ իր լուման ունենալու բուհի բարձր հեղինակության համար:”*

“…Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ բուհը կատարում է իր որդեգրած առաքելությունը մարդկային գործոնի մեծ ներազդման միջոցով, որից և բավարարված է բուհի կրթական գործընթացում ներգրավված գործող անձինք՝ դասախոսներն ու ուսանողները:”

Համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները)

Հավելված 68. ԵՄԽՀ համատեղությամբ աշխատող դասավանդողների

	ցանկը
Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:	
ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և կոմպետենցիաների հետ կապված՝ համալսարանի ղեկավարության մշտական ուշադրության կենտրոնում են գտնվում՝ • Լիցենզիայի պայմանների ապահովումը, • Գիտական բարձր որակավորում ունեցող և համապատասխան կոչում ունեցող դասավանդողների ներգրավումը ուսումնական գործընթացին: • Համալսարանի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմում համապատասխան քանակով գիտական որակավորմամբ մասնագետների ապահովում: /տես՝ ԵՄԽՀ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը/: Ըստ այդմ, արդիական պահանջներից ելնելով վերանայվում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողություններն ու կոմպետենցիաները: Մասնավորապես, ինչպես արդեն նշվեց նախորդ *Չափանիշ դ.* -ում, ելնելով արդի պահանջներից և կարիքներից բուհն իրականացրել է համապատասխան վերապատրաստումներ, դասընթացներ և սեմինարներ: Չնայած այդ ամենի, պարզ է, որ բուհն ունի դեռ շատ անելիքներ, դասախոսական կազմի բոլոր անդամների մոտ ժամանակակից պահանջներին համապատասխան կարողությունների զարգացման ուղղությամբ, ինչպես, օրինակ դասավանդման գործում ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործելու հետ կապված: Ապագայում բուհը նախատեսում է խթանել այդ ուղղությամբ աշխատանքները:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ զ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	**Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը** Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման համար բուհում կազմակերպվում են վերապատրաստումներ, դասընթացներ և սեմինարներ: ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման համար իրականացնում է հետևյալ խրախուսման քաղաքականությունը. • Յուրաքանչյուր կիսամյակի վերջում ընդհանուր ստուգումների և մոնիթորինգի արդյունքում կարդացած դասախոսություններով պատշաճ մակարդակի վրա գտնվող դասախոսները խրախուսվում են և՛ ֆինանսապես, և՛ պատվոգրերով: • Նոր ուսումնական տարում ծանրաբեռնվածությունը հաշվարկելիս առավելություն են ստանում այն դասախոսները, ովքեր իրենց առաքելությունը իրականացնում են մասնագիտական պատշաճ որակով: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման համար նախատեսված է իրականացնել նոր կնքված միջազգային պայմանագրերի և հուշագրերի հիման վրա

մասնագիտական վերապատրաստումներ և վերառրակավորումներ:

Սկսնակ դասավանդողների խրախուսման և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Բուհի սկսնակ դասավանդողների հետ տարվող աշխատանքները իրականացվում են ամբիոններում և ուսումնական մասում: Փորձառու դասախոսների և ուսումնական մասի վարիչի կողմից իրականացվում են խորհրդատվություններ և քննարկումներ սկսնակ դասախոսների հետ, վերլուծվում են համապատասխան առարկայական ծրագիրը, դասավանդման և ուսումնառության մեթոդները: Ուսումնական մասի կողմից իրականացվում են դասալսումներ, որոնց արդյունքում՝ բացթողումների և առավելությունների քննարկումներ:

Սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը և ընթացակարգերը

Մենթորության քաղաքականություն և ընթացակարգեր առկա չեն:

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Չնայած վերը նշված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի, որոնք գործում են բուհում, հարկ է նշել, որ արդյունավետության բարձր գնահատման համար դեռ կան շատ անելիքներ: Հարկավոր է մշակել մեխանիզմներ, որոնք կխթանեն դասախոսների ներգրավվածությանը գիտական աշխատանքներում, մասնակցությանը գիտաժողովներին: Ընդ որում, դրան հասնելու համար պետք է մոտիվացնել ոչ միայն դասախոսին, այլ նաև ուսանողներին, որպես հիմնական պահանջատերի: Մոտիվացիայի բարձրացման ուղղությամբ բուհում ներկայումս ակտիվ աշխատանքներ են կատարվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Հիմքեր

Վարչական աշխատակազմի ցանկը՝ ըստ հաստատության կառուցվածքային ստորաբաժանումների

Հավելված 69. ԵՄԽՀ վարչական աշխատակազմի ցանկը

Ուսումնաօժանդակ աշխատակազմի գործառույթները

ԵՄԽՀ-ի վարչական, ուսումնաօժանդակ, տնտեսական, տեխնիկական և այլ աշխատակազմի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են համալսարանի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով՝ ՀՀ աշխատանքային օրենսդրության համապատասխան:

ԵՄԽՀ-ը համալրված է անհրաժեշտ ուսումնաօժանդակ կազմով՝

Հավելված 70. ԵՄԽՀ ուսումնաօժանդակ աշխատակազմի ցանկը

Վերջիններիս իրավասությունները և պարտականությունները կարգավորվում են աշխատանքային պայմանագրերով:

Ուսումնաօժանդակ կազմի գործառույթներից են՝

- Ուսանողության և բուհի վարչակազմի միջև կապի հաստատում,
- Պրոֆեսորադասախոսական կազմի արդյունավետ աշխատանքի կազմակերպման նպաստում և վերահսկում,
- Բազմաբնույթ խորհրդատվական աշխատանքների իրականացում, որոնք նպաստում են ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը, ուսումնական գործընթացին վերաբերող հարցերին սպառիչ պատասխան տալուն,
- Համալսարանի ուսումնական գործընթացին վերաբերող բազմաբնույթ հարցերում օժանդակողի դերակատարություն:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունությունը համալսարանում ապահովվում է հաստիքների բաժանման ժամանակ համապատասխան մասնագիտությամբ և կարողություններով օժտված մասնագետների ներգրավմամբ: Աշխատակազմի մասնագիտական կարողությունների կատարելագործման և մակարդակի բարձրացման համար համալսարանը ամեն տարի իրականացնում է կադրային վերանայում և անհրաժեշտության դեպքում համապատասխան մասնագետների ներգրավում: Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի կայունության մասին է վկայում նրանց երկարամյա աշխատանքը համալսարանում: Ինչը պայմանավորված է նաև առողջ և անմիջական աշխատանքային մթնոլորտով և կիրառած կադրային ճիշտ քաղաքականությամբ:

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը

Վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակը գնահատվում է համապատասխան աշխատանքային պայմանագրերով սահմանված աշխատանքային պարտականությունների կատարողականության մակարդակով: Գործունեության որակի ապահովման համար իրականացվում են ամենօրյա վերահսկումներ, հետադարձ կապի մեխանիզմներով ստացվում են համապատասխան արձագանքներ, որոնց հիման վրա վերանայվում և բարելավվում են համապատասխան օղակների աշխատանքները: Ներկայացվում են ամենօրյա հաշվետվություններ ռեկտորին՝ կատարված աշխատանքների վերաբերյալ:

Աշխատակազմի գործունեության որակն ապահովող մեխանիզմները և գործիքները

Աշխատակազմի գործունեության որակի ապահովման համար բուհը կիրառում է հետևյալ մեխանիզմներն ու գործիքները՝

- Ամենօրյա ստուգումներ, աշխատանքային տաբելների լրացում,
- հաշվետվություններ՝ համապատասխան մշակված ձևաչափով,
- հարցումներ ուսանողների և դասախոսների շրջանում,
- ֆոկուս խմբեր ուսանողների և դասախոսների շրջանում,
- ժողովներ և քննարկումներ:

Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության արդյունավետությունը բարձր է գնահատվում ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված քննարկումների և հարցումների ժամանակ: Նշված օղակների գործունեության արդյունավետությանը նպաստում է նաև բուհի համեմատաբար փոքր լինելը, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ուսանողի և դասախոսի, անձամբ ճանաչել և շփվել բուհի ղեկավար կազմի հետ, հայտնել սեփական մտահոգություններն ու կարիքները: Արդյունքում յուրաքանչյուր ուսանող և դասախոս ստանում է իրեն հուզող հարցերի պատասխանները և համապատասխան խորհրդատվություն: Համաձայն 2013թ. կատարված վերլուծության՝

*"... Բուհում թե՛ դասախոսը (76%), թե՛ ուսանողը (53%) կարողանում է սպառիչ կերպով ստանալ պատասխան իրեն հուզող հարցերին (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 4 և Հավելված 1, Գրաֆիկ 10): Միևնույն ժամանակ իրենց կարծիքը և առաջարկությունները հաշվի են առնվում բուհի կողմից (տես՝ Հավելված 1՛, Գրաֆիկ 5 (դասախոսների 51%) և Հավելված 1, Գրաֆիկ 12 (ուսանողների 61%)): Կարող ենք եզրակացնել, որ բուհը տեղեկատվության առումով **բաց և թափանցիկ** է:"*

Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Օրենքով սահմանված կարգով համապատասխան քանակով և որակավորմամբ պրոֆեսորադասախոսական կազմի ապահովվածությունը	Գիտական աստիճան և կոչում ունեցող մասնագետների սակավությունը որոշակի մասնագիտությունների գծով
Պրոֆեսորադասախոսական կազմի արդյունավետ աշխատանքին նպաստող վերահսկողության մեխանիզմների առկայությունը	Պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության տեմպերի նվազումը
Մասնագետների առաջխաղացման և խրախուսման համապատասխան մեխանիզմների առկայությունը	Դասախոսի կոմպետենցիաների համապատասխանությունը ՄԿԾ շնորհվող որակավորումներին, ստուգող գնահատման մեխանիզմի բացակայությունը
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ**
Դասախոսական կազմի մասնագիտական որակի բարձրացման համար դրամաշնորհների շրջանակներում իրականացվող վերապատրաստումներ և դասընթացներ	Ժամանակակից ուսուցման մեթոդների ներդրման հարցում դասախոսների ավագ սերնդի մոտ դժվարությունների առաջացում
Որակյալ դասախոսների մրցութային կարգով ներգրավման հնարավորություն	Դասախոսական կազմի երիտասարդացման հետ կապված համապատասխան որակավորմամբ երիտասարդ որակյալ

	կադրերի սակավություն:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- խթանել դասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, գիտական աստիճանի և կոչման ձեռքբերումը համապատասխան մեխանիզմներ կիրառելով և ստեղծելով,
- դասախոսի կոմպետենցիաների համապատասխանությունը ՄԿԾ շնորհվող որակավորումներին, ստուգող գնահատման մեխանիզմի մշակում,
- ժամանակակից ուսուցման մեթոդների, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հետ կապված տեղեկատվության տրամադրում և դասընթացների կազմակերպում:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:	
Հիմքեր	**Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները** Չնայած այն բանի, որ ԵՄԽՀ-ն չի հանդիսանում գիտահետազոտական բուհ, ինչը երևում է նաև բուհի առաքելությունից, բուհի ռազմավարական զարգացման ուղղություններում միշտ էլ առկա են եղել գիտահետազոտական ոլորտի զարգացման ուղղություններ: Մասնավորապես, դեռևս 2004թ. բուհում իրականացված ինքնավերլուծության VII. կետի համաձայն՝ *“... Համալսարանի ղեկավարությունը և գիտխորհուրդը մշակել են առաջիկա մի քանի տարիների գիտական հիմնական ուղղությունները, որոնք ներառում են՝* 1. *Բարձրագույն կրթության դասավանդման և մեթոդիկայի խնդիրներ և արդիականացում (այդ թվում նաև ուսանողների ստուգումների և ատեստացիաների ձևերի մշակում),* 2. *Բնական գիտություններում մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառման հիմնահարցերը,* 3. *Շուկայական հարաբերությունների ձևավորման և զարգացման պայմաններում տնտեսական ճյուղերի առաջընթացի հիմնահարցերը,* 4. *Մանկավարժական, հումանիտար և սոցիալ տնտեսական ոլորտների արդիական հիմնախնդիրներ, զարգացման հեռանկարներ”:* Ինչպես նաև նույն ինքնավերլուծությունում XIV. կետում տեսնում ենք՝ *“... Համալսարանի զարգացման հիմնական ուղղություններն են՝ ...*

4. Գիտական հիմնական ուղղությունների շրջանակներում տարվող գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների ընդլայնում և զարգացում
...”

Բուհի ռազմավարական ծրագրում որպես առանձին բաժին նկարագրված է “Համալսարանի գիտական և նորարարական գործունեության զարգացումը”:

Բացի այդ, ռազմավարության ընդհանուր ուղղությունների մեջ գտնում ենք՝
“... Ելնելով իր առջև դրված առաքելությունից և նպատակներից՝ համալսարանը որդեգրել է ռազմավարական զարգացման հետևյալ ուղղությունները.
...

- *համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության համար գիտակրթական գործունեության նպաստավոր պայմանների ստեղծում,*
- *համալսարանի կրթական, գիտական և աշխատանքների կազմակերպման ոլորտներում նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառում ...”:*

“...Ռազմավարական ծրագրի նպատակներին հասնելու հիմնական միջոցառումները և գործիքներն են՝
...

- *առաջիկա գիտակրթական գործունեության հստակեցում, նորարարական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառում,*
- *գիտակրթական գործընթացի խթանում (գիտաժողովների, կոնֆերանսների, գիտական բանավեճերի կազմակերպում)...”*

ԵՄԽՀ ռազմավարության հիման վրա գիտահետազոտական զարգացման թվարկված հիմնական ուղղություններին ավելացվել են նաև հետևյալները՝

- Կրթական գործընթացում գիտական հետազոտությունների տեղեկատվական և փորձարարական-գործիքային բազայի կիրառման արդյունավետության բարձրացման եղանակներ
- Համընդհանուր կրթական գործընթացում հիմնարար և կիրառական հետազոտությունների ներդրում:

Հաստատության ռազմավարության և հետազոտությունների ուղղությունների միջև կապն արտացոլող փաստաթուղթը (կցել կամ հղում կատարել)

Հավելված 3. ԵՄԽՀ 2004թ ինքնավերլուծությունը,

Հավելված 8. ԵՄԽՀ ռազմավարությունը (վերանայված)

Հավելված 15. ԵՄԽՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն

Հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները

	ԵՄԽՀ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմներ են հանդիսանում պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական հրատարակությունները (տես՝ ստորև), ինչպես նաև մասնակցությունները տարբեր գիտաժողովների: Կատարված հրատարակությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է ռեկտորի տարեկան հաշվետվություններում: Բացի այդ, մինչև 2011թ բուհում հրատարակվում էր «Մովսես Խորենացի» գիտական ամսագիրը, որտեղ տպագրվում էին անձնակազմի գիտահետազոտական աշխատանքները: Հավելված 71. «Մովսես Խորենացի» գիտական ամսագրի օրինակներ
Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Բուհի ռազմավարական ծրագրում, որպես առանձին բաժին, դիտարկվում է՝ **“Համալսարանի գիտական և նորարարական գործունեության զարգացումը”**, որտեղ, որպես առանձին ենթաբաժիններ, ներկայացվում են <u>նպատակները</u>, <u>ներկա վիճակը</u>, <u>հիմնախնդիրները</u>, այդ <u>հիմնախնդիրների լուծման հնարավոր ուղիները</u> և <u>ակնկալվող արդյունքները</u>: Մասնավորապես, հիմնախնդիրների ենթաբաժնում գտնում ենք՝ *“... Կախված ընդհանուր կրթական ոլորտի ոչ բավարար, ոչ համակարգված գործունեությունից, գիտական և նորարարական ներուժի մրցունակության անբավարարությունից՝ ինչպես բոլոր բուհերում, այնպես էլ այստեղ դանդաղում է համալսարանի գիտական, կրթական և նորարարական գործունեության ամբողջացումն ու համալիր դաշտի ստեղծումը: Խիստ անհրաժեշտ է, որ բուհը բարելավի իր կրթական, գիտահետազոտական գործունեության կառուցվածքը: Այն պետք է որոշակի փոփոխությունների ենթարկվի և կատարելագործվի: Համալսարանը պետք է համագործակցի գիտական կենտրոնների հետ և իր ակտիվ ներգործությունը ունենա գիտության զարգացման գործընթացում:”* Բուհում գիտահետազոտական գործունեության խթանման համար 2010թ-ից գործում է ուսանողական գիտական ընկերությունը, որը համագործակցելով ամբիոնների հետ, իրականացնում է գիտական, ստեղծագործական գործունեություն: Սակայն հարկ է նշել, որ բուհում գիտահետազոտական գործունեության զարգացման տեմպերը այնքան էլ բարձր չեն: Ոչ բոլոր դասախոսներն են ներգրավված այդ գործընթացներում և հետևաբար դրանք մասսայական բնույթ չեն կրում: Ըստ այդմ, ռազմավարության մեջ նկարագրված ուղղությունների հետ կապված աշխատանքները այնքան էլ արդյունավետ չեն ընթանում:
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:
	Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը Բուհի ռազմավարության մեջ, որպես միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր, կարող ենք գտնել նկարագրված “Ռազմավարական ուղղություններ և ռազմավարական նպատակներին հասնելու միջոցներ” վերնագրի տակ “Համալսարանի գիտական և նորարարական գործունեության զարգացման” բաժնում՝ *“…* • *Համընդհանուր կրթական գործընթացում հիմնարար և*

Հիմքեր	*կիրառական հետազոտությունների ներդրում:* • *Համալսարանի գիտական-դասախոսների ներգրավվածություն հանրապետական, տարածաշրջանային, ԱՊՀ և այլ մրցույթներում և ծրագրերում:* • *Համալսարանի մասնակցությունը գիտական, գիտակրթական, գիտամշակութային նախագծերին: Համագործակցություն կրթական, գիտահետազոտական հաստատությունների, արտասահմանյան կազմակերպությունների և ձեռնարկությունների հետ:* • *Համալսարանի աշխատակիցների մտավոր սեփականության և հեղինակային իրավունքի պաշտպանման, գիտական աշխատանքների իրավական պաշտպանվածության և նորմատիվ ապահովման համար պայմանների կատարելագործում: Հեղինակավոր, բարձր հեղինակություն ունեցող ամսագրերում համալսարանի գիտնականների հրապարակման ակտիվության խթանում:”* **Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները** Համալսարանում յուրաքանչյուր հետազոտություն իրակա-նացվում է հետևելով ժամանակակից մեթոդաբանությանը, հաշվի առնելով տվյալ գիտական ոլորտի առանձնահատկություններն ու առկա նվաճումները: Ստացված արդյունքները հրատարակվում են՝ համապատասխանեցվելով տվյալ գիտական ժողովածուի պահանջներին: Յուրաքանչյուր գիտական ժողովածու, ունենալով հրատարակման սեփական պահանջները և գիտական հետաքրքրության ոլորտները, ներկայացնում է համապատասխան պահանջներ այնտեղ տպագրվող աշխատանքների համար:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակ-նությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունա-վետությունը և արդիականությունը ստուգվում է հիմնվելով տպագրված աշխատանքների, ուսանողության ներկայացրած դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի վրա:

Վերը նկարագրված ծրագրերի և ուղղությունների իրականացման դիտարկում կատարելիս հանգում ենք այն փաստին, որ բուհում գիտահետազոտական ծրագրերի իրականացման տեմպերը այնքան էլ բարձր չեն և ունեն խթանման կարիք:

Մասնավորապես, կարևոր է նշել, որ գիտական հետազոտությունների և կրթական ծրագրերի միջև կապը թույլ է արտահայտված: Դրանք հիմնականում իրականացվում են ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի տեսքով: Իսկ ավարտական (դիպլոմային) աշխատանքներ բուհում կարող են գրել միայն բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները՝ ռեկտորատի թույլտվությամբ: Ըստ այդմ, հետազոտական գործունեության կապը կրթական ծրագրերի և ուսանողների հետ մասսայական բնույթ չի կրում:

Մյուս կողմից գիտահետազոտական գործունեության արդյունավետության վրա ազդում է այդ ուղղությամբ բուհում ֆինանսավորման պակասը: Հիմնականում աշխատանքները

	իրականացվում են դասախոսական կազմի սեփական ջանքերով:Բայց այդ ամենը առավել արդյունավետ դարձնելու համար կարիք կա համապատասխան ուղղությունը բուհի ռազմավարության առաջնային դաշտ բերելու և խրախուսման մեխանիզմներ մշակելու հետ կապված:
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:	
Հիմքեր	**Որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու մեխանիզմները** Բուհում հետազոտական աշխատանքների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար մինչև 2011թ հրատարակվել է «Մովսես Խորենացի» գիտական ամսագիրը, որի հրատարակումը անյուհետև դադարեցվել է, բայց նախատեսվում է առաջիկայում 2015թ-ից նորից վերսկսել հրատարակությունը: Բուհում գործում է մասնագիտական գրադարան, որը որոշ չափով հագեցած է անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ: Բացի այդ բուհի համակարգչային լաբորատորիան միացված է ինտերնետային կապով, ինչը հնարավորություն է տալիս նաև օգտվել էլեկտրոնային ռեսուրսներից և գրադարաններից: Առկա են մասնագիտական լաբորատորիաներ: Ուսանողական կազմի հետազոտական աշխատանքներին նպաստում են նաև անցկացրած մասնագիտական և արտադրական պրակտիկաները ՀՀ առաջավոր ուսումնական հաստատություններում, գիտահետազոտական և արտադրական կենտրոններում: **Հետազոտության և զարգացման համար հատկացված բյուջեն՝ արտահայտված տոկոսներով (վերջին 3 տարվա համար)** ԵՄԽՀ-ի բյուջեով մինչ այժմ հատկացումներ չեն եղել գիտահետազոտական աշխատանքների համար: Այդ աշխատանքները իրականացվել են համապատասխան աշխատակիցների կողմից դասախոսական աշխատանքին զուգահեռ: **Բյուջեի բաշխման քաղաքականությունը և ընթացակարգերը** Առկա չէ: **Երիտասարդ աշխատակազմի հետազոտական գործունեությունը խրախուսելու քաղաքականությունն ու ընթացակարգերը** Համալսարանում երիտասարդ աշխատակազմի գիտահետազոտական գործունեության խրախուսման կոնկրետ հայեցակարգ մշակված չէ և նախատեսվում է մշակել այն առաջիկայում: Երիտասարդ աշխատակազմի խրախուսման համար բուհը կիրառում է նույն մեխանիզմները, ինչ մնացած դասախոսների համար (տես՝ նկարագրված ստորև վերլուծության մեջ): **Ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականությունն ու ընթացակարգերը** Գիտահետազոտական աշխատանքների կատարման ակադեմիական ազնվությունը (օբյեկտիվություն) երաշխավորող և գրագողությունը կանխարգելող միջոցների քաղաքականություն ու ընթացակարգեր որպես այդպիսին առկա չեն և հիմնվում են հիմնականում

գիտական ժողովածուների վերահսկողության վրա: Սակայն բուհը նախատեսում է առաջիկայում իրականացնել հետևյալ միջոցառումները, որոնք կնպաստեն վերը նշված գործընթացների հստակեցմանը՝

- հստակեցնել և կանոնակարգել համալսարանում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների իրականացման քաղաքականությունը, ապահովելով ակադեմիական ազնվությունը,
- Ստեղծել պաշտպանված և հաստատված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների վերլուծություն՝ դրանց արդիականությունը ապահովելու և գրագողությունը կանխելու նպատակով,
- Ստեղծել մասնագիտական հանձնաժողով, որը կկանոնակարգի նշված խնդիրները և կտա փորձագիտական եզրակացություն:

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում հստակ մշակված չեն հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականություն և ընթացակարգեր և, ըստ այդմ, դրանց արդյունավետությունը գնահատել հնարավոր չէ:

Սակայն բուհում կատարվում են գործընթացներ, որոնք նպաստում են գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությանը:

Պրոֆեսորադասախոսական կազմը ուսումնական գործընթացի հետ համատեղ իրականացնում է նաև հետազոտական գործունեություն, որի արդյունքները տպագրվում են տարբեր ամսագրում: Հետազոտական գործունեություններում կարող են ներգրավվել նաև ուսանողներ՝ գրելով համապատասխան թեմաների շուրջ դիպլոմային աշխատանքներ, մագիստրոսական թեզեր և այլ աշխատանքներ: Հետազոտական աշխատանքներ կատարող ուսանողները աջակցություն են ստանում համալսարանի կողմից հետևյալ կերպ.

- Դասընթացների կիսամյակային գնահատման ժամանակ,
- Մրցույթներում լավագույն աշխատանքների ցուցադրում,
- Առավել խոստումնալից ուսանողներին հետագա աշխատանքի տեղավորման աջակցություն,
- Հետագա կրթության համար երաշխավորություն,
- Սեմինարներին և կոնֆերանսներին մասնակցության հնարավորություն:

Ուսումնական գործընթացի և հետազոտական գործունեությունը համատեղող դասախոսների խրախուսման քաղաքականությունը իրականացվում է հետևյալ կերպ՝

- Ամեն տարի իրականացվում է «Լավագույն դասախոս» անվանակարգի մրցույթ, որտեղ նաև դիտարկվում է դասախոսի հետազոտական աշխատանքներում ներգրավվածությունը:
- Դասախոսի վարկանիշային թերթիկում ամեն տարի լրացվում է նաև այդ ընթացքում դասախոսի կողմից իրականացրած հետազոտական աշխատանքների վերաբերյալ և տրվում համապատասխան միավոր, որը ներառվում է բուհում դասախոսի համընդհանուր գնահատման և հետագա գործունեության հետ կապված գնահատականի մեջ:
- Բուհը հնարավորություն է տալիս նաև դասախոսներին իրենց հետազոտական ձեռքբերումների և գիտական աշխատանքների վերաբերյալ անցկացնել մասնագիտական դասընթացներ ուսումնառողների շրջանում՝ ապահովելով ուսումնական պլաններում արդիական թեմաների ներգրավումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Հիմքեր

Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը

Միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսանողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգեր առկա չեն:

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը

Բուհի կողմից դրանք չեն կարգավորվում:
ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները կարգավորվում են տվյալ աշխատանքի վերաբերյալ որևէ հեղինակավոր մասնագետի (մասնագետների) դրական կարծիքի առկայության դեպքում և համապատասխան ամսագրի հոդվածի տպագրության կանոնակարգերի համաձայն:

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը

Բուհի կողմից դրանք չեն կարգավորվում:
Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումները ևս կարգավորվում են տվյալ աշխատանքի վերաբերյալ որևէ հեղինակավոր մասնագետի (մասնագետների) դրական կարծիքի առկայության դեպքում և համապատասխան ամսագրի հոդվածի տպագրության կանոնակարգերի համաձայն:

Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 5 տարվա համար

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014
1	Вестник, Орел РФ				2	3	
2	Наука образ. ю, г. Минск						2
3	Акт. вопр. сов. тех., г. Минск						1

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014
1	Nauka I studua, Польша				2		

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի

	Ամսագիրը	Վարկանիշը	2010	2011	2012	2013	2014
1	Հայագիտ. հանդես, Երևան		1	1	2		
2	Ընտանիք և դպրոց, Երևան			1	1		
3	«Նահապետ», Երևան				1	3	6
4	ՀՊՃՀ «Լրագիր»			1	5	7	5
5	ԳՊՀ, Գիտ. հոդվ. ժող.			1	1	1	1

6	«Մ. Խորենացի» ամսագիր			2			
7	«Արմիկուս»				2		

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի հետազոտական գործունեության միջազգայնացման հարցում քայլերը ըստ էության նոր են: Նման քաղաքականություն դեռևս մշակված չէ: Միջազգայնացման նպատակով բուհում ստեղծվել է արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն, որը պետք է նպաստի միջազգային կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը, ինչի շրջանակներում էլ հնարավոր կլինի իրականացնել հետազոտական գործունեության միջազգայնացմանը միտված քայլեր:

Բուհը միջազգային համագործակցության ասպարեզում գիտահետազոտական աշխատանքներ դեռևս չի իրականացրել: Բայց ներկայումս կան դրա նախադրյալները, մասնավորապես միջազգային համագործակցության շրջանակներում այն արտերկրյա ուսումնական կենտրոնների հետ, որոնց հետ բուհը կնքել է համագործակցության պայմանագրեր:

Մասնավորապես, Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն՝

"… Սույն հուշագիրը ունի երկու հիմնական նպատակ՝

ա) Ինտեգրման ոլորտում իրականացնել ուսումնական, գիտահետազոտական աշխատանքներ, նպաստել նոր ուսումնական դասընթացների մշակմանը,

բ) Զարգացնել ինտեգրումը տնտեսագիտության, մենեջմենթի, իրավագիտության և այլ առարկաների ուղղությամբ՝ մշակելով նոր ուսումնական կուրս՝ մեկ կիսամյակ տևողությամբ, կամ ներառել նոր թեմաներ եղած դասընթացներում:"

Համագործակցության հիման վրա բուհում մշակվել են 2 նոր առարկայական ծրագրեր (տես՝ Հավելված 72. Տիրի կազմակերպության հետ համագործակցության հիման վրա մշակված առարկայական ծրագրեր)՝

- «Հանրային կառավարում»,
- «Կրության համակարգի կառավարում»:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Հիմքեր	**Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները** Բուհում մինչ այժմ հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության պարտադիր պայման դրված չի եղել: Չնայած դրան նշված հանգամանքը կարևորվել և իրականացվել է առանձին դասախոսների կողմից, որոնք իրենց դասախոսություններում ներառել են սեփական հետազոտական աշխատանքների արդյունքներն ու հիմնախնդիրները, առանձին ուսանողների հետ դիտարկել են դրանք, որպես կուրսային և ավարտական աշխատանքներ: Որոշ դասախոսներ կազմակերպել են նաև սեմինարներ ուսանողների հետ մասնագիտական խնդիրների քննարկման համար: **Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ** Նմանատիպ վերլուծություններ բուհում դեռևս իրականացված չեն:

Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումները

Քանի որ դիտարկվող գործընթացները կրել են ավելի շատ տարերային բնույթ և կանոնակարգված չեն եղել, ուստի և բարելավման միջոցառումներ նույնպես ֆորմալ չեն մշակվել:

Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ)

- Ուսանողների դիպլոմային աշխատանքները և մագիստրոսական թեզերը
- Դասախոսական կազմի գիտական հրատարակումները
- Համալսարանում մագիստրատուրայի ուսումնական պլանները առավելապես մշակվել են հաշվի առնելով ժամանակակից գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ դասընթացներն ու թեմաները, նպատակ ունենալով խթանել ուսանողության շրջանում գիտական հետազոտությունների իրականացման հնարավորությունները:

Պատասխանել հետևյալ հարցերին: /Նմատատիպ հարցումներ բուհում դեռևս չեն իրականացվել/	%
Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	--------
Դասավանդողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	--------
Գործատուների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	--------

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման ֆորմալ մեխանիզմներ դեռևս չեն մշակվել: Սակայն բուհում կազմակերպված քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ դասախոսական կազմի որոշակի մասը այդ գործունեությունն իրականացնում է՝ գիտակցելով դրա անհրաժեշտությունը:

Ինչպես արդեն նշեցինք, բուհում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործընթացների արդյունավետության վերլուծություն իրականացված չէ: Սակայն այդ փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտվում է՝

- համապատասխան մասնակցություն ցուցաբերած ուսանողների հետագա հաջողություններով ուսումը շարունակելու դեպքում (օրինակ, մեր կամ այլ բուհերի մագիստրատուրայում),
- տվյալ դասախոսի կողմից սեփական առարկայի առավել մասնագիտական տիրապետումով և դասավանդումով,
- Տվյալ մասնագիտությամբ կադրերի պատրաստման որակով,
- Շրջանավարտի հետագա աշխատանքի տեղավորման արդյունավետությամբ:

Ուստի բուհում արդյունավետության համապատասխան գնատահատական տալու համար դիտարկվում են վերը նշված չափանիշները յուրաքանչյուր մասնագիտության համար:

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհի ռազմավարական ծրագրում գիտական գործունեության զարգացման հետ կապված բաժինը	Բուհը չի հանդիսանում գիտահետազոտական ուղղվածություն ունեցող հաստատություն
Խրախուսման մեխանիզմներ բուհի դասախոսական և ուսանողական կազմի համար, ովքեր զբաղվում են գիտահետազոտական գործունեությամբ	Գիտահետազոտական աշխատանքների համար բյուջեի ֆինանսավորման բացակայությունը
Դասախոսների մի մասը կիրառում է հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քայլեր:	Ամրագրված և հաստատված չեն այդ ոլորտում որոշ կանոնակարգեր, քաղաքականություններ և ընթացակարգեր
	Հրատարակումների սակավությունը
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
Արտաքին կապերի և համագործակցության շնորհիվ գիտահետազոտական աշխատանքների խթանում	Ամբողջ ՀՀ-ում երիտասարդ հետազոտողների թվաքանակի նվազումը
Ներկայումս բուհերին ներկայացվող նոր պահանջները, կապված գիտահետազոտական գործունեության հետ, կարող են խթանել գիտահետազոտական աշխատանքների զարգացմանը և առաջխաղացմանը	Գիտաշխատողի, գիտահետազոտական գործունեություն իրականացնողի համապատասխան ֆինանսական աղբյուրների սակավությունը ՀՀ-ում
Դրամաշնորհային ծրագրերի մասնակցությամբ հետազոտական ծրագրերի իրականացում	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Խթանել արտասահմանյան կապերը և ստեղծել նոր կապեր, գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման և զարգացման նպատակով,
- Տրամադրել տարեկան ֆինանսավորում բուհի բյուջեից, բուհում գիտահետազոտական աշխատանքների իրականացման և հրատարակումների ծավալի մեծացման համար,
- Մշակել և հաստատել կանոնակարգեր, ընթացակարգեր և համապատասխան մեխանիզմներ բուհում գիտահետազոտական աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման, վերահսկման և գնահատման համար,

- Մշակել խրախուսման մեխանիզմներ բուհի ուսումնական գործընթացում երիտասարդ գիտաշխատողների ներգրավման համար:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
	Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները ԵՄԽՀ-ն իր գործունեությունը ծավալում է 5 մասնաշենքերի առանձին հարկերում (վարձակալական հիմունքներով) 6935 քմ ընդհանուր զբաղեցրած տարածքով, որոնք հետևյալն են՝ • ՀՊՃՀ-ի 1-ին մասնաշենք – ք. Երևան, Տերյան 105 • Հիմնադիրների կողմից տրամադրված տարածք – ք. Երևան, Հերացու 18ա • ՀՊՃՀ-ի 5-րդ մասնաշենք – ք. Երևան, Տերյան 105 • ՀՊՃՀ-ի 21-րդ մասնաշենք – ք. Երևան, Տերյան 105 • ՀՊՃՀ-ի 2-րդ մասնաշենք – ք. Երևան, Տերյան 105 Նշված մասնաշենքերում են տեղակայված համալսարանի 6 ֆակուլտետները 7 ամբիոններով, ինչպես նաև ստորաբաժանումներ, վարչակառավարչական կաբինետներ, լաբորատորիաներ, գիտական գրադարան, դահլիճներ, մարզադահլիճներ, արխիվը, սննդի կետեր, բուժկետեր, սանհանգույցներ և այլն:
Հիմքեր	**Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները** Համալսարանի ենթակայության տակ են գտնվում հետևյալ լաբորատորիաներն ու ուսումնական կաբինետները, որոնք նպաստում են ուսուցման գործընթացի արդյունավետությանը՝ ապահովելով բնականոն և որակյալ կրթություն. • Համակարգչային լաբորատորիա /ՀՊՃՀ 1-ին մասնաշենք/ • Համակարգչային լսարան /ՀՊՃՀ 5-րդ մասնաշենք/ • Աշխատանքի ուսուցման լաբորատորիա /Հիմնադիրների կողմից տրամադրված մասնաշենք/ • Առարկայական կաբինետներ /Հիմնադիրների կողմից տրամադրված մասնաշենք/ • Կրիմինալիստիկայի լաբորատորիա /Հիմնադիրների կողմից տրամադրված մասնաշենք/ • ՈԱԿ աշխատասենյակ /ՀՊՃՀ 5-րդ մասնաշենք/: **Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և**

գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը

Համալսարանն ունի գիտական գրադարան, որը տեղակայված է ՀՊՃՀ 2-րդ մասնաշենքում և հիմնադիրների կողմից տրամադրվող տարածքում:

Բացի սեփական գրադարանի ռեսուրսներից, ԵՄԽՀ-ն առանձին պայմանագրեր է կնքել ՀՀ Ազգային գրադարանի, Ավ. Իսահակյանի անվան գրադարանի և ՀՊՃՀ-ի գրադարանի հետ բուհի ուսանողներին սպասարկելու նպատակով:

Հավելված 73. ԵՄԽՀ-ի և ՀՀ Ազգային գրադարանի միջև կնքված պայմանագիրը:

Հավելված 74. ԵՄԽՀ-ի և Ավ. Իսահակյանի անվան գրադարանի միջև կնքված պայմանագիրը:

Հավելված 75. ԵՄԽՀ-ի և ՀՊՃՀ-ի միջև կնքված պայմանագիր (3.1.15 կետ):

Համալսարանն ունի պաշտոնական ինտերնետային կայքեր՝

www.mkhu.am

www.xorhamalsaran.info.am

Ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը

ԵՄԽՀ-ի գիտական գրադարանը 2014թ-ի տարեվերջի դրությամբ իր գրապահոցում ունի շուրջ 15000 օրինակ գիտական, ուսումնական, հանրագիտարանային, տեղեկատվական տպագիր գրքեր և գրքույկներ: Պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ գրադարանում առկա մասնագիտական գրականությունը ընդհանուր առմամբ նպաստում է դասավանդման գործընթացին և զարգացմանը:

Համալսարանի ռեսուրսներով ապահովվածության ընդհանուր վերլուծությունը իրականացվում է հիմնվելով ուսանողների և դասախոսների շրջանում անցկացված հարցումներով:

Ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքում պարզ է դարձել, որ հարցվածների 65%-ի կարծիքով առկա գրադարանային ռեսուրսները լիովին նպաստում են ուսումնական գործընթացի պահանջներին, 28 %-ի կարծիքով՝ մասամբ են նպաստում, իսկ 7%-ի կարծիքով՝ գրեթե չեն նպաստում: Հարցման արդյունքում պարզվել է, որ համապատասխան գրականության բացակայության դեպքում ուսումնառողները օգտվում են այլ գրադարաններից և ինտերնետային կայքերից:

Դասավանդողների 58%-ը կարծում է, որ համալսարանի գրադարանը ապահովված է ուսումնական գործընթաց ապահովելու համար անհրաժեշտ գրականությամբ, 38%-ը կարծում է, որ մասամբ է ապահովված, իսկ 4%-ը՝ բոլորովին ապահովված չէ և անհրաժեշտության դեպքում ստիպված են օգտվել այլ գրադարաններից:

ՈԱԿ-ի կողմից 2013թ անցկացված բուհի գնատահման

հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ *«Ձեր կարծիքով բուհը ապահովված է կրթական գործընթացի համար անհրաժեշտ ռեսուրսներով»* հարցին՝

- հարցված ուսանողների 11%-ը պատասխանել է լիովին այո, 40%-ը՝ հիմնականում այո, 38%-ը՝ մասամբ, իսկ 6%-ը հիմնականում ոչ:
- հարցված դասախոսների 4%-ը պատասխանել է լիովին այո, 47%-ը՝ հիմնականում այո, 45%-ը՝ մասամբ, իսկ 2%-ը հիմնականում ոչ:

Եզրակացնելով կարող ենք ասել, որ ուսանողության և դասախոսների կողմից բուհի ռեսուրսներով ապահովվածության մակարդակը բարձր է գնահատվում:

Հետազոտման ընդհանուր փաթեթը կարող եք տեսնել՝

Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ:

Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները և մեխանիզմները

Ռեսուրսներով ապահովվածության մակարդակը բարելավելու և լաբորատորիաների հագեցվածությունը բարձրացնելու նպատակով բուհն իր հնարավորության սահմաններում տարեցտարի տրամադրում է համապատասխան ֆինանսական միջոցներ: Այդ գործընթացն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև դասավանդողների և ուսումնառողների կարծիքներն ու առաջարկությունները, դասավանդման գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման համար: Բուհում առկա գրականությունը թարմացնելու և նոր գրականությամբ հարստացնելու համար ուսումնական տարվա ընթացքում պարբերաբար համապատասխան ամբիոնների կողմից համալսարանի ղեկավարությանն է ներկայացվում մասնագիտական գրականության ցանկ: Իսկ համալսարանում եղած գրականության բացը լրացնելու համար համալսարանը պայմանագրեր է կնքել այլ գրադարանների հետ:

2014թ, բուհը իր հին ինտերնետային կայքի հիման վրա ստեղծել է նոր կայք (www.mkhu.am) ժամանակակից պահանջներին համապատասխան նոր դիզայնով և հնարավորություններով:

Պատասխանել հետևյալ հարցերին: /Հարցերի պատասխանները տես՝ վերոնշյալ **“Ռեսուրսներով ապահովվածության վերլուծության”** *մեջ:/*	**%**
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	

Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:

Ռեսուրսների՝ հաստատության որակավորումների շրջանակի հետ համապատասխանությունը ստեղծելու և զարգացնելու համար բուհը կատարել է որոշակի քայլեր:

Մասնավորապես, մարդկային ռեսուրսներով համապատասխանության մասին արդեն խոսվել է 5-րդ չափանիշում:

Ուսանողական միջավայր ստեղծելու համար տարածքային ռեսուրսներով ապահովվածությունը առկա է պահանջվող նորմերին համապատասխան: Մասնագիտական տեսական գիտելիքներ ձեռքբերելու համար բուհում առկա է մասնագիտական գրադարան: Բացի այդ գրադարանից, գրականության ցանկն ընդլայնելու համար, պայմանագրեր են կնքվել այլ գրադարանների հետ: Համալսարանում ներկայումս ձեռնարկվում են քայլեր էլեկտրոնային գրադարան ստեղծելու ուղղությամբ:

Տեղեկատվության կուտակման և պահպանման համար օգտագործվում է ինչպես համալսարանի արխիվը, այնպես էլ էլեկտրոնային միջոցները: Բուհը թարմացրել է իր ինտերնետային կայքը (www.mkhu.am) ժամանակակից պահանջներին համապատասխան: Բուհում ներքին շահակիցների շրջանում տեղեկատվության տարածման համար հրատարակվել են «Ուսանողի ուղեցույց», «Պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց» և «Որակի ապահովման ձեռնարկ»:

Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ ձևավորելու, հայտնի ծրագրային փաթեթներին տիրապետելու համար համալսարանում առկա են համակարգչային լսարան և լաբորատորիա՝ համապատասխան համակարգչային տեխնիկայով:

ՈԱԿ աշխատասենյակը վերջին տարվա ընթացքում հագեցվել է նոր գույքով և տեխնիկայով, ինչը ապահովում է համապատասխան դասընթացների, սեմինարների և խորհրդատվությունների կազմակերպման արդյունավետությունը, նպաստում պրեզենտացիաների ներկայացմանը, բուկլետների տպագրությանը:

Համալսարանի քաղաքաշտպանության և կրիմինալիստիկայի լաբորատորիաները ապահովում են համապատասխան պրակտիկ գիտելիքներ ձեռքբերելուն:

Չնայած այս ամենին, համալսարանը դեռևս կարիք ունի ռեսուրսների մակարդակի բարձրացման:

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում առկա ՄԿԾ-ների իրականացման համար ապահովված են համապատասխան ուսումնական միջավայրի պայմանները: Ուսումնական պրոցեսի անցկացման համար ապահովված են տարածքային ռեսուրսները: Դասերն անցկացվում են այնպիսի տարածքում, որը կտրված չէ այլ բուհերի ուսանողական միջավայրից: ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներով ապահովվածության վերլուծությունը արդեն իսկ արվել է վերը նշված **Հիմքերի** դաշտում, որտեղ ներկայացված է ներքին շահակիցների կարծիքները այդ հարցի շուրջ տոկոսային հարաբերությամբ:

Բուհի վարչական աշխատակազմը ապահովում է անհրաժեշտ պայմաններ՝ ժամանակին և նպատակային բաշխելով ուսումնական ռեսուրսները (լսարանային ֆոնդի բաշխում, դասացուցակի ժամանակին կազմում՝ հաշվի առնելով ուսանողության և դասախոսների կարիքները): Բուհի կոմունալ ռեսուրսները (էլեկտրաէներգիա, ջերմամատակարարում, ջրամատակարարում) բավարար վիճակում են: Բուհում անցկացված ֆոկուս խմբերը (ուսանողների և դասախոսների շրջանում) նույնպես փաստեցին վերը նշված հանգամանքները, նշելով ընդհանուր առմամբ ներքին շահակիցների գոհունակությունը բուհի կողմից տրամադրվող ռեսուրսների վերաբերյալ: Միևնույն ժամանակ դուրս բերվեցին նաև որոշ թերություններ և թույլ կողմեր, որոնց ուղղությամբ բուհը դեռ անելիքներ ունի: Մասնավորապես, կարծիքներ հնչեցին, որ որոշ լսարաններ կարիք ունեն ժամանակակից տեխնիկայով հագեցվածության անհրաժեշտություն, դասերի առավել արդյունավետ անցկացման համար, օրինակ պրոյեկտորների առկայություն: Նշվեց բուհի սեփական մասնաշենքի պայմանների լավացման անհրաժեշտությունը, քանի որ վարձակալական հիմունքներով տարածքում կազմակերպվող ուսուցումը որոշակի անհարմարություններ է

առաջ բերում (տես՝ Հավելված 76. Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրս բերման նպատակով ֆոկուս խմբի վերլուծություն):	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:	
Հիմքեր	**Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի** ԵՄԽՀ-ում ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում՝ նախանշված առաքելությանը և նպատակներին համապատասխան: Հաշվի են առնվում ընդունված ուսանողների քանակը, ուսումնական և գիտական գործընթացների համար անհրաժեշտ ռեսուրսների նախնական գնահատումն ու ներկա վիճակը: Այդ ամենի հիման վրա էլ իրականացվում է ֆինանսական ռեսուրսների բաշխումը ըստ հայտնաբերված կարիքների և հնարավորությունների: Համալսարանի բոլոր եկամուտներն ու ֆինանսական ծախսերը իրականացվում են բուհի կատարած տարեկան նախահաշվի համաձայն: Հավելված 77. ԵՄԽՀ բյուջեի բաշխումը ըստ մուտքերի և ծախսերի (2010-2014թթ) **Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը)** **Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների** Հավելված 78. ԵՄԽՀ բյուջեի բաշխումը ըստ ռազմավարական ուղղությունների **Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)** **Հետազոտական աշխատանքների, դասավանդման և ուսումնառության, մասնագիտական զարգացման, գրադարանների թարմացման և հարստացման, սարքավորումների, գույքի ձեռքբերման համար նախատեսված հատկացումները (արտահայտված տոկոսներով)** **Դրամաշնորհային ծրագրերով ստացված ֆինանսների բաշխումը** Հավելված 79. Դրամաշնորհի ծրագրով ԵՄԽՀ-ի ստացած ֆինանսների բաշխումը: **Այլ աղբյուրներից ստացված ֆինանսների բաշխումը**
Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Մովսես Խորենացու անվան համալսարանի ամբողջ գործունեության ընթացքում բյուջեն հիմնականում գոյանում է ուսանողի ուսման վարձերի միջոցներից, բացառությամբ 22.11.2013 – 25.12.2014 ժամանակահատվածների, երբ բուհին դրամաշնորհ հատկացվեց 13.886.640 ՀՀ դրամ գումար, որից ծախսվել է 11.201.150 դրամը (չծախսված գումարը բուհին չի	

տրվել):

Համալսարանի ռազմավարական ուղղությունների, առաքելությունների և նպատակների իրականացման համար անհրաժեշտ միջոցներ են եղել ոչ միայն բուհում գոյացած գումարները, այլ նաև հիմնադրամի կողմից անհատույց կամ մասնակի հատուցմամբ հատկացված նյութական ռեսուրսները (շենքային պայմաններ, շարժական գույք, ինչպես նաև փայատիրական ֆինանսական հասույթի տրամադրում):

Վերջին մի քանի տարիների ընթացքում հանրապետության բուհական համակարգում (մասնավոր կրթական հաստատություններում առավել ևս) առաջացան ֆինանսական տեսանկյունից մի շարք դժվարություններ: Դրանցից են՝

ա) ուսանողների վճարունակության նվազումը կապված ընդհանուր սոցիալ տնտեսական վիճակի հետ (մասնավոր կրթական հատվածում սովորում են առավելապես նվազ վճարունակությամբ ուսանողներ)

բ) բուհի և ուսանողների (կամ նրանց ծնողների) միջև կնքված պայմանագրերում ուսման վարձերի հաստատուն մնալը և մյուս կողմից հանրապետությունում ՀՀ կառավարության տարբեր տարիների որոշումներով նվազագույն աշխատավարձի բարձրացումը

գ) 2011.թ-ին հանրապետության հանրակրթական դպրոցներում շրջանավարտներ չլինելը կապված 12 ամյա կրթության անցման հետ

դ) ՀՀ բուհերում առկա բաժնի ընդունելության քննությունների միասնական համակարգի մտցնելը (պետական բուհերը ունեն համապատասխան քանակի պետպատվերի տեղեր, իսկ մասնավորները ոչ)

ե) Արտասահմանյան բուհերի հայաստանյան մասնաճյուղերի ընդգրկված չլինելը միասնական ընդունելության պարտադիր համակարգում և այլն:

Այս ամենով հանդերձ բուհի կողմից իրականացված ֆինանսատնտեսական քաղաքականությունը արդարացրել է իրեն, որովհետև բուհը որևէ անգամ հարկային չմարված պարտավորություններ չի ունեցել, բուհի գոյացած բյուջեն հատկացվել է բուհի առաքելության և նպատակների իրականացմանը և ռազմավարական որդեգրած ուղղությունների զարգացմանը: ԵՄԽՀ ծախսերի բաշխման համապատասխանությունը հաստատության ռազմավարական նպատակներին, հավաստում է բերված՝ *Հավելված 78. ԵՄԽՀ բյուջեի բաշխումը ըստ ռազմավարական ուղղությունների* հաշվետվությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Հիմքեր	**Հաստատության կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարելու և դրանք նպատակներին համապատասխան բաշխելու մեխանիզմները** Բուհի կրթական նպատակների իրականացման համար ֆինանսական միջոցները կառավարվում և համապատասխան բաշխումներն իրականացվում են բուհի ղեկավարության (ռեկտորի) և հաշվապահի կողմից: Բյուջեի նախագիծը ներկայացվում է կառավարման խորհրդի քննարկմանը: Բյուջեն հաստատում է բուհի կառավարման խորհուրդը (տես՝ Հավելված 23. ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգ): Ֆինանսական միջոցների նպատակային բաշխման վերաբերյալ կառավարման խորհրդի քննարկմանն է

ներկայացնում ռեկտորը՝ իր տարեկան հաշվետվություններով:

Ֆինանսական միջոցներին համապատասխան հաստատության գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականությունը

Ֆինանսական միջոցներին համապատասխան բուհն իրականացնում է ծախսերի պլանավորում, որի հիման վրա ներկայացնում է բյուջեի նախահաշիվ (տես՝ Հավելված 80. ԵՄԽՀ 2015թ բյուջեի նախահաշիվ): Կատարված ծախսերի վերաբերյալ ներկայացվում են համապատասխան հաշվետվություններ, որոնց հիման վրա իրականացվում է մոնիտորինգ:

Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություններից ստացվող ֆինանսական և նյութական միջոցների օգտագործման ընթացակարգը

Պետական, մասնավոր և միջազգային կազմակերպություն-ներից չեն ստացվել որևէ ֆինանսական և նյութական միջոցներ, բացառությամբ 2013թ ՀԲ-ի կողմից երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում տրամադրված դրամաշնորհը, որից ստացված ֆինանսական միջոցների օգտագործումը իրականացվել է՝ համաձայն ԿԳՆ ԾԻԳ-ի կողմից ներկայացված ընթացակարգի:

Ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունը երաշխավորող մեխանիզմները (աուդիտներ, հաշվետվություններ)

Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ ռեկտորին պարբերաբար ներկայացվում են համապա-տասխան հաշվետվություններ հաշվապահության կողմից: Նպատակային օգտագործման և թափանցիկության համար յուրաքանչյուր տարեվերջում կառավարման խորհրդում ռեկտորն իր հաշվետվություններում ներկայացնում է համալսարանի մուտքերի և ծախսերի վերաբերյալ բոլոր հատկացումներն ու տվյալները: Հավելված 20. ԵՄԽՀ ռեկտորի տարեկան հաշվետվությունները

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ն իր վեց մասնագիտությունների կրթական ծրագրերի, այդ թվում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի, նպատակների իրականացման և շարունակականության ապահովման համար տրամադրում է ֆինանսական միջոցներ հետևյալ հստակ սահմանված քաղաքականությամբ.

- Յուրաքանչյուր ուսումնական տարեսկզբին իրականացվում է կրթական ծրագրերի համար հատկացվող ֆինանսական միջոցների պլանավորում և ծախսերի նախահաշիվ
- Յուրաքանչյուր ուսումնական տարեվերջին իրականացվում է համալսարանի բյուջեի վերանայում և ճշգրտում, հաշվի առնելով այդ տարվա ֆինանսական մուտքերը, ֆակուլտետների ներկայացրած ֆինանսական օժանդակության պահանջագրերը և այլ չնախատեսված ծախսեր: Արդյունքում կատարվում է բյուջեի վերահաշվարկ, նոր հնարավոր վերաբաշխումների պլանավորում և բարելավմանը միտված փոփոխություններ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման

համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:	
	Ռեսուրսների ժամանակին բաշխելու մեխանիզմները, գործընթացները և ընթացակարգերը Ռեսուրսների ժամանակին բաշխման համար բուհը կիրառում է հետևյալ մեխանիզմները՝ • ռեկտորի հրամաններ, • խորհուրդների նիստերի արձանագրություններ, • աշխատանքային պայմանագրեր, Հավելված 61. ԵՄԽՀ-ի աշխատանքային պայմանագրերի ձևանմուշներ: • դասաբաշխում, • դասացուցակի կազմում և լսարանների բաշխում, • պլանավորում և նախահաշիվ:
Հիմքեր	**Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման մեխանիզմները** Ուսուցման գործընթացների որակի ապահովման համար դասավանդողների և ուսումնառողների կարիքների վերհանման համար կիրառվում են հետևյալ մեխանիզմները՝ • Հարցումներ, • ֆոկուս խմբեր, • անհատական հանդիպումներ, • խմբային քննարկումներ, • կարիքների ներկայացում խորհուրդների նիստերի ժամանակ Արդյունքում դուրս բերված կարիքների վերաբերյալ զեկուցվում է բուհի ղեկավարությանը: Տեղի է ունենում քննարկում բուհի ղեկավար անձնակազմի մասնակցությամբ և բավարարման հնարավոր ուղիների մատնանշում:

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ի ռեսուրսային բազան, որը տրամադրվում է մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, միտված է համալսարանում որակի շարունակական բարելավման ու կայունության ապահովմանը: Այն մշտապես գտնվում է քննարկման, ուսումնասիրության և մշտադիտարկման փուլում:

ԵՄԽՀ-ում պարբերաբար իրականացվում է ռեսուրսների բաշխման վերանայման գործընթաց, հաշվի առնելով համալսարանի ի հայտ եկող կարիքները և գործող ստորաբաժանումների ժամանակակից տեխնիկայով վերազինման անհրաժեշտությունը: Ինչպես նաև ուսումնասիրության են արժանանում համալսարանի դասախոսական կազմի և ուսանողների առաջարկները դասավանդման գործընթացի և մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման առավել արդյունավետ կազմակերպման վերաբերյալ: Անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ վերոնշյալ առաջարկները քննարկման են դրվում համալսարանի գիտական խորհրդում:

Յուրաքանչյուր նոր ուսումնական տարվա սկզբին, երբ արդեն հիմնականում պարզ է լինում բուհ ընդունված ուսանողների քանակը, ուսումնական գծով պրոռեկտորին հանձնարարական է տրվում դասաբաշխում անել: Նրա կողմից կազմվում է դասացուցակը և լսարանային ֆոնդի բաշխումը, ընդ որում դասացուցակը կազմվում է այնպես, որ այն հարմար է լինում և' դասախոսների, և' ուսանողների համար:

Համալսարանի դասախոսական անձնակազմին ուղղված ֆինանսական ռեսուրսները հաշվարկվում են յուրաքանչյուր տարեսկզբին իրականցվող դասաբաշխման հիման վրա, որը որոշում է ուսումնական ծանրաբեռնվածության տարեկան ծավալը: Այդ ամենը ամրագրվում է աշխատանքային պայմանագրով: Դասաբաշխման հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում դասավանդողի մասնագիտական որակավորումը, ուսումնական պլանները և մասնագիտական առարկային համապատասխան պահանջները:

Համալսարանի վարչական աշխատակազմի, ուսումնաօժանդակ և սպասարկող կազմի աշխատանքային ռեժիմը, անհրաժեշտ ռեսուրսների բաշխման մեխանիզմները կանոնակարգվում են համալսարանի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրերով: Յուրաքանչյուր աշխատող աշխատանքային պայմանագիրը կնքում է համալսարանի ռեկտորի հետ ուսումնական տարվա սկզբին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Հիմքեր

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման կանոնակարգերը

Հավելված 81. ԵՄԽՀ տեղեկատվության և փաստաշրջանառության կառավարման կանոնակարգը

Հավելված 28. ԵՄԽՀ արխիվի կանոնակարգը

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները և /կամ համակարգը

Բուհում կիրառվող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները նկարագրված են վերը նշված ԵՄԽՀ տեղեկատվության և փաստաշրջանառության կառավարման կանոնակարգում (տես՝ կանոնակարգի *“III. Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման մեխանիզմները”* կետը:)

Գործընթացի վերանայման արդյունքները վերջին 5 տարիների համար

Այդ գործընթացների վերանայման արդյունքում 2013թ մշակվել և հաստատվել է ԵՄԽՀ տեղեկատվության և փաստաշրջանառության կառավարման կանոնակարգը, նպատակ ունենալով բուհում հստակեցնել նշված գործընթացները:

Գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումները

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ում տեղեկատվության և փաստաթղթավորման գործընթացները գտնվում են համալսարանի ղեկավար մարմինների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես դա են վկայում համալսարանի գործունեության հետ առնչվող բոլոր փաստաթղթերի առկայությունը, մշտադիտարկումն ու ճշգրտումը: Կարևորվում է ինչպես բուհից դուրս եկող և ներս մտնող փաստաթղթերի շրջանառությունը, այնպես էլ բուհի ներսում իրականացվող փաստաթղթաշրջանառությունը: Դա մեծապես նպաստում է համալսարանում փաստաթղթաշրջանառության ճիշտ և արդյունավետ կազմակերպմանը:

Համալսարանում փաստաթղթավորման և տեղեկատվության հետ կապված աշխատանքները հիմնականում իրականացվում են համակարգչային տեխնիկայի կիրառմամբ, ինչը նպաստում է որակական և ժամանակային առումով առավել արդյունավետ

աշխատանքների իրականացմանը:

Չնայած նշված հանգամանքներին, համալսարանը ներկայումս կարիք ունի հզոր համակարգչային ցանցային մեխանիզմների ստեղծման, տվյալների ընդհանուր էլեկտրոնային բազայի ստեղծման և արխիվացման, որոնք էապես կնպաստեն բուհի ներսում ավելի արագ, հուսալի և ճկուն փաստաթղթաշրջանառության իրականացմանը: Ներկայումս համալսարանում քննարկվում են նշված խնդիրների հաղթահարման առաջարկները և հնարավոր լուծումների հայտնաբերման ուղիները:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարումը ԵՄԽՀ-ում իրականացվում է ըստ համապատասխան կանոնակարգի և համաձայն բուհի արխիվի գործունեության կանոնակարգի: Փաստաթղթաշրջանառության հետ կապված վերլուծության և վերանայման արդյունքում այսօր համալսարանում ստեղծված է այնպիսի վիճակ, որ հիմնադրված օրվանից առ այսօր իրականացված բոլոր ելքային և մուտքային գրություններն ու այլ փաստաթղթերը (այդ թվում նաև արխիվային) կանոնակարգված են հստակությամբ: Բուհի գործունեության բոլոր տարիների ընթացքում ցանկացած ելքային ու մուտքային փաստաթղթի հետ կապված կա հստակ ինֆորմացիա, և դրանք պահվում են բուհում համապատասխան կարգավորումով:

Փաստաթղթաշրջանառության կազմակերպման արդյունավետությունը վերահսկող մեխանիզմներ և գործիքներ, որպես այդպիսին, համալսարանում ձևավորված չեն, գտնվում են քննարկման և նախագծման փուլում:

Չնայած նշված ձեռքբերումներին, կան նաև որոշ բացթողումներ ներքին տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպման գործում: Այն ավելի դյուրին և արագ կազմակերպելու համար բուհում անհրաժեշտություն կա ստեղծել ներքին ցանց, որը հնարավորություն կտա կրճատել տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության վրա ծախսվող ժամանակը և միջոցները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

	Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները ԵՄԽՀ-ում ապահով և անվտանգ միջավայր ստեղծելու համար գործում են առողջապահական և անվտանգության պահպանման հետևյալ ծառայությունները. • Բուժկետ, • Անվտանգության ծառայություն, • Քաղ. պաշտպանության շտաբ
Հիմքեր	**Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը** Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունը ընդհանուր է ամբողջ հանրապետության համար և ձևակերպված է “Կենտրոն” թաղային համայնքի ղեկավարի համապատասխան որոշման մեջ Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին)

պահպանմանն ուղղված ծառայությունների համար բուհում քաղաքականություն և ընթացակարգեր չկան, սակայն այդպիսի անձինք գտնվում են համալսարանի ռեկտորի, համապատասխան դեկանների, ամբիոնների վարիչների և համալսարանի այլ ղեկավար անձանց հատուկ ուշադրության ներքո: Մասնավորապես, համալսարանի ռեկտորի հրամանով այդպիսի կարիք ունեցող անձինք համալսարանում օգտվում են ուսման վարձի զեղչի իրավունքից:
Հավելված 82. ԵՄԽՀ ուսման վարձերի զեղչման կարգը:

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին հատկացված ֆինանսական միջոցների բաշխումը վերջին 5 տարվա համար

Առողջապահական և անվտանգության պահպանման ծառայություններին համապատասխան բյուջեի բաշխումը իրականացվում է համալսարանի ֆինանսական ընդհանուր միջոցների ծախսման համապատասխան գործընթացի համաձայն:

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող անձնակազմը և դրա անդամների աշխատանքային նկարագրերը

Համալսարանում գործում է մեկ բուժկետ, որտեղ աշխատում են մեկ բժիշկ և մեկ բուժքույր: Նրանք հանդիսանում են ՀՀ Առողջապահության նախարարության հատուկ պոլիկլինիկա ՓԲԸ-ի աշխատակիցներ, որոնք հավելավճարով աշխատում են ՀՊՃՀ-ի բուժկետերում և պայմանագրով սպասարկում նաև ԵՄԽՀ-ին:

Նրանց աշխատանքային գործառույթներն են՝

- Առաջին բուժօգնության իրականացում,
- Հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացում,
- Անհրաժեշտության դեպքում հիվանդ ուսանողների դիսպանսերիզացիա,
- Ամբուլատոր օգնության կազմակերպում և իրականացում,
- Ուսանողների շրջանում բժշկա-հիգիենիկ խորհրդատվություն:

Բուժկետերն աշխատում են ամեն աշխատանքային օր, ժամը՝ 9:00-18:00:

ԵՄԽՀ-ում անվտանգ ու ապահով աշխատանքային և կրթական միջավայր ստեղծելու համար գործում է շուրջօրյա անվտանգության ծառայություն, համապատասխան որակավորմամբ աշխատակիցներով, որոնք աշխատում են ՀՊՃՀ-ի անվտանգության ծառայությունում և պայմանագրով սպասարկում նաև ԵՄԽՀ-ին:

Հավելված 75. ԵՄԽՀ և ՀՊՃՀ պայմանագիրը (3.1.6 և 3.1.16 կետերը):

Մատուցվող ծառայությունների արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը՝ հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:

Առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետության գնահատման և վերլուծման համար մինչ այժմ շահակիցների արձագանքների հավաքագրման գործընթաց բուհում դեռևս չի իրականացվել: Ապագայում նախատեսվում են նմանատիպ գործընթացներ սոց. հարցումների, քննարկումների և հանդիպումների միջոցով:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի տրամադրած միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը երևում է տարիների ընթացքում ուսումնառողների և դասախոսական կազմի կողմից համապատասխան բողոքների բացակայությունից:

Հատկապես, վերջին տարիներին խստացվել է անվտագության համակարգը բուհում, որը ենթադրում է ապահով միջավայր ուսումնական պրոցեսի անցկացման համար:

2012 թ.-ից համալսարանի անվտանգության ծառայության գործառույթները ավելի բարձր մակարդակի վրա են դրվել: Նորացվել և կատարելագործվել են ծառայության վերահսկման մեխանիզմները: Մասնավորապես, համալսարանի շենքի բոլոր հարկերում տեղադրվել են հսկող տեսախցիկներ, որոնց միջոցով անվտանգության աշխատակիցները շուրջօրյա վերահսկողություն են իրականացնում համալսարանի տարածքում:

Անվտանգության ծառայության նման օպերատիվ աշխատանքը ընդհանուր առմամբ դրական արձագանքի է արժանանում բուհի թե դասախոսական կազմի, թե ուսանողության կողմից:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հիմքեր	**Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը** **Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը)** **Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները**

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործառույթները իրականացվել են համալսարանի ղեկավար մարմինների կողմից, դասախոսական կազմի և ուսանողության համապատասխան արձագանքների և առաջարկների հիման վրա: Արդյունքում իրականացվել է համալսարանում առկա ռեսուրսների արդյունավետության և բարելավման անհրաժեշտության գնահատում, բացակայող ռեսուրսների ստեղծման և

ձեռքբերմանն ուղղված միջոցառումներ:

Չնայած այս ամենի, համալսարանում ռեսուրսների գնահատման հստակ մեխանիզմների և ծառայությունների առկայության կարիք է զգացվում: Ներկայումս բուհում քննարկվում են նմանատիպ մեխանիզմների և ընթացակարգերի ստեղծման ուղիներ:

Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհի ՄԿԾ-ների պահանջներին համապատասխան ռեսուրսներով ապահովվածություն:	Փաստաշրջանառության արդյունավետ իրականացման համար ներքին ցանցային համակարգի բացակայությունը:
Բուհի կատարած աշխատանքները ապահով և անվտանգ ուսումնական միջավայր ստեղծելու ուղղությամբ:	Շենքային պայմանների բարելավման անհրաժեշտություն:
Բուհի ներքին շահակիցների գոհունակության բարձր մակարդակը բուհի տրամադրած ռեսուրսների հետ կապված:	Ժամանակակից պահանջներին համապատասխան տեխնիկայով լաբորատորիաների վերազինման կարիք:
ՈԱԿ աշխատանքների արդյունավետ իրականացման համար ժամանակակից տեխնիկայով և ռեսուրսներով հագեցվածություն	Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ սահմանված մեխանիզմների և ընթացակարգերի բացակայություն:
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
Դրամաշնորհների օգնությամբ տրամադրվող ռեսուրսների մակարդակի բարելավում:	ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը, որը համեմատաբար փոքր ծավալով բուհերի համար հնարավորություն չի տալիս իր ֆինանսական ռեսուրսներով էական առաջընթաց ունենալ:
Այլ բուհերի և կազմակերպությունների հետ կնքվող պայմանագրեր, որոնք հնարավորություն են տալիս փոխօգնության սկզբունքով օգտագործել նրանց ռեսուրսները:	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Բուհում համակարգչային տեխնիկայի ներքին ցանցային համակարգի ստեղծում,
- Արտաքին ներդրողների և բուհի հիմնադիրների ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին բուհի շենքային պայմանների բարելավում և լաբորատորիաների ժամանակակից տեխնիկայով վերազինում,
- Բուհում ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման հստակ սահմանված մեխանիզմների և ընթացակարգերի մշակում:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:	
Հիմքեր	**Շահակիցների առջև հաշվետվողականությունն ապահովող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները** ➢ *Ներքին շահակիցների առջև հաշվետվողականությունը* Բուհի ներքին շահակիցների առջև հաշվետվողականություն ապահովող մեխանիզմները ամրագրված են բուհում գործող հետևյալ կարգերում՝ • Հավելված 23. ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգ, • Հավելված 11. ԵՄԽՀ գիտ. խորհրդի կանոնակարգ, • Հավելված 12. ԵՄԽՀ ֆակուլտետի խորհրդի կանոնակարգ, • Հավելված 24. ԵՄԽՀ ամբիոնների կանոնակարգ, • Հավելված 13. ԵՄԽՀ շրջանավարտների և կարիերային կենտրոնի կանոնադրություն, • Հավելված 25. ԵՄԽՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրություն, • Հավելված 26. ԵՄԽՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կանոնադրություն, • Հավելված 83. ԵՄԽՀ վերահսկողական խմբի կանոնակարգ, • Հավելված 14. ԵՄԽՀ ուսանողական խորհդրի կանոնադրություն, • Հավելված 15. ԵՄԽՀ ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն • Հավելված 38. ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ, • Հավելված 39. ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ, Բացի այդ կարգերից գործում են նաև ներքին շահակիցների հաշվետվողականության այլ մեխանիզմներ՝ • կոնֆերանսներ Հավելված 84. ԵՄԽՀ կոնֆերանսի վերաբերյալ փաստաթղթեր • ռեկտորի տարեկան հաշվետվությունների ներկայացում կառավարման խորհրդի նիստերին, Հավելված 20. ԵՄԽՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններ • դասախոսական կազմի հաշվետվության թերթիկներ յուրաքանչյուր կիսամյակային կտրվածքով, Հավելված 22. ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի հաշվետվության թերթիկի ձևաչափ

- վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցների ամենօրյա հաշվետվության թերթիկներ,
  Հավելված 21. ԵՄԽՀ վարչական և ուսումնաօժանդակ կազմի հաշվետվության թերթիկի ձևաչափ
- պրակտիկայի օրագրերում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում,
  Հավելված 85. ԵՄԽՀ պրակտիկայի օրագրի ձևամնուշ,
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ
  Հավելված 86. ԵՄԽՀ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ (2011-14թթ)

➢ *Արտաքին շահակիցների առջև հաշվետվողականությունը*

- Ռեկտորի տարեկան հաշվետվությունները, որոնք ներառում են այլ օղակների ընթացքում ներկայացրած հաշվետվությունների տվյալներ և ներկայացնում են բուհի ընդհանուր պատկերը տարվա կտրվածքով, կատարած աշխատանքները, ձեռքբերումներն ու թերացումները, արտաքին շահակիցներին հասանելի դարձնելու և նրանց հաշվետու լինելու նպատակով տեղադրվում են նաև բուհի պաշտոնական www.mkhu.am ինտերնետային կայքում:
- Կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվում տպագիր մամուլում,
  Հավելված 87. ԵՄԽՀ տպագրություններ մամուլում,
- Հեռուստատեսությամբ ներկայացվում են տեսաֆիլմեր, որոնք ներառում են բուհի հաշվետություններ կատարած աշխատանքների վերաբերյալ
  Հավելված 88. ԵՄԽՀ պատրաստած տեղեկատվական տեսաֆիլմեր,
- Տպագրվում են բուկլետներ
  Հավելված 89. ԵՄԽՀ բուկլետներ,
- Կազմակերպած և մասնակցած կոնֆերանսներով,
- Հանրային ռադիոյով,
- Սփյուռ տեղեկատվական կենտրոնով:

Հասարակությանը տրամադրվող ծառայությունների ռազմավարական նպատակները և քաղաքականությունը (օր.՝ մասնագիտական զարգացման/վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ, օժանդակում հանրակրթական հաստատություններին, միջավայրի բարելավմանը միտված գործունեություններ և այլն)

Հասարակությանը տրամադրվող ծառայությունները մշտապես կարևորվում են բուհի կողմից, և հանդիսանում են բուհի ռազմավարական նպատակների կարևոր մաս: Իրականացվում են խորհրդատվական ծառայություններ հասարակության համար՝ նպաստելով բուհի վերաբերյալ տեղեկատվության և գործունեության թափանցիկության ապահովմանը: Մշտապես ուշադրության կենտրոնում է նաև հանրապետության հանրակրթական այլ հաստատությունների միջև կապը, դրա ամրապնդման և նորանոր կապերի հաստատման նպատակով: Ի թիվս հանրապետության այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների, ԵՄԽՀ-ը սերտ համագործակցում է նաև մի շարք հանրակրթական դպրոցների հետ, համագործակցության շրջանակներում ներառելով նաև ուսումնա-արտադրական պրակտիկայի անցկացումը այդ դպրոցներում:

Կարևոր է նշել նաև բուհի ուսանողական խորհրդի ակտիվ աշխատանքն այս ոլորտում: Ուս. խորհրդի կողմից ժամանակ առ ժամանակ

	կազմակերպվում են միջավայրի բարելավմանը միտված միջոցառումներ, այցեր մանկատներ, նվիրատվություններ, մասնակցություն տարբեր միջոցառումների: ԵՄԽՀ ուս. խորհուրդը, հանդիսանալով «Ոչ պետական բուհերի ուսանողական կենտրոն» ՀԿ-ի անդամ, ակտիվ մասնակցում է վերջինիս կազմակերպած բոլոր միջոցառումներին, որոնք նպատակ ունեն հասարակությանը օժանդակելու և ծառայություններ մատուցելու: **Հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումները** Բուհի կողմից հասարակությանը տրամադրվող ծառայությունների իրականացման հիմնավորումներ կարող են ծառայել՝ • Բուհի գործունեության (այդ թվում ընդունելության և այլնի) վերաբերյալ հայտարարությունները թերթերում և հեռուստատեսությամբ, • Ուսանողի կամ նրա ծնողի հետ կնքվող պայմանագրերը, • Բուհի ինտերնետային կայքում ներակայացվող անհրաժեշտ ինֆորմացիան ներքին գործունեության և ձեռքբերումների վերաբերյալ, որը մշտապես թարմացվում է, • Անմիջական խորհրդատվական ծառայությունների տրամադրումը համալսարանի գործունեության և առհասարակ ուսանողի հետագա ուսման կամ ուսումը շարունակելու վերաբերյալ, • Բազմապիսի հարցումների և հանդիպումների շնորհիվ հասարակության լայն շերտերի ձայնը և կարծիքը լսելի դարձնելը, • Բուհի արագ արձագանքը գործունեության հետ կապված ցանկացած պահանջվող փաստաթղթի համար: **Հասարակության զարգացմանը միտված ՄՈՒՀ-ի իրականացրած այլ աշխատանքները** Հասարակության զարգացմանն է միտված նաև բուհի ակտիվ մասնակցությունը ՀՀ կրթական դաշտում օրինագծերի ստեղծմանը, քննարկմանը, դիտողությունների և առաջարկությունների ներկայացմանը:

Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում գործող վերը նկարագրված հաշվետվողականության մեխանիզմները նպաստում են կառավարման բարելավմանը, քանի որ ներկայացված հաշվետվությունների շնորհիվ հնարավորություն են տալիս գնահատել համապատասխան օղակների կատարած աշխատանքները և դրանց արդյունավետությունը: Հաշվետվությունները հիմք են հանդիսանում նաև նոր պլանավորման և բարելավման մեխանիզմների կիրառման համար: Հարկ է նշել, որ բուհում հաշվետողականության մեխանիզմները սկզբնական շրջանում ավելի հստակ էին գործում կառավարման բարձր օղակներում, իսկ ստորին օղակներում դրանք կրում էին ֆորմալ բնույթ և պատշաճ մակարդակով չէին իրականանում: Այդ պատճառով, որոշ դեպքերում թերացումներ ի հայտ գալու դեպքում, դժվար էր լինում որոշել, թե ստորին օղակներից որի աշխատանքով է պայմանավորված կոնկրետ թերացումը: Կատարված ուսումնասիրութ-յունների արդյունքում, պարզ դարձավ, որ բուհի հաշվետվողականության մեխանիզմները պետք է վերանայել: Արդյունքում բուհում ստեղծվեցին նոր մեխանիզմներ, այդ թվում՝ դասախոսական կազմի հաշվետվության թերթիկներ, վարչական և ուսումնաօժանդակ կազմի հաշվետվության թերթիկներ:

2014թ-ին ԵՄԽՀ ռեկտորի հաշվետվությունները, սկսած 2008թ-ից, տեղադրվել են նաև բուհի ինտերնետային կայքում՝ հասանելի դարձնելով բոլոր շահագրգիռ օղակներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:	
Հիմքեր	**ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները** Նկարագրված են նախորդ չափորոշչի հիմքերում: **Հաշվետվությունները, զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում** Հավելված 20. ԵՄԽՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններ (2008 - 2014թթ), Հավելված 86. ԵՄԽՀ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ Հավելված 87. ԵՄԽՀ տպագրություններ մամուլում, Հավելված 88. ԵՄԽՀ պատրաստած տեղեկատվական տեսաֆիլմեր, Հավելված 84. ԵՄԽՀ կազմակերպած կոնֆերանսի վերաբերյալ նյութեր Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ Հավելված 76. Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրսբերման նպատակով անցկացված ֆոկուս խմբի վերլուծություն

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի կողմից հասարակությանը հաշվետվողականություն ապահովող մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ պատկեր է ստացվել ՈԱԿ-ի 2013թ անցկացրած, ուսանողների և դասախոսների կողմից բուհի գնատահման հետազոտության ժամանակ, որն իրականացվել է համապատասխան մշակված հարցաթերթիկներով հարցման միջոցով: Համաձայն վերլուծության (տես՝ Հավելված 42.)

“…Բուհի վերաբերյալ տեղեկացման աղբյուրներ (տես՝Հավելված 1, Գրաֆիկ 4)՝

90.32% = հեռուսատեսություն + ծանոթ ուսանող + ծանոթ մասնագետ:”

Մյուս կողմից տեսնում ենք, որ՝

*“… Բուհում թե՛ դասախոսը (76%), թե՛ ուսանողը (53%) կարողանում է սպառիչ կերպով ստանալ պատասխան իրեն հուզող հարցերին (տես՝Հավելված 1՛, Գրաֆիկ 4 և Հավելված 1, Գրաֆիկ 10): Միևնույն ժամանակ իրենց կարծիքը և առաջարկությունները հաշվի են առնվում բուհի կողմից (տես՝Հավելված 1՛, Գրաֆիկ 5 (դասախոսների 51%) և Հավելված 1, Գրաֆիկ 12 (ուսանողների 61%)): Կարող ենք եզրակացնել, որ բուհը տեղեկատվության առումով **բաց և թափանցիկ** է:”*

Այդ արդյունքները հաստատվեցին նաև անցկացված ֆոկուս խմբի ժամանակ (տես՝ Հավելված 76. Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրսբերման նպատակով անցկացված ֆոկուս խմբի վերլուծություն):

Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ բուհի ներքին շահակիցների շրջանում առավել արդյունավետ է իրականացվում հաշվետվողականությունը և տեղեկատվության տրամադրումը: Իսկ արտաքին շահակիցներին ներկայացվող տեղեկատվությունը առավել արդյունավետ ստացվում է հեռուստատեսության միջոցով (տես՝ *Գծապատկեր 1*-ը

վերլուծության մեջ): Ժամանակակից ինտերնետային ռեսուրսներից օգտվելու աճող տենդենցների հիման վրա, բուհը, նաև հաշվի առնելով նշված վերլուծությունը, 2014թ ստեղծեց նոր ինտերնետային կայք, որը հնարավորություն է տալիս արտաքին շահակիցներին հաշվետու լինել նաև այդ մեխանիզմով: Վերջինիս արդյունավետության վերաբերյալ կատարվելու են հետազոտություններ հետագայում:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:	
Հիմքեր	**Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը** Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման համար՝ • Համալսարանի ղեկավարությունը հանդիպումներ և քննարկումներ է ունենում հասարակության տարբեր շերտերի հետ: • Համալսարանը իրականացնում է սեփական գործունեության լուսաբանման լայնածավալ աշխատանքներ՝ կազմակերպելով մամլո ասուլիսներ, հարցազրույցներ, հեռուստա-ռադիո հաղորդաշարեր և ֆիլմաշարեր: • Համալսարանն ունի պաշտոնական ինտերնետային կայքեր (www.mkhu.am, http://xorhamalsaran.info.am/), որոնցում զետեղված է բուհի պատմության, կառուցվածքի, ներկա գործունեության և առաջարկվող մասնագիտությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Այն ներկայիս տեխնոլոգիաների զարգացման պայմաններում հանդիսանում է առաջնային և կարևորագույն միջոց տեղեկատվության ապահովման և տարածման համար: Կայքերը պարբերաբար վերանայվում և մշտապես գտնվում են արդիականացման և բարելավման փուլում՝ բուհն ավելի ներկայանալի դարձնելու նպատակով: Բարելավման քայլերից կարելի է նշել այն, որ 2011 թ-ից կայքերը ներկայացված են նաև անգլերեն լեզվով, ինչը հնարավորություն է տալիս նաև օտարալեզու հասարակությանն ու դիմորդներին ամբողջական կարծիք կազմել համալսարանի վերաբերյալ և համապատասխան ընտրություն կատարել: Հասարակության հետ կապն իրականացվում է նաև ինտերնետային կայքում տեղադրված հետադարձ կապի միջոցով: • Հասարակության հետ հետադարձ կապի ձևավորման և ամրապնդման ուղղությամբ իր ներդրումն ունի նաև համալսարանում գործող Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը, որը ի հայտ է բերում ներքին և արտաքին շահակիցների կարիքները և այդ ուղղությամբ բուհում առկա թերությունները: Ներկայումս կենտրոնը գտնվում է բարելավման և սեփական գործընթացների կանոնակարգման փուլում: • ԵՄԽՀ-ն սերտորեն համագործակցում է “Սփյուռ” տեղեկատվական կենտրոնի հետ, ինչը հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ և հավաստի տեղեկատվություն համալսարանի վերաբերյալ հասարակության լայն զանգվածներին համեմատաբար հեշտ հասանելի հեռախոսազանգերի և ինտերնետային կայքի միջոցով:

	Համալսարանը մշտապես ստանում է Սփյուռի հաշվետվությունները և վերլուծությունները: • Բուհի վերաբերյալ հավաստի տեղեկատվության ապահովման համար բուհը բացի վերը նշված կետերից մշտապես իրականացնում է նաև խորհրդատվական ու բացատրական աշխատանքներ և պատրաստ է բուհի գործունեության վերաբերյալ ցանկացած հարցին սպառիչ պատասխան տալ դիմորդին: **Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները** • հանդիպումներ և քննարկումներ, • համագործակցություն արտաքին շահակիցների հետ, այդ թվում՝ կրթության ոլորտի ներկայացուցիչներ, բուհեր, հասարակական կազմակերպություններ, դիմորդների ծնողներ, ՁԼՄ-ներ, • հարցազրույցներ, • հարցումներ (անհատական, խմբային, հեռախոսային, օնլայն), • այցելություններ այլ ուսումնական հաստատություններ, դպրոցներ և այլն: **Ամփոփված արդյունքները և վերլուծությունները** Բուհում հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների արդյունավետության վերլուծություններն իրականացվում են հարցումների և հանդիպումների արդյունքների հիման վրա: Որպես ամփոփված արդյունք կարող ենք նշել, որ հարցված ուսանողների մեծամասնությունը գոհ է բուհի հետադարձ կապի մեխանիզմներից և ողջունում է ցանկացած հուզող հարցի վերաբերյալ բուհի որդեգրած արագ արձագանքման մոտեցումները:
Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Բուհում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմների առավել արդյունավետ դարձնելու նպատակով բուհը նախատեսում է հիմնել Հասարակության հետ կապերի կենտրոն, որը կհամակարգի և կհստակեցնի կատարվող գործառույթները և կիրականացնի արդյունավետության վերլուծություններ: Բուհի նոր ինտերնետային կայքը հնարավորություն է տալիս իրականացնել օնլայն հարցումներ (տես՝ www.mkhu.am): Քանի որ այն նոր է ստեղծվել, արդյունավետության վերլուծություն դեռ հնարավոր չէ իրականացնել:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:	
Հիմքեր	**Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը** Հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման համար՝ • Համալսարանի ռեկտորատը շահագրգռված է հաղորդել համապատասխան անհրաժեշտ գիտելիքներ ուսանողներին, նրանց ծնողներին և հետաքրքրվող բոլոր անձանց բուհի

	գործունեության, նրա նպատակների, առաքելության և դասավանդման հետ կապված ցանկացած հարցի շուրջ: • Համալսարանի կողմից իրականացվող վերապատրաստումները, սեմինարները, գիտաժողովները, քննարկումներն ու կոնֆերանսները ևս նպաստում են հասարակությանը գիտելիքների փոխանցմանը, իրազեկության բարձրացմանը, առաջավոր փորձի փոխանակմանը և այլն: • 2014թ ռեկտորի հրամանի համաձայն, լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ է մատուցում նաև բուհի ՈԱԿ-ը, ուսանողների և աշխատակազմի շրջանում: Հավելված 57. ԵՄԽՀ ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ անցկացնելու ռեկտորի հրամանը **Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների ներքին և արտաքին գնահատման գործիքները** Քանի որ այդ ծառայությունները չեն ընթանում ֆիքսված ընթացակարգով (բացառությամբ ՈԱԿ-ի խորհրդատվությունների, որոնք սակայն նոր են ներդրվել), դրանց գնահատման գործիքները դեռ մշակված չեն: **Հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման հիմնական գործառույթների ներքին գնահատման գործընթացները և հիմքերը** Առկա չեն:

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունները կազմակերպվում են ելնելով արդիական պահանջներից:

Բուհում 2014թ կազմակերպեց ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի լրացուցիչ անգլերեն լեզվի դասընթացներ, որոնց արդյունավետությունը ստուգվում էր ընթացքում անցկացված թեստերի արդյունքների դիտարկման միջոցով:

Որակի ապահովման արդիական պահանջներից ելնելով՝ բուհը 2014թ. դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորմամբ, կազմակերպեց ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի լրացուցիչ դասընթացներ՝ ՀՀ փորձագետի հրավիրմամբ: Դասընթացների արդյունավետությունը երևում է բուհում համապատասխան մեթոդների կիրառմամբ և հստակեցմամբ:

Բուհը նաև նախատեսում է կազմակերպել լրացուցիչ լեզվի պարապմունքներ սփյուռքի դիմորդների համար: Մասնավորապես, քանի որ Վրաստանի քաղաքացի Ջավախքցի ուսանողները կազմում են համալսարանի ընդհանուր ուսանողների 15%-ից ավելին, բուհում նախատեսվում է 2015թ-ից կազմակերպել վրացերենի դասընթացներ, որպեսզի ուսանողները հնարավորություն ունենան սովորելուց հետո վերադառնան Ջավախք և կարողանան աշխատել Վրաստանի պետական մարմիններում՝ միաժամանակ նպաստելով տեղում հայապահպանության խնդրին:

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

Բուհում գործող ՄԿԾ-ների ուսումնական պլաններում պարտադիր կա “Ընդհանուր հումանիտար և սոցիալ տնտեսագիտական դասընթացներ” կրթաբլոկը, որը նպաստում է հասարակության համար պիտանի քաղաքացու դաստիարակմանը: Կրթաբլոկում ներառված են այնպիսի առարկաներ, ինչպիսիք են՝ “Հայոց պատմություն”, “Փիլիսոփայություն”, “Քաղաքագիտություն”, “Գեղագիտություն” և այլն: Քաղաքացու դաստիարակմանն են նպատակաուղղված նաև մեծ ժամաքանակով, հատկապես մանկավարժական մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված դասընթացները՝ օրինակ, “Հայ գրականության պատմություն”, “Ռուս գրականություն պատմություն”, “Արտասահմանյան գրականության պատմություն”: Այդ առարկաները նպաստում են ուսանողների քաղաքացիական դաստիրակությանը:

Քաղաքացու դաստիարակումը տեղի է ունենում նաև արտալսարանային միջոցառումների միջոցով՝ բարեգործական ակցիաներ, գրական երեկույթներ, գիտաժողովներ, ուսանողական միջոցառումներ: Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվում են հայրենասիրական ակցիաներ և միջոցառումներ: Կազմակերպվում են տարբեր սպորտային խաղեր, որոնց մեջ որոշակի հաջողություններ են գրանցում բուհի ուսանողները:

Հիմնական խոչընդոտներ են հանդիսանում բուհի սահմանափակ շենքային պայմանները և սուղ ֆինանսական միջոցները, որոնք որոշ դեպքերում խոչընդոտում են լայնածավալ միջոցառումների կազմակերպմանը:

Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բուհում առկա կարգերը ապահովում են ներքին հաշվետվողականություն	Բուհում դեռևս բացակայում է հասարակության հետ կապերի կենտրոնը (այդ գործընթացները ներկայումս իրականացվում են արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կողմից)
Ստեղծվել են հաշվետվողականության նոր մեխանիզմներ	Հասարակությանը մատուցվող լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցման ներքին և արտաքին գնահատման գործիքները բացակայում են
Բուհի նոր ինտերնետային կայքը հաշվետվողականության նոր հնարավորություններ է ընձեռում	Մշակված չէ հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման ռազմավարություն և քաղաքականություն
Առկա է ԶԼՄ-ների հետ ակտիվ համագործակցություն	
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
ԶԼՄ-ների հետ հետագա համագործակցություն	Հասարակության պասիվությունը բուհի գործունեության գնահատման հետ կապված
Արտաքին կազմակերպությունների հետ	Հասարակական պահանջների ոչ լիարժեք

համագործակցություն, որոնք կապող օղակ կհանդիսանան բուհի և հասարակության միջև	ձևակերպումը

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Բուհում առաջիկայում ստեղծել հասարակության հետ կապերի կենտրոն, որը
  - կզբաղվի հասարակության պահանջների վերհանմամբ,
  - կմշակի հասարակությանը լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման ռազմավարության նախագիծ,
  - կմշակի լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների մատուցման ներքին և արտաքին գնահատման գործիքներ:
- Իրականացնել բուհի գնահատման ուղղությամբ հասարակության լայն շերտերի ներգրավում:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: *Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	**Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը** Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն բուհում դեռևս մշակված չէ: Սակայն առանձին ուղղությունով ներկայացված է բուհի ռազմավարական ծրագրում և հաստատված կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերում: Բուհի առաքելության մեջ նույնպես տեսնում ենք՝ *“… Համալսարանն իր առջև դրված նպատակների իրագործումը պլանավորում է իրականացնել հետևյալ գործառույթներով՝* *…* • *արտաքին կապերի ձևավորում, համագործակցություն արտերկրի ուսումնական հաստատությունների հետ, որոնց շրջանակներում ծրագրերի, դասախոսների և ուսանողների փոխանակում:”* Բուհում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների համակարգման նպատակով 2012թ ստեղծվել է առանձին ստորաբաժանում՝ ԵՄԽՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն: **Արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները** Բուհի արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները նկարագրված են ԵՄԽՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության

կենտրոնի կանոնադրությունում:

Հավելված 26. ԵՄԽՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կանոնադրություն

Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագրերը (վերջին 3 տարվա համար)

Բուհը վերջին երեք տարիներին միջազգային համագործակցության ոլորտում՝

- 2011թ-ին ԵՄԽՀ-ն կնքել է պայմանագիր Մոսկվայի ֆինանսա-արդյունաբերական համալսարանի հետ,
  Հավելված 90. ԵՄԽՀ կնքած պայմանագիրը Մոսկվայի ֆինանսա-արդյունաբերական համալսարանի հետ,
- 2012թ-ին ԵՄԽՀ-ն կնքել է փոխըմբռնման հուշագիր Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ,
  Հավելված 91. ԵՄԽՀ կնքած փոխըմբռնման հուշագիրը Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ,
- 2012թ-ին ԵՄԽՀ-ն մասնակցել է միջազգային TIRI կազմակերպության կողմից անցկացված սեմինարներին:,
  Հավելված 92. TIRI կազմակերպության կողմից անցկացված սեմինարների մասնակիցների ցանկ,
- 2014թ-ին Իտալիայի Սապիենզա համալսարան կատարած գործուղման արդյունքում փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվել, շարունակել համագործակցությունը հետագայում որակի ապահովման ոլորտի հետազոտություններ կատարելու ուղղությամբ:

Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար)

Հավելված 93. ԵՄԽՀ գիտ. խորհրդի նիստի N 05/410 արձանագրությունը

Հավելված 94. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի Իտալիայի Սապիենզա համալսարան գործուղման փաթեթ

Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

2012թ համալսարանում ստեղծվել է արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն, որն իր գործունեությամբ ստանձնում է բուհի արտաքին կապերին նպաստող գործունեություն, այդ թվում՝ հանրապետության և արտերկրյա գործատուների, կազմակերպությունների և գիտակրթական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնում:

Արտաքին կապերի զարգացման ուղղությամբ բուհի մինչ այժմ կիրառած քաղաքականության արդյունավետությունը այնքան էլ բարձր չէ: Բուհի ուսանողության և դասախոսական կազմի փոխանակման ծրագրեր դեռևս իրականացված չեն, չկան համատեղ իրականացված հետազոտական կամ ուսումնական ծրագրեր արտերկրյա բուհերի հետ: Բայց կարևորելով ներկայումս միջազգայնացման դերը բուհի միջազգային կրթական դաշտ մտնելու հետ կապված, ԵՄԽՀ-ի ղեկավարությունը արդեն իսկ 2014 թ-ից սկսել է կիրառել նոր մոտեցում այդ ուղղությամբ: Նոր պահանջներ են դրվել բուհի արտաքին կապերի և միջազգայնացման կենտրոնի առաջ համապատասխան գործընթացների խթանման հետ կապված, որոնք առաջ են

բերել նոր հիմնախնդիրներ կապված օտար լեզվի իմացության և տրամադրվող ֆինանսական հնարավորությունների հետ:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:	
Հիմքեր	**Արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքը և դրա գործառույթները** Բուհում 2012թ-ից արտաքին կապերի և միջազգայնացման համար պատասխանատու ենթակառուցվածքն է հանդիսանում Արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնը, որի կազմում ստեղծվել է 1 հաստիք: Կենտրոնի գործառույթները նկարագրված են նրա կանոնադրության մեջ: Հավելված 26. ԵՄԽՀ Արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կանոնադրություն, Սույն կանոնադրության համաձայն՝ *“…Կենտրոնի պատասխանատուն անմիջական պատասխանատվություն է կրում արտաքին կապերի և միջազգային համագործակցության ոլորտում իրականացվող բոլոր աշխատանքների համար:”* **Ենթակառուցվածքի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը** Կենտրոնի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը հիմնվում են հաստատված կանոնադրության վրա: **Ենթակառուցվածքի որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը** Համաձայն կենտրոնի կանոնադրության՝ *“…ԵՄԽՀ-ի արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնը անմիջականորեն ենթարկվում է Որակի ապահովման և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորին”,* ուստի դրա որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը սահմանում է բուհի որակի ապահովման կենտրոնը: Ներկայումս դրանք դեռ հաստատված չեն և գտնվում են մշակման փուլում: **Ենթակառուցվածքի արդյունավետ գործունեության այլ հիմքեր և վերլուծություններ վերջին 3 տարիների կտրվածքով** Կենտրոնի աշխատանքները ըստ էության ակտիվացել են միայն 2014թ-ին, երբ կենտրոնի կազմում ներգրավվեց հաստիքային աշխատող, ուստի դեռ առկա չեն վերլուծություններ արդյունավետ գործունեության վերաբերյալ:
Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչպես արդեն նշվեց, բուհի արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնը ստեղծվել էր 2012թ: Սակայն կենտրոնի աշխատանքները ըստ էության ակտիվացան 2014թ, երբ համապատասխան հաստիքային աշխատողն իր վրա վերցրեց համապատասխան պարտականությունները: Մինչ այդ համապատասխան գործառույթներն իրականացվում էին բուհի ղեկավարության և ՈԱԿ-ի անձնակազմի կողմից: Հաշվի առնելով նշված հանգամանքը, պարզ է դառնում, որ կատարած աշխատանքների արդյունավետության գնահատման և վերլուծման համար դեռ վաղ է խոսել:	

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:	
Հիմքեր	**Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը** Հավելված 95. ԵՄԽՀ-ի և տեղական կազմակերպությունների միջև կնքած պայմանագրերի փաթեթը, Հավելված 90. ԵՄԽՀ կնքած պայմանագիրը Մոսկվայի ֆինանսա-արդյունաբերական համալսարանի հետ, Հավելված 91. ԵՄԽՀ-ն կնքած փոխըմբռնման հուշագիրը Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ, **Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը**

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԵՄԽՀ-ն համագործակցում է ինչպես տեղական, այնպես էլ միջազգային հաստատությունների և կազմակերպությունների հետ, հիմքում դնելով առաջավոր փորձի փոխանակման, գործող արդյունավետ մեխանիզմների ուսումնասիրման և ներդրման սկզբունքները:

Տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունները իրականացվում են կնքված պայմանագրերի, համաձայնագրերի, հուշագրերի, կոնֆերանսների և համատեղ հանդիպումների հիման վրա:

Համալսարանում ուսուցանվող մասնագիտությունների ուսումնական պլանների համապատասխան յուրաքանչյուր տարի կազմակերպվում են ուսումնական, արտադրական, նախադիպլոմային պրակտիկաներ պայմանագրային հիմունքներով:

Համալսարանի ուսանողները իրենց պրակտիկաներն անց են կացնում ստորև բերված ուսումնական հաստատություններում և արտադրական կազմակերպություններում՝

- Երևանի թիվ 75 դպրոց

- Երևանի թիվ 135 դպրոց

- Երևանի թիվ 170 դպրոց

- Երևանի Վ. Տերյանի թիվ 60 դպրոց

- Երևանի Լ. Շանթի թիվ 4 դպրոց

- Երևանի Ա. Միկոյանի անվան թիվ 166 հիմնական դպրոց

- Կոտայքի մարզ գ. Պրոշյանի դպրոց

- Արմավիրի թիվ 8 հիմն. դպրոց

- Արարատի մարզի Նոր Կյուրիի միջնակարգ դպրոց

- Անանիա Շիրակացու անվ. ճեմարանի “Փոքրիկ ճեմարանական” կրթահամալիր

- ՀՊՃՀ

- Երևանի Նոր-Նորք թաղապետարան

-“Մաստեր Սթայլ” ՍՊԸ

-“Մաստեր Պլյուս” լեզուների և համակարգչային գործի ուսուցման կենտրոն

- ՀՀ Փաստաբանների Պալատ

- «ԳԼՈՍՍԱ ԳՈԿՈՒՍ» ՍՊԸ

- “Բյուրակն” ՍՊԸ

- “Գործք” ՍՊԸ

- ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն

- “Արդշինինվեստբանկ” ՓԲԸ

- “Ղ-Տելեկոմ” ՓԲԸ

- «Համայնք և իրավունք»

- ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտեսագիտ. ինստիտուտ

- ՀՀ Ազգային Ժողով

- «Մալխասյան Քոնսալթինգ» ՍՊԸ

- «Էկոնոմիկա և իրավունք»

“Ղ-Տելեկոմ” ՓԲԸ-ի հետ կնքված փոխհամաձայնության հուշագրի համաձայն ԵՄԽՀ-ը նշված կազմակերպության հետ ուսումնաարտադրական պրակտիկա անցկացնելուց բացի իրականացնում է բազմաբնույթ համագործակցային հարաբերություններ, հիմքում դնելով՝

- Համատեղ ուժերով նպաստել հանրապետության կրթական համակարգի զարգացման գործընթացին,

- Իրականացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ և աշխատանքային ծրագրեր:

ԵՄԽՀ-ը անդամակցում է «Պետության կողմից հավատարմագրված հայկական համալսարանների խորհուրդ» ՀԿ-ին:

ՀԿ-ի գործունեության նպատակն է՝

- Փոխհամագործակցության շրջանակներում բուհերի կուտակած փորձի փոխանակում,

- Դասախոսների վերապատրաստում միության համընդհանուր ուժերով,

- ՀՀ կրթության ոլորտում բազմաթիվ այլ հարցերի քննարկումներ:

Միջազգային մակարդակում փոխհամագործակցության և արտաքին կապերի ստեղծման ոլորտում համալսարանը ունեցել է հետևյալ նվաճումները՝

- 2011թ-ին ԵՄԽՀ-ը կնքել է պայմանագիր Մոսկվայի ֆինանսաարդյունաբերական համալսարանի հետ, որի նպատակն է համագործակցության շնորհիվ՝

- Բարձրագույն կրթության և նրա որակի բարձրացում,

- Կրթական ծրագրերի վերանայում և բարելավում,
- Համատեղ գիտակրթական գործունեության իրականացում և նրա որակի բարձրացում:

- 2012թ-ին ԵՄԽՀ-ը կնքել է փոխըմբռնման հուշագիր Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ, հանրային ինտեգրման կրթական ցանցի շրջանակներում համագործակցության վերաբերյալ, որի հիմնական նպատակներն են՝

- Ինտեգրման ոլորտում իրականացնել ուսումնական, գիտահետազոտական աշխատանքներ, նպաստել նոր ուսումնական դասընթացների մշակմանը,
- Զարգացնել ինտեգրումը տնտեսագիտության, մենեջմենթի, իրավագիտության և այլ առարկաների ուղղությամբ՝ մշակելով նոր ուսումնական կուրս՝ մեկ կիսամյակ տևողությամբ, կամ ներառել նոր թեմաներ եղած դասընթացներում:

Եթե վերլուծենք համագործակցության ոլորտում կատարված աշխատանքները, ապա կարող ենք փաստել, որ տեղական կազմակերպությունների հետ համագործակցությունը, որը հիմնականում հիմնված է ուսանողների պրակտիկայի անցկացման վրա, ընթացել է բավական արդյունավետ: Կազմակերպությունների հետ կապը թույլ է տվել գնահատել բուհի ուսանողների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություն է տվել ուսանողների մոտ կուտակել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ, համապատասխան աշխատանքային փորձ:

Ինչ վերաբերում է միջազգային կապերին և համագործակցությանը, ապա այստեղ արդյունավետությունը այնքան էլ բարձր չէ, իսկ ձեռքբերումներից կարելի նշել միայն՝

- ✓ Մասնավորապես, որպես ձեռքբերում կարելի է նշել Տիրի կազմակերպության հետ համագործակցության արդյունքում 2011 թ-ին բուհի մշակած 2 նոր առարկայական ծրագրերը (տես՝ Հավելված 72. Տիրի կազմակերպության հետ համագործակցության արդյունքում բուհի մշակած առարկայական ծրագրերը):
- ✓ 2014թ-ին Սապիենզա համալսարան կատարած գործուղման արդյունքում բուհի ՈԱԿ անձնակազմի անցած վերապատրաստումը և կուտակած համա-պատասխան գիտելիքները և փորձը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Հիմքեր

Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները

2014թ բուհում անցկացվեցին օտար լեզվի (անգլերենի) լրացուցիչ անվճար դասընթացներ ՈԱԿ անձնակազմի, դասախոսական կազմի և ուսանողների ներկայացուցիչների համար:

Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը

Հավելված 65. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի, դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների օտար լեզվի լրացուցիչ դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր

Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը

Անգլերեն լեզվով ներկայացված է բուհի www.xorhamalsaran.info.am ինտերնետային կայքը: Բուհի մյուս www.mkhu.am պաշտոնական կայքի նյութերը ներկայումս թարգմանվում են:

Միջազգայնացումը խթանող այլ մեխանիզմներ

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

	Աշխատակիցներ	2012		2013		2014	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
	Դասավանդող	31	58.45%	30	63.8%	32	62.74%
	Վարչական աշխատող	4	66.7%	4	66.7%	7	77.7%

Օտար լեզուներին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

	Ուսանողներ	2012		2013		2014	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
	Բակալավր	254	35.09%	241	34.42%	258	35.64%
	Մագիստրոս	26	74.28%	27	71.05%	25	70.65%

Օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասավանդվող դասընթացներ/ՄԿԾ-ներ և օտարերկրյա ուսանողների թիվ ըստ տարիների

	Դասընթացի կամ ՄԿԾ-ի անվանումը	2010	2011	2012	2013	2014
	----------	---	---	---	---	---

Օտար լեզուներով դասավանդվող դասընթացներում/ՄԿԾ-ներում ներգրավված ուսանողների թիվը ըստ երկրների

	Երկրներ	2010	2011	2012	2013	2014
	----------	---	---	---	---	---

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում 2014թ 2 փուլով կազմակերպված անգլերեն լեզվի դասընթացների արդյունավետությունը կարելի է բավարար համարել, քանզի դրանք օգնեցին զարգացնել մասնակիցների օտար լեզվի իմացությունը:Վերապատրաստման դասընթացները, սակայն, համընդհանուր բնույթ չկրեցին, և դասախոսների ու ուսանողների միայն փոքր մասը մասնակցեց դասընթացներին:

Համաձայն ՈԱԿ-ի անցկացրած «Բուհի գնահատումը դասախոսների և ուսանողների կողմից» հարցման հետազոտության վերլուծության՝

“…Օտար լեզուների մասով Մ. Խորենացու անվան համալսարանի դասախոսների շրջանում գերակշռում է ռուսերենի, ապա անգլերենի իմացությունը (տես՝ Հավելված 1՝, Գրաֆիկ 2), որը դասախոսները ուզում են բարելավել, ինչը ցույց է տալիս Հավելված 1՝, Գրաֆիկ 3-ը, 76%-ը ուզում են օտար լեզվի վերապատրաստում անցնել: Ընդհանուր առմամբ բուհում օտար լեզվի իմացության մակարդակը կարելի է գնահատել միջին, ինչը երևում է նաև ուսանողների հարցման արդյունքում (տես՝Հավելված 1, Գրաֆիկ 2):”

Հետևաբար կարելի է եզրակացնել, որ այս ուղղությամբ բուհը դեռ ունի անելիքներ:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

Բուհում բենչմարքինգ դեռ չի իրականացվել:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Համալսարանի ուսումնառողների ուսումնաարտադրական պրակտիկայի կազմակերպումը հայրենական հեղինակավոր հանրակրթական դպրոցներում և կազմակերպություններում	Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն բուհում դեռևս մշակված չէ:
Բուհում ստեղծված է արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոն, հաստատվել է նրա կանոնադրությունը	Օտար լեզվի (անգլերենի) իմացությամբ պրոֆեսորադասախոսական կազմի ոչ լիարժեք լինելը
Անցկացվել են օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ	Միջազգային համագործակցության ոլորտում բուհի ոչ մեծ նվաճումները
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
Գործուղման արդյունքում ստեղծվել են հնարավորություններ Հռոմի Սապիենզա համալսարանի հետ համագործակցություն սկսելու համար	Արտասահմանյան բուհերի սակավ հետաքրքրվածությունը համագործակցություն սկսելու հետ կապված:

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Մշակել արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարություն,
- Կազմակերպել օտար լեզվի լրացուցիչ դասընթացներ ավելի մեծ լսարանների համար,
- Ստեղծել նոր համագործակցություններ միջազգային ոլորտում:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:*

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	**Որակի ապահովման ներքին համակարգի ձեռնարկը** Հավելված 34. ԵՄԽՀ որակի ապահովման ձեռնարկ Որակի ապահովման նշված ուղեցույց-ձեռնարկը հրատարակվել է ՀԲ դրամաշնորհի ֆինանսավորմամբ: Այն իր մեջ ներառում է բուհում որակի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ապահովման համար ընդունված կարգեր և ընթացակարգեր: Ձեռնարկում տեղ են գտել ՈԱԿ-ի կատարած աշխատանքների արդյունքները և մշակած փաստաթղթերը, որակի ապահովման ոլորտում ՀՀ-ում գործող կարգեր: **Որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը** Հավելված 25. ԵՄԽՀ ՈԱԿ կանոնադրությունը

	Բուհում ՈԱԿ կանոնադրության հիման վրա մշակվել է որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը՝ Հավելված 96. ԵՄԽՀ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը **Այլ փաստաթղթեր** Հավելված 50. ԵՄԽՀ կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը (նախագիծ) Հավելված 97. ԵՄԽՀ որակի ներքին ապահովման սխեմատիկ կառուցվածքը:

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի ՈԱԿ-ը ստեղծվել է 2011թ հոկտեմբերի 28-ին ռեկտորի հրամանի համաձայն (տես՝ Հավելված 98. ԵՄԽՀ ռեկտորի հրամանը ՈԱԿ-ի ստեղծման վերաբերյալ): Ստեղծումից ի վեր ՈԱԿ-ը ձեռնամուխ է եղել բուհում որակի ապահովման համակարգի ստեղծմանը, բուհի իրավանորմատիվային փաստաթղթերի ստեղծմանն ու հստակեցմանը (տես՝ բուհում առկա կանոնակարգերի ցանկը վերջում ներկայացված **Հավելվածների** շարքում), շահակիցների շրջանում իրազեկվածության բարձրացմանը: 2011թ հոկտեմբերի 31-ին հաստատվել է ՈԱԿ-ի կանոնադրությունը, որի հիման վրա 2014թ ՈԱԿ-ի կողմից մշակվել է բուհում որակի ներքին ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը: Վերջիններիս արդյունավետությունը կարելի է դատել նախանշված ուղղություններով կատարված աշխատանքներով: Այսպես.

- ՈԱԿ քաղաքականության *“Համալսարանում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի մասնագիտությունների համապատասխանեցում պետական կրթական չափորոշիչներին”* և *“Կրթական ծրագրերի որակի մշտադիտարկում, պարբերաբար վերանայում և բարելավում”* ուղղություններով կատարվել են բուհի ՄԿԾ-ների վերանայումներ, առարկայական ծրագրերի թարմացումներ և հստակեցումներ, վերանայվել և բարելավվել են ուսումնական պլանները, որոնց վերջնական վերանայված տարբերակները հաստատվել են 2013թ.: ՈԱԿ-ի կողմից մշակվել է բուհի կրթական ծրագրերի որակի ներքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի նախագիծը: Ներկայումս ընթացիկ փուլում է գտնվում բուհի ՄԿԾ-ների վերանայումը կրթական վերջնարդյունքների հիման վրա՝ նոր չափանիշներին համապատասխան:

- ՈԱԿ քաղաքականության *“Համալսարանում որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների հնարավորինս առավելագույն ներգրավվածություն”* ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ: Իրականացվել են խորհրդատվական աշխատանքներ բուհի ներքին անձնակազմի համար, պարբերաբար բնույթ են կրում ՈԱԿ-ում կազմակերպվող հանդիպումներն ու խմբային քննարկումները բուհի ուսանողների, դասախոսների, շրջանավարտների հետ: Ներքին շահակիցների տարբեր լսարանների առաջ ներկայացվել են պրեզենտացիաներ՝ նվիրված կրթության որակի ապահովման ոլորտում ներգրավվածության դերին: Մշակվել են հետադարձ կապի մի շարք մեխանիզմներ, որոնց գործարկման արդյունքում կատարվել են վերլուծություններ (շահակիցների ներգրավվածության առավել մանրամասն նկարագրությունը և հիմքերը տես՝ **Չափորոշիչ գ**-ում):

- Հետազոտությունները, ուսումնասիրություններն ու վերլուծությունները նվիրված էին նաև ՈԱԿ քաղաքականության *“Կրթական միջավայրի համար անհրաժեշտ*

ռեսուրսների և պրոֆեսորադասախոսական կազմի որակի վերահսկում” կետի բավարարմանը: Ստացված արդյունքների հիման վրա բուհի որոշ ոլորտներում իրականացվել են բարելավման քայլեր:

- ՈԱԿ քաղաքականության *“Որակի ապահովման գործընթացների իրականացման վերաբերյալ լայն տեղեկատվության և հասարակայնության ապահովում”* ուղղությամբ բացի վերը նշված շահակիցների ներգրավվածությանը միտված գործընթացներին, կատարվել են մի շարք աշխատանքներ 2014թ-ին: Այդ թվում՝ ինտերնետային բուհի կայքում նախատեսված հատուկ “ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ” ենթաբաժնում (ԿԱՌՈՒՑԱՎԾՔ բաժնի տակ) տեղադրվել են համապատասխան տեղեկատվություն որակի ապահովման կենտրոնի հետ կապված: ՈԱԿ-ի կողմից մշակվել և տպագրվել են ուղեցույց-բուկլետներ, ինչպես նաև ՀԲ դրամաշնորհի ֆինանսավորմամբ բուհում հրատարակվել են “Ուսանողի ուղեցույց” և “Պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց”, որոնք ներառում են համապատասխան ոլորտներում բուհում առկա որակի ապահովման մեխանիզմներն ու գործիքները, կանոնակարգող փաստաթղթերը: Արտաքին շահակիցների համար տպագրվել են ՈԱԿ-ի աշխատանքների վերաբերյալ տեղեկատվական հոդվածներ տպագիր մամուլում, պատրաստվել են հեռուստատեսային հաղորդումներ ընդհանուր 30ր տևողությամբ:

- ՈԱԿ քաղաքականության *“Համալսարանում որակի ապահովման քաղաքականության և գործընթացների համապատասխանեցում միջազգային արդյունավետ մոդելներին”* ուղղությամբ աշխատանքները կատարվել են ինչպես առկա քաղաքականության և գործընթացների մշակման ժամանակ, այնպես էլ ներկայումս: Մասնավորապես 2014թ վերջին “Standards and Guidelines for Quality Assurance in the European Higher Education Area” փաստաթղթի ուսումնասիրման արդյունքում պարզ դարձավ, որ բուհում գործող քաղաքականությունը կարիք ունի վերանայման և հստակեցման՝ եվրոպական մոդելին առավել համապատասխանելու նպատակով:

Այսպիսով, ի մի բերելով վերը նշված փաստերը, կարելի է եզրակացնել, որ բուհի ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման արդյունավետությունը նորմալ մակարդակի վրա է: Բացի այդ, ընդունված քաղաքականությունը արդյունավետ էր, քանի որ համապատասխանում էր ՈԱԿ-ի որդեգրած առաքելությանն ու նպատակներին (տես՝ Հավելված 25. ԵՄԽՀ ՈԱԿ կանոնադրություն), համենայն դեպս մինչ այժմ, այսպես կոչված անցումային շրջանի համար: Չնայած այդ փաստին ինչպես արդեն նշվեց, ՈԱԿ քաղաքականությունը կարիք ունի վերանայման: Վերանայման արդյունքում այժմ մշակման փուլում է գտնվում որակի ապահովման նոր քաղաքականությունը (տես՝ Հավելված 115. Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր (նախագիծ)):

ՉԱՓՈՐՈՇԻՉ բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Հիմքեր

Որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածությունը կարգավորող փաստաթղթերը

Հավելված 98. ԵՄԽՀ ռեկտորի հրաման ՈԱԿ ստեղծման վերաբերյալ

Հավելված 25. ԵՄԽՀ ՈԱԿ կանոնադրությունը,

Հավելված 99. ՈԱԿ անձնակազմի աշխատանքային պայմանագրեր,

Հավելված 100. ԿԲ դրամաշնորհի շրջանակներում հանձնաժողովների

	ստեղծման համար ՈԱԿ ղեկավարի զեկուցագիրը և ԵՄԽՀ ռեկտորի հրամանը **Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը** Հավելված 53. ԵՄԽՀ գիտ. խորհրդի արձանագրություններ Հավելված 79. Դրամաշնորհի ծրագրով ԵՄԽՀ-ի ստացած ֆինանսների բաշխումը **Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող նյութական ռեսուրսների բաշխումը կարգավորող փաստաթղթերը** Հավելված 53. ԵՄԽՀ գիտ. խորհրդի արձանագրություններ **Որակի ապահովման ենթակառուցվածքը՝ ներառյալ մարդկային ռեսուրսները և նրանց աշխատանքային նկարագրերը** Հավելված 25. ԵՄԽՀ ՈԱԿ կանոնադրությունը Հավելված 99. ՈԱԿ անձնակազմի աշխատանքային պայմանագրերը
Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Երբ 2011թ հոկտեմբերին ստեղծվեց ՈԱԿ-ը, իր կազմում որպես հաստիքային աշխատող ընդգրկված էր ընդամենը 1 աշխատող, որն էլ ստանձնել էր ՈԱԿ ղեկավարի պաշտոնը: 2013թ. ՈԱԿ կազմում ներգրավվեց նաև սոցիոլոգ, որի գործառույթների մեջ մտնում էր բուհում հետադարձ կապի մեխանիզմների հստակեցումը, մշակված հարցաթերթիկների վերանայումն ու ճշգրտումը, բուհում սոցիոլոգիական հետազոտությունների անցկացումը (տես՝ Հավելված 99. ՈԱԿ անձնակազմի աշխատանքային պայմանագրերում՝ սոցիոլոգ Մարինե Սիմոնյանի պայմանագրերը): Ներկայումս ՈԱԿ կազմում կան 2 հաստիքային աշխատող: ՈԱԿ կազմում մարդկային ռեսուրսների բավարարման նպատակով բուհում որակի ապահովման աշխատանքներին, որպես ՈԱԿ կազմ ներգրավվել են՝ • բուհի ռեկտորը, • դասախոսական կազմի 2 ներկայացուցիչներ, • ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչ, • բուհի արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի ղեկավարը, • բուհի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի ղեկավարը, • բուհի ուս. խորհրդի նախագահը, • բուհի ուս. գիտական ընկերության ղեկավարը, • ուսանողության 2 այլ ներկայացուցիչներ Այդ ներգրավվածությունը հնարավորություն է տալիս որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների մակարդակը համարել բավարար: Չնայած քանակական բավարարվածության, խիստ զգացվում է տվյալ ոլորտում մասնագիտական փորձի և գիտելիքների պակաս այդ գործընթացներում ներգրավված որոշ անձանց մոտ: Առավել փորձառու են ՈԱԿ կազմի այն անձինք, ովքեր մասնակցել են ՈԱԱԿ-ի կազմակերպած կոնֆերանսներին և վերապատրաստումներին (տես՝ Հավելված 101. ԵՄԽՀ ՈԱԿ մասնակցած կոնֆերանսներ և վերապատրաստումներ): Այդ բացը լրացնելու համար բուհում կազմակերպվել են ներքին վերապատրաստումներ ինչպես ՈԱԿ-ի անձնակազմի կողմից (տես՝ Հավելված 102. ԵՄԽՀ ՈԱԿ անցկացրած վերապատրաստումներ և սեմինարներ), այնպես էլ արտաքին փորձագետի հրավիրմամբ (տես՝ Հավելված 66. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական	

կազմի համար որակի ապահովման թեմաներով վերապատրաստումների և դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր): Բացի այդ վերապատրաստումների բուհում ՈԱԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում են խորհրդատվական աշխատանքներ և սեմինարներ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար: Հաշվի առնելով այն փաստը, որ որակի ապահովման գործընթացներում ներգրավված անձինք, բացի հաստիքային աշխատողներից, այլ բնագավառում աշխատանքները համատեղում են իրենց հիմնական աշխատանքի հետ, ուստի զբաղվածության և ծանրաբեռնվածության պատճառով ժամանակային ռեսուրսների բաշխումը որոշ դեպքերում այնքան էլ արդյունավետ չէ: ՈԱԿ-ի աշխատանքների կազմակերպման համար բուհի կողմից տրամադրվել է առանձին աշխատասենյակ, որը հնարավորություն է տալիս նաև անցկացնել ժողովներ, կազմակերպել հանդիպումներ, քննարկումներ և դասընթացներ մինչև 20 մասնակիցներով: ՈԱԿ-ի նյութական ռեսուրսների բավարարման համար զգալի ներդրում ունեցավ ՀԲ-ի տրամադրած դրամաշնորհը “ՀՀ բուհերում ՈԱԿ կազմերի ստեղծման կամ հետագա զարգացման նպատակով”: Դրամաշնորհի ֆինանսավորմամբ ներկայումս ՈԱԿ-ը վերազինվել է ժամանակակից կահույքով և տեխնիկայով, գրենական պիտույքներով և ծրագրային ապահովմամբ: Բացի այդ բուհի ֆինանսավորմամբ մեկ տարով ձեռք է բերվել սոցիոլոգիական հարցաթերթիկների մշակման և ավտոման վերլուծությունների իրականացման համար հատուկ սոցիոլոգիական օնլայն ծրագիր՝ QuestionPro, որը մեծ նպաստ ունեցավ բուհում իրականացված հարցումների և վերլուծությունների կատարման ժամանակ: ՈԱԿ-ին տրամադրվող ֆինանսական ռեսուրսների բաշխումը իրականացվում է գիտ. խորհրդի հաստատմաբ՝ համապատասխան զեկուցագրերի ներկայացման հիման վրա: Հաշվի առնելով բուհի ֆինանսական ռեսուրսների սահմանափակությունը, այս ուղղությամբ արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն կա:	
ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:	
Հիմքեր	**Որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների և այլ շահակիցների ներգրավվածությունը հաստատող հիմքերը** Հավելված 53. ԵՄԽՀ գիտ. խորհրդի նիստերի արձանագրություններ, Հավելված 100. ԿԲ դրամաշնորհի շրջանակներում հանձնաժողովների ստեղծման համար ՈԱԿ ղեկավարի զեկուցագիրը և ԵՄԽՀ ռեկտորի հրամանը Հավելված 103. ՈԱԿ խմբային քննարկումների արձանագրություն, Հավելված 42. Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ, Հավելված 36. ԵՄԽՀ պրակտիկայի անցկացման վերաբերյալ վերլուծություն ուսանողների շրջանում, Հավելված 104. ՈԱԿ վերլուծություն շրջանավարտների օնլայն հարցման, Հավելված 105. ԵՄԽՀ ուս, պլանների վերաբերյալ արտաքին մասնագետների կարծիքներ, Հավելված 106. ՈԱԿ պրեզենտացիաներ, Հավելված 107. ԵՄԽՀ և Էջմիածնի Գ. Լուսավորիչ համալսարանի ՈԱԿ-ների և ուսանողների հանդիպման փաթեթ, Հավելված 108. ՈԱԿ մշակած հարցաթերթիկներ շահակիցների հետադարձ կապի համար, Սույն ինքնավերլուծությունը:

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Հաշվի առնելով ներկայացված հիմքերը կարելի է փաստել, որ բուհում որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածության աստիճանը բավարար է: Չնայած դրան, ՈԱԿ-ը նպատակ ունի այդ գործընթացներում ներգրավել ուսանողների և դասախոսների մեծամասնությանը, ինչը հնարավորություն կտա լսելի դարձնել մեծամասնության կարծիքը և դուրս բերել կարիքները: Ներգրավվածության արդյունավետությանը նպաստում են նաև ՈԱԿ կազմում ներգրավված տարբեր օղակների ներակայացուցիչները: Արտաքին շահակիցների մասով ներգրավվածության արդյունավետությունը զիջում է, ներքինի համեմատ: Այդ ուղղությամբ ներգրավվածության հիմքեր կարելի է նշել ՈԱԱԿ-ի կողմից անցկացվող կոնֆերանսներն ու հանդիպումները, խորհրդատվություններն ու վերապատրաստումները, որոնք հնարավորություն են տալիս ճիշտ ուղու վրա դնել պլանավորվող և իրականացվող գործընթացները: Բուհում կիրառվել է արտաքին մասնագետների կողմից բուհում գործող ուս. պլանների վերաբերյալ կարծիք և գնահատական ստանալու մեխանիզմը: Մշակվել են պրակտիկա անցկացնող կազմակերպությունների և գործատուների հարցման թերթիկներ: Համապատասխան հարցումները, սակայն, դեռ չեն իրականացվել: Բուհի ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունն ու տեղեկացվածությունը խթանելուն է միտված բուհում հրատարակված հետևյալ ուղեցույց-ձեռնարկները՝ • ուսանողի ուղեցույց, • պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց, • որակի ապահովման ձեռնարկ որոնք բաժանվել են ներքին և արտաքին շահակիցների շրջանում բուհում 2014թ դեկտեմբերին կազմակերպված կոնֆերանսի ընթացքում (տես՝ Հավելված 84. ԵՄԽՀ կազմակերպած կոնֆերանսի վերաբերյալ):
ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:	
Հիմքեր	**Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը** Բուհում որակի ներքին ապահովման համակարգի վերանայման հաստատված քաղաքականություն և ընթացակարգ մինչ այժմ առկա չի եղել, այժմ այն գտնվում է մշակման փուլում և առկա է նախագծի տեսքով: Հավելված 116. ԵՄԽՀ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր (նախագիծ) Չնայած դրան, վերանայման գործընթացները իրականացվել են պարբերաբար ըստ անհրաժեշտության՝ դիտարկումների և հետազոտությունների հիման վրա: **Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները** Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմներ և գործիքներ են հանդիսանում՝ • Գործընթացների մշտադիտարկումը: • Առարկայական ծրագրերի շարունակական վերանայումը և բարելավումը: • Ուսանողների ամփոփիչ ատեստավորումների արդյունքների

	քննարկումներն ու դրանց արդյունավետությանը միտված միջոցառումները: • Պարբերաբար իրականացվող դասալսումները: • Ուսումնառության որակին առնչվող դիտարկումները: • Իրականացվող հետազոտությունների և ուսումնասիրությունների արդյունքների համադրումը ակնկալվող արդյունքների հետ: **Համապատասխան այլ հիմքեր և վերլուծություններ** Որակի ներքին ապահովման վերանայման ուղղությամբ կատարված քայլերի հիմքեր են հանդիսանում 2013-14թթ բուհում իրականացված բարելավումները այդ ոլորտում: Դա են վկայում՝ • բուհի իրավանորմատիվային փաստաթղթերի վերանայումը, հստակեցումն ու նոր փաստաթղթերի մշակումը, • շահակիցների հետադարձ կապի ամրապնդման ուղղությամբ ստեղծված նոր մեխանիզմները, • դասախոսական կազմի գնահատման մեխանիզմները, • նախկին սոց. հարցաթերթիկների արդիականացումը ուսանողների կարիքների ուսումնասիրման առավել արդյունավետ մոտեցումների հիման վրա, • բուհում որակի ներքին ապահովման սխեմատիկ կառուցվածքի հստակեցումը, • իրականացված վերլուծությունները և բարելավման քայլերը, • ինքնավերլուծության վերանայումը, և այլն:
Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: ՈԱԿ-ի կողմից իրականացվել են բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վերանայման և դրանց հիման վրա որակի ապահովման համակարգի վերանայման և բարելավման գործընթացներ: Բուհում որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը կարելի է դատել մինչ այժմ կատարած աշխատանքներից և այդ ոլորտում ունեցած ձեռքբերումներից: Իր գործունեության 3 տարիների ընթացքում ՈԱԿ-ը արձանագրել է որոշակի հաջողություններ բուհում որակի ապահովման համակարգի վերանայման արդյունքում: Ստեղծվել է սեփական գործունեության որակի նկատմամբ ինքնաքննադատ մոտեցում, հատկապես ղեկավար օղակներում: Վերանայվել է մոտեցումը կրթության որակի ապահովման ուղղությամբ և որդեգրվել նոր մարտավարություն: Բուհում որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները բնականաբար սպառիչ չեն: Դրանք հետագայում ևս կատարելագործվելու են և ըստ անհրաժեշտության ներդրվելու են նոր մեխանիզմներ:
Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն): Մինչ այժմ բուհում բենչմարքինգ չի իրականացվել, սակայն կատարվել են համեմատական վերլուծություններ և դիտարկումներ, ինչպես ՀՀ այնպես էլ արտերկրյա որակի ապահովման մոդելների: Համացանցից մեծ քանակությամբ նյութ են ուսումնասիրվել: Որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի

մշակման համար համալսարանը առաջնորդվել է ՈԱԱԿ-ի կողմից բուհերին տրամադրված որակի ապահովման գործընթացների վերաբերյալ ուղեցույց-ձեռնարկներով, որոնցում ներկայացված են նաև արտասահմանյան առաջավոր փորձն այդ ոլորտում: Մեծ ներդրում ունեն նաև ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված կոնֆերանսներն ու դրանց ժամանակ ներկայացված վերլուծությունները, որոնք ներառում են նաև փորձնական հավատարմագրում անցած հայրենական բուհերի կուտակած փորձի ուսումնասիրություն որակի ապահովման ոլորտում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Հիմքեր	**Տարեկան ինքնավերլուծությունները և հաշվետվությունները ըստ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների** Բուհում նոր ձևավորված չափանիշներով և չափորաշիչներով ինքնավերլուծության իրականացման առաջին փորձը կատարվել է 2012-13թթ: Մինչ այդ բուհը 2001 և 2004 թթ իրականացրել էր ինքնավերլուծություններ հավատարմագրման նախկին պահանջներին համապատասխան: Երբ 2014թ վերանայվեց նախկին ինքնավերլուծությունը, պարզ դարձավ, որ ինքնավերլուծության առաջին տարբերակը ներկայացված էր ոչ վերլուծական մոտեցմամբ, ինչպես պահանջվում էր ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշներում և չափորոշիչներում: Դա պայմանավորված էր ինքնավերլուծություն իրականացվող թիմի փորձառության պակասով: 2013-14թթ բուհի ՈԱԿ-ը մասնակցեց որակի ապահովման ոլորտում տարբեր կոնֆերանսների և հանդիպումների, անցավ համապատասխան վերապատրաստումներ ինչպես բուհում, այնպես էլ արտերկրում: Արդյունքում բուհի ինքնավերլուծության փաթեթը էական փոփոխությունների ենթարկվեց, գրվեց նոր ոճով և մոտեցմամբ, ինչի արդյունքում վերանայված տարբերակը առավել համապատասխանեցվեց ՈԱԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների պահանջներին:

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ՈԱԿ-ի կողմից վերանայվել և ճշգրտվել են համալսարանի գործունեության վերաբերյալ փաստաթղթային բոլոր հիմքերը, այդ թվում մի շարք կանոնադրություններ և կանոնակարգեր: Իրականացվել են բազմաթիվ ուսումնասիրություններ ոլորտի այլ հեղինակավոր հաստատությունների և բուհերի փորձի ուսումնասիրման նպատակով:

Հիմքերի հավաստիությունը ապահովելու համար բուհում իրականացվել են հետազոտություններ և վերլուծություններ արտաքին սոցիոլոգի հրավիրմամբ, ինչը ապահովել է օբյեկտիվ հետազոտման հիմքեր: Արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքեր ապահովելու նպատակով անցկացվել են մի շարք հարցումներ, հանդիպումներ և քննարկումներ ուսանողության, դասախոսության և շրջանավարտների շրջանում: Արդյունքները ներկայացվել են ներքին շահակիցների հետ ՈԱԿ-ում կազմակերպված հանդիպման ընթացքում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:	
Հիմքեր	**Շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները և համապատասխան փաստաթղթերը** Շահակիցների տեղեկացվածությունն ապահովելու համար բուհը կիրառում է հետևյալ մեխանիզմները՝ • Կոլեգիալ կառավարման մարմիններում ներկայացուցիչների առկայությամբ, • ինտերնետային բուհի կայքում նախատեսված բաժնում տեղադրվել են համապատասխան տեղեկատվություն որակի ապահովման կենտրոնի հետ կապված www.mkhu.am, • ակտիվ գործում է բուհի ֆեյսբուքյան էջը, որտեղ տեղադրվում են տեղեկատվություն բուհում տեղի ունեցող միջոցառումների վերաբերյալ, https://www.facebook.com/pages/%D4%B5%D6%80%D6%87%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%84%D5%B8%D5%BE%D5%BD%D5%A5%D5%BD-%D4%BD%D5%B8%D6%80%D5%A5%D5%B6%D5%A1%D6%81%D5%B8%D6%82-%D5%A1%D5%B6%D5%BE%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AC%D5%BD%D5%A1%D6%80%D5%A1%D5%B6/758574120824806 • Ռեկտորի տարեկան հաշվետվություններում ներկայացվում է «Որակի ապահովում» թեմայով ձեռքբերումները, Հավելված 20. ԵՄԽՀ ռեկտորի հաշվետվությունները, • ՈԱԿ-ի կողմից մշակվել և հրատարակվել են ուղեցույց-բուկլետներ ՈԱԿ կատարած աշխատանքների և ձեռքբերումների վերաբերյալ, Հավելված 109. ՈԱԿ մշակած ուղեցույց-բուկլետ • բուհում կազմակերպվել է կոնֆերանս «ՈԱԿ կատարած աշխատանքներ, ձեռքբերումներ և ապագայի մարտահրավերներ» խորագրով, Հավելված 84. ԵՄԽՀ կոնֆերանսի վերաբերյալ փաստաթղթեր, • Բուհում հրատարակվել են՝ Հավելված 40. ԵՄԽՀ ուսանողի ուղեցույց Հավելված 110. ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց, Հավելված 34. ԵՄԽՀ որակի ապահովման ձեռնարկ, • Մամուլում տպագրվել են տեղեկատվական հոդվածներ ՈԱԿ-ի վերաբերյալ Հավելված 87. ԵՄԽՀ տպագրություններ մամուլում, • Հեռուստատեսությամբ ցուցադրվել են տեղեկատվական հաղորդումներ ՈԱԿ-ի վերաբերյալ, Հավելված 88. ԵՄԽՀ պատրաստած տեղեկատվական տեսաֆիլմեր, • Բուհում կազմակերպվել են վերապատրաստումներ և դասընթացներ ՈԱԿ անձնակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի համար, Հավելված 66. ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար որակի ապահովման թեմաներով վերապատրաստումների

	և դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր, • ՈԱԿ-ի կողմից կազմակերպվել են հանդիպումներ ներքին շահակիցների շրջանում, որոնց ընթացքում ներկայացվել են տեղեկատվական պրեզենտացիաներ: **Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման/վերլուծության արդյունքները մակարդակը** Բուհում առանձին խմբերի հետ կազմակերպվող հանդիպումների արդյունքում պարզ է դարձել, որ ներքին շահակիցների մոտ որակի ապահովման ոլորտի իրազեկվածության մակարդակի էական բարձրացում է նկատվել հատկապես 2014թ-ին: Դրա հիմնական պատճառը 2013-14թթ վերը նկարագրված ծավալուն գործընթացներն էին, որոնց առաջնահերթ նպատակը տեղեկացվածության մակարդակի բարձրացումն էր:

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմները և գործընթացները, որոնք նկարագրված են հիմքերում, ներդրվել և իրականացվել են՝ ելնելով ընթացիկ պահանջներից և կատարված վերլուծությունների արդյունքներից: Դրանց արդյունավետության մասին կարելի է վկայել՝ հիմնվելով որակի ապահովման գործընթացներում բուհի անձնակազմի օրեցօր աճող մասնակցությամբ և հետաքրքրվածությամբ: Արդեն իսկ առանձնացվել են ուսանողների ակտիվ ներկայացուցիչներ, որոնք իրենց ստացած գիտելիքները փոխանցում են մյուս ուսանողներին: Բուհում մեծ ոգևորությամբ ընդունվեց որակի ապահովման հետ կապված ուղեցույցների հրատարակումը: Բուհում կազմակերպված որակի ապահովման թեմայով կոնֆերանսի ժամանակ ելույթներ ունեցան նաև բուհի դասախոսներ և ուսանողներ: ՈԱԿ-ում կազմակերպվող պարբերական հանդիպումներն ու քննարկումները, դասախոսների և ուսանողների հետ հետզհետե դառնում են ավելի բովանդակային:

Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Գործում է որակի ապահովման կենտրոն, որի համար հաստատվել է համապատասխան կանոնադրություն, քաղաքականություն և ընթացակարգեր:	ՈԱԿ անձնակազմի ոչ բոլոր անդամներն են հասցրել կուտակել անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և փորձ
Հրատարակվել են որակի ապահովմանը նվիրված ուղեցույցներ ուսանողների և դասախոսների համար, և որակի ապահովման ձեռնարկ:	Ոչ բոլոր դասախոսներն ու ուսանողներն են ներգրավված որակի ապահովման աշխատանքներում
Իրականացվել են լայնածավալ աշխատանքներ շահակիցների շրջանում բուհում որակի ապահովման հետ կապված տեղեկացվածության մակարդակի	Բուհում բենչմարքինգ դեռ չի իրականացվել

բարձրացման համար	
Որակի ապահովման համար ՈԱԿ-ին տրամադրվել են համապատասխան անհրաժեշտ ռեսուրսներ, ՈԱԿ-ը վերազինվել է ժամանակակից կահույքով և տեխնիկայով:	Բուհում շահակիցների տեղեկացվածության մակարդակի ընդհանուր վերլուծություն իրականացված չէ:
ԱՐՏԱՔԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՐՏԱՔԻՆ ՎՏԱՆԳՆԵՐ
ՀԲ "Կրթության որակ և համապատասխանություն" երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում որակի ապահովման ներբուհական համակարգի բարելավման նպատակով դրամաշնորհի շահումը, ինչը ֆինանսական և փորձագիտական լրացուցիչ հնարավորություն ընձեռեց որակի ապահովման համակարգի զարգացման ուղղությամբ:	Որակի ապահովման ուղղությամբ պլանավորված գործողությունների խոչընդոտումը արտաքին գործոնների հետ կապված
Համագործակցությունը ՄԿՈԱԱԿ-ի և այլ բուհերի որակի ապահովման կառույցների հետ հնարավորություն է տալիս ձեռք բերել համապատասխան փորձ և գիտելիքներ	

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարումը բուհը հնարավոր է համարում հետևյալ ուղիներով՝

- Շարունակել որակի ապահովման թեմայով բուհում մեկնարկած վերապատրաստումներն ու դասընթացները, ՈԱԿ անձնակազմի բոլոր անդամների և մասնակիցների համապատասխան կոմպետենցիաների ձեռքբերման նպատակով,
- Բուհի ներքին շահակիցների ներգրավման աշխատանքները դարձնել մասսայական, ընդգրկելով ավելի լայն շերտեր,
- Այլ բուհերի հետ համագործակցության միջոցով իրականացնել որոշակի ուղղություններով բենչմարքինգ,
- Կատարել վերլուծություններ բուհում կատարվող ՈԱԿ աշխատանքների վերաբերյալ շահակիցների իրազեկվածության մակարդակի ճշգրիտ աստիճանը որոշելու համար,
- Որակի ապահովման հետ կապված գործողությունները պլանավորել այնպես, որ հնարավորինս քիչ ներազդեցություն ունենան արտաքին գործոններով պայմանավորված խոչընդոտները:

ԵՄԽՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

Հավելվածի N	Անվանում
1.	ԵՄԽՀ-ի կանոնադրությունը, որպես ՍՊԸ
2.	ԵՄԽՀ-ի կանոնադրությունը
3.	ԵՄԽՀ 2004թ ինքնավերլուծությունը
4.	Քաղվածք ԵՄԽՀ ռազմավարական ծրագրից
5.	ԵՄԽՀ առաքելությունը (վերանայված)
6.	ԵՄԽՀ-ի 2011-15թթ ռազմավարական ծրագիրը
7.	ԵՄԽՀ կառավարման խորհրդի N 3 նիստի արձանագրությունը
8.	ԵՄԽՀ-ի 2011-15թթ ռազմավարական ծրագիրը (վերանայված տարբերակ)
9.	ԵՄԽՀ կառավարման խորհրդի N 7 նիստի արձանագրությունը
10.	ԵՄԽՀ-ի կառավարման խորհրդի ձևավորման կարգը
11.	ԵՄԽՀ-ի գիտ. խորհրդի կանոնակարգը
12.	ԵՄԽՀ-ի ֆակուլտետի խորհրդի կանոնակարգը
13.	ԵՄԽՀ-ի շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կանոնադրությունը
14.	ԵՄԽՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունը
15.	ԵՄԽՀ-ի ուսանողական գիտ. ընկերության կանոնադրությունը
16.	ԵՄԽՀ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգը
17.	ԵՄԽՀ անձնակազմի (այդ թվում ուսանողների և դասախոսների) իրավական պաշտպանի կանոնադրությունը
18.	ԵՄԽՀ ուսանողների կողմից դիմում-բողոքների ներկայացման, քննարկման և որոշումներ կայացնելու մասին կարգը
19.	ԵՄԽՀ գիտ. խորհրդի 13.12.2013թ № 04/312 նիստի արձանագրությունը
20.	ԵՄԽՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններ
21.	ԵՄԽՀ վարչական և ուսումնաօժանդակ կազմի հաշվետվության և պլանավորման թերթիկների ձևաչափեր
22.	ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի հաշվետվության թերթիկի ձևաչափ
23.	ԵՄԽՀ կառավարման խորհրդի աշխատակարգը

24.	ԵՄԽՀ ամբիոնների կանոնակարգը
25.	ԵՄԽՀ որակի ապահովման կենտրոնի կանոնադրությունը
26.	ԵՄԽՀ արտաքին կապերի և միջազգային համագործակցության կենտրոնի կանոնադրությունը
27.	ԵՄԽՀ պրակտիկայի բաժնի կանոնակարգը
28.	ԵՄԽՀ արխիվի կանոնակարգը,
29.	ԵՄԽՀ ռեկտորի ընտրության ընթացակարգը
30.	ԵՄԽՀ ֆակուլտետների դեկանների ընտրության կարգը
31.	ԵՄԽՀ ամբիոնների վարիչների ընտրության կարգը
32.	ԵՄԽՀ կառուցվածքային սխեման
33.	ԵՄԽՀ դրամաշնորհային ծրագրի իրականացման ժամանակացույց
34.	ԵՄԽՀ որակի ապահովման ձեռնարկ
35. 1.	ԵՄԽՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները
35. 2.	ԵՄԽՀ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները
35. 3.	ԵՄԽՀ «Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները
35. 4.	ԵՄԽՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքները, նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները
36.	ԵՄԽՀ պրակտիկայի անցկացման վերաբերյալ վերլուծություն ուսանողների շրջանում
37.	ԵՄԽՀ բակալավրի ուսանողների գիտելիքների գնահատման կարգը
38.	ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ
39.	ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ
40.	ԵՄԽՀ Ուսանողի ուղեցույց
41.	ԵՄԽՀ քննական տեղեկագրի լրացման կարգ
42.	Բուհի գնահատման հետազոտությունների և վերլուծության փաթեթ
43.	Ուսանողների և դասախոսների կողմից գնահատման արդյունավետության

	վերաբերյալ հարցման հետազոտությունների փաթեթ
44. 1.	ԵՄԽՀ «Ինֆորմատիկա և Կիրառական Մաթեմատիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները
44. 2.	ԵՄԽՀ «Իրավագիտություն» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:
44. 3.	ԵՄԽՀ «Մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:
44. 4.	ԵՄԽՀ «Միջազգային տնտեսական հարաբերություններ» ՄԿԾ-ի ուսումնառության արդյունքներն ու համապատասխան գնահատման մեթոդները:
45.	ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման), փոխադրման եվ վերականգնման կարգը
46.	ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով ուսանողների հեռացման (ազատման), փոխադրման եվ վերականգնման կարգը
47.	ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով սովորողների ակադեմիական շարժունության կարգը
48.	ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ակադեմիական շարժունության կարգը
49.	ԵՄԽՀ մագիստրոսի կրթական ծրագրով սովորողների ընդունելության կարգը
50.	ԵՄԽՀ ՄԿԾ-ների որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը (նախագիծ)
51.	ԵՄԽՀ բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների ընդունելության կարգ
52.	ԵՄԽՀ կառավարման խորհրդի նիստերի արձանագրություններ
53.	ԵՄԽՀ գիտ. խորհրդի նիստերի արձանագրություններ
54.	Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրս բերման նպատակով ֆոկուս խմբի վերլուծություն
55.	Բուհի գնահատման սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ պրեզենտացիայի հետադարձ կապի վերլուծություն
56.	Որակի ապահովման թեմայով ուսանողների հետ սեմինար - հանդիպման արձանագրություն
57.	ԵՄԽՀ ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ անցկացնելու ռեկտորի հրամանը
58.	ԵՄԽՀ ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներ անցկացնելու ժամանակացույցը

59.	ԵՄԽՀ ռեկտորի զեկույցը EURASHE համաժողովի ժամանակ
60.	ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կանոնակարգը
61.	ԵՄԽՀ-ում աշխատանքային պայմանագրերի ձևանմուշներ
62.	ԵՄԽՀ հիմնական և համատեղությամբ դասավանդողների կազմը
63.	ԵՄԽՀ դասախոսի գնահատման վարկանիշային թերթիկ
64.	Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների
65.	ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի, դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչների օտար լեզվի լրացուցիչ դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր
66.	ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի և դասախոսական կազմի համար որակի ապահովման թեմաներով վերապատրաստումների և դասընթացների վերաբերյալ փաստաթղթեր
67.	ԵՄԽՀ հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը
68.	ԵՄԽՀ համատեղությամբ աշխատող դասավանդողների ցանկը
69.	ԵՄԽՀ վարչական աշխատակազմի ցանկը
70.	ԵՄԽՀ ուսումնաօժանդակ աշխատակազմի ցանկը
71.	«Մովսես Խորենացի» գիտական ամսագրի օրինակներ
72.	Տիրի կազմակերպության հետ համագործակցության հիման վրա մշակված առարկայական ծրագրեր
73.	ԵՄԽՀ-ի և ՀՀ Ազգային գրադարանի միջև կնքված պայմանագիրը
74.	ԵՄԽՀ-ի և Ավ. Իսահակյանի անվան գրադարանի միջև կնքված պայմանագիրը
75.	ԵՄԽՀ-ի և ՀՊՃՀ-ի միջև կնքված պայմանագիր
76.	Համալսարանի ընդհանուր նկարագրի դուրս բերման նպատակով ֆոկուս խմբի վերլուծություն
77.	ԵՄԽՀ բյուջեի բաշխումը ըստ մուտքերի և ծախսերի (2010-2014թթ)
78.	ԵՄԽՀ բյուջեի բաշխումը ըստ ռազմավարական ուղղությունների
79.	Դրամաշնորհի ծրագրով ԵՄԽՀ-ի ստացած ֆինանսների բաշխումը
80.	ԵՄԽՀ 2015թ բյուջեի նախահաշիվ
81.	ԵՄԽՀ տեղեկատվության և փաստաշրջանառության կառավարման կանոնակարգը
82.	ԵՄԽՀ ուսման վարձերի զեղչման կարգը
83.	ԵՄԽՀ վերահսկողական խմբի կանոնակարգ

84.	ԵՄԽՀ կոնֆերանսի վերաբերյալ փաստաթղթեր
85.	ԵՄԽՀ պրակտիկայի օրագրի ձևանմուշ
86.	ԵՄԽՀ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվություններ (2011-14թթ)
87.	ԵՄԽՀ տպագրություններ մամուլում
88.	ԵՄԽՀ պատրաստած տեղեկատվական տեսաֆիլմեր
89.	ԵՄԽՀ բուկլետներ
90.	ԵՄԽՀ կնքած պայմանագիրը Մոսկվայի ֆինանսա-արդյունաբերական համալսարանի հետ
91.	ԵՄԽՀ կնքած փոխըմբռնման հուշագիրը Մեծ Բրիտանիայի Տիրի (TIRI) կազմակերպության հետ
92.	TIRI կազմակերպության կողմից անցկացված սեմինարների մասնակիցների ցանկ
93.	ԵՄԽՀ գիտ. խորհրդի նիստի N 05/410 արձանագրությունը
94.	ԵՄԽՀ ՈԱԿ անձնակազմի Իտալիայի Սապիենզա համալսարան գործուղման փաթեթ
95.	ԵՄԽՀ-ի և տեղական կազմակերպությունների միջև կնքած պայմանագրերի փաթեթը
96.	ԵՄԽՀ որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը
97.	ԵՄԽՀ որակի ներքին ապահովման սխեմատիկ կառուցվածքը:
98.	ԵՄԽՀ ռեկտորի հրամանը ՈԱԿ-ի ստեղծման վերաբերյալ
99.	ՈԱԿ անձնակազմի աշխատանքային պայմանագրեր
100.	ԿԲ դրամաշնորհի շրջանակներում հանձնաժողովների ստեղծման համար ՈԱԿ ղեկավարի զեկուցագիրը և ԵՄԽՀ ռեկտորի հրամանը
101.	ԵՄԽՀ ՈԱԿ մասնակցած կոնֆերանսներ և վերապատրաստումներ
102.	ԵՄԽՀ ՈԱԿ անցկացրած վերապատրաստումներ և սեմինարներ
103.	ՈԱԿ խմբային քննարկումների արձանագրություն
104.	ՈԱԿ վերլուծություն շրջանավարտների օնլայն հարցման
105.	ԵՄԽՀ ուս, պլանների վերաբերյալ արտաքին մասնագետների կարծիքներ
106.	ՈԱԿ պրեզենտացիաներ
107.	ԵՄԽՀ և Էջմիածնի Գ. Լուսավորիչ համալսարանի ՈԱԿ-ների և ուսանողների հանդիպման փաթեթ
108.	ՈԱԿ մշակած հարցաթերթիկներ շահակիցների հետադարձ կապի համար

109.	ՈԱԿ մշակած ուղեցույց-բուկլետ
110.	ԵՄԽՀ պրոֆեսորադասախոսական կազմի ուղեցույց
111.	ԵՄԽՀ կուրսերի ավագների կանոնադրություն
112.	ԵՄԽՀ ներքին կարգապահական կանոններ
113.	ԵՄԽՀ և Երևանի Գյուղատնտեսական համալսարանի միջև կնքված պայմանագիր
114.	ԵՄԽՀ վերջին 5 տարիների ընթացքում պետական ավարտական քննությունների ուսանողների գնահատականների մակարդակով առաջադիմության վիճակագրություններ:
115.	Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր (նախագիծ)
116.	ԵՄԽՀ որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականություն և ընթացակարգեր (նախագիծ)
3ա.	«Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության (որակավորման) նկարագիր
3բ.	«Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտության (որակավորման) նկարագիր
3գ.	«Իրավագիտություն» մասնագիտության (որակավորման) նկարագիր